




ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Աստուծոյ ՀԱՄԱՐ
"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Rédaction : MM. les pasteurs Ghazarossian, Boudakian, Marseille
M. Missirian, Issy-Paris.

Administration : 7, Rue Papère — MARSEILLE

ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻ

ՀՐՈՎԱՐՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

«Մենք կը յարգենք եկեղեցական իշխանութիւնները: Պատկառանքով կ'ընդունինք հայրենի աւանդութիւնները նահատակաց արիւնովը սրբագործուած: Կ'ընդունինք Ընդհանրական եկեղեցւոյ հաւատոյ դաւանանքը: Կը սիրենք Հայ ազգը բոլոր սրտով ու բոլոր հոգիով: Սակայն ինչ՞ի մ. ՀԱՅԱՌԻԿ ԹԻԻՆԸ ամէն բանէ աւելի թանկագին կը համարենք եւ թոյլ պիտի չտանք որ ոեւէ իշխանութիւն կամ աւանդութիւն կամ հրաման խլէ մեր ձեռքէն Քրիստոսի Աւետարանը, կամ արգելք ըլլայ մեզի եւ մեր զաւակներուն, երբ կուգանք առանց միջնորդի եւ առանց բարեխօսի մեր հոգեւոր պաշտամունքը մատուցանել մեր Փրկիչ Աստուծոյն, մեր խղճին համեմատ»:

ԲԱՌԱՍՏՈՒՆԸ

որ կազմեցին «Հայաստանեայց աւետարանական եկեղեցի»
1 Յուլիս 1846, Բերա, Պոլիս
եւ անոնց յաջորդող սերունդը կը հաստատէ այսօր:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ Ի ՖՐԱՆՍԱ



Ա. ՄԱՐՍԷՅԼ

Ֆրանսայի
մէջ առաջին
Աւետ. գործը
պաշտօնա-
կան կերպով
սկսած է այս
քաղաքին
մէջ 1924,
Մարտ 23-ի
Կիրակի օրը
քարոզիչ Ժ.
Կ. Պարսում-
եանի ձեռքով

Հօթէլ տը Նանթ, բրոֆ. Մուսեղեանի սենեակին
մէջ, ուր արդէն երկու կիրակի է ի վեր բրոֆէսո-
րը անպաշտօն ժողովներ ըրած էր: Առաջին ժո-
ղովին ներկայ էին 27 հոգի: Երկու շաբաթ յե-
տոյ Պարսումեան հղթայր գտած էր Փրկութեան
Բանակի սրահը, ուր կը հաւաքուէին Աւետարա-
նի լուրը սիրող հայերը:

Յունիս 22-ին Պարսումեան հղթայր բաժնուե-
լով Մարսէյլէն՝ յաջորդ ձգած էր Յ. Ն. Ղազա-
րոսեանը որպէս քարոզիչ: Վեց շաբաթ վերջը
Կիր. քարոզները սկսան Բիւ Տըլիլի Ֆրանսա-
կան եկեղեցիին մէջ միայն երկու ամսուան հա-
մար, բայց Տէրը այնպէս կարգադրեց որ այդ
եկեղեցին այսօր բոլորովին մեր ձեռքը կը գտ-
նուի: Ներկայ հովիւն է, Վեր. Յ. Ն. Ղազարոսեան,
7, Rue Papère, Marseille.

Բ. Ս. ԼՈՒ. — Հոս կ'սկսի աղօթածոցով մը 1926



Մայիս 17-ին
Եշ. օրը, Կա-
րապետ Աղա
Պօյաճեանի
տանը մէջ:
1933-ին քարո-
զիչ Վ. Սա-
հակեան գոր-
ծը շարունա-
կեց: 1934-ին
եկեղեցին
շինուեցաւ եւ
կանոնաւորա-
պէս սկսաւ
Աւետ. գործը:

Առժամեայ հովիւն է Աւետարանիչ Կիւլշան Պա-
տաքեան, 22, Rue Jean Roque, Marseille.

Գ. Ս. ԺԻԻԼԻՆ — Առաջին աղօթածոցովը սկը-
սած է Տիկին Արուսեակ Աղամեանի տան մէջ
(1926 Մայիսին) Տիկին Աննա Ճիգմէճեանի կողմէ:



Պաշտօնական աղօթածոցովներ սկսան 6 ամիս
վերջը, Կիւլշան եղբ. Պատաքեանի ձեռքով: Եկե-
ղեցական կանոնաւոր պաշտամունքներ սկսան
1939 Մարտ 5-ին, եկեղեցւոյ նուիրումէն յետոյ:
Ներկայ հովիւն է Վեր. Զ. Բ. Պուտաքեան, Bld.
Joseph Arnaud, Bel Vue, La Rosière, Marseille
Դ. Ս. ԱՆԺՈՒԱՆ. — 1927-ի սկիզբները Աւետա-
րանիչ գրածախ Կիւլշան եղբ. Պատաքեան, Փե-
րուզ քոյր Վահանեանի խոհանոցին մէջ աղօթա-
ծոցով մը սկսաւ դրացի կանանց համար:



Տէրը գործը մեծցուց եւ եկեղեցի մը շինուե-
ցաւ երիցատունով, 1938-ին: Եկեղեցւոյ նուիրու-
մը տեղի ունեցաւ 1943, Յունիս 20-ին: Հովիւն է
Վեր. Մարկոս Վէրիլիան, Lotissement «Le Com-
mandeur», St. Antoine, Marseille.

Ե. ԿԱՐՏԱՆ. — 1924-ի Օգոստոսին, Կարտանա-
բնակ Տիկին Աննա Չալմեան, (ներկայիս Ամե-
րիկա) կը հրաւիրէ քարոզիչ Վեր. Յ. Ն. Ղազա-

Արեւիկայի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելուն
ընդ, ու Գրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆՔԵՐ



Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստումներէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 3

«PANPERE» Revue mens. religieuse des Eglises Evangéliques Arméniennes de France

22^e Année.— Avril - Juillet 1946, No 4-7

ԻՐ. ՏԱՐԻ — ԱՊՐԻԼ-ՅՈՒԼԻՍ 1946 — ԹԻԻ 4-7

Տարեկան բաժանորդագրութիւն.— Ֆրանսա՝ 50 ֆր.

Արտասահման՝ մէկ Ամերիկեան Զոլար

ԱՌՀԱՒԱԿԱՆ ԶԱՀԸ

Գրեց՝ ՍԱՄՈՒԷԼ Պ.

Դո՛ւք, երէկի մարտիրոսաց
Ոսկորներէն վերընծիւղած, անտառացած,
մէկտեղուած
Հաւատակից եղբայրներ,
Տեսիլքի տէր
Մեր հայրերուն ազատութեան պայքարն ահա՛,
Հարիւրերորդ ճակատին վրայ
Աշտարակից յաղթանակի էր դըրօշը փառաւոր:
Ճշմարտութեան ու կեղծիքի ոգորումն էր
ահաւո՛ր...
Ու ես ահա՛,
Հարիւրամեայ
Ռազմադաշտէն կու գամ ձեզի,
Ռազմադաշտէն՝ որ սընոտի աւանդութեանց
յարդակոյտը կը հրկիզի՛...
Ռազմադաշտէն՝
Ուր մեր հայրերն, Աստուծոյ յաղթ ձեռքերովն
սպառազէն,
Խորտակեցին
Մերունըներու խիղճը կապտող բռնութեան գորշ
ամրոցին,
Խաւարակուտ պարիսպ ու գահ
Ու չղթայ.
Ռազմադաշտէն՝ ուր յաղթաբերձ, աներկեւան
որպէս ռազմիկ,
Մեր պապերը մէկկիկ-մէկկիկ,
Այդ սրբազան դուպարին մէջ նետեցին

Ամբողջութիւնն իրենց ինչքին եւ ուժերուն եւ
անձին:
Եւ այս վրեժ, հսկայական զոհաբերումն ի խնդիր
Ձերբազատման հոգեւոր այն արժէքներուն
մեծադիր՝
Որոնց համար
Դարուց ի դար,
Նախնիքը մեր՝ ընտրանիէն մինչեւ անգարդ
գիւղացին,
Իրենց կեանքը սիրայօժար խժըժանքի մատնեցին,
Մեռան անոնք՝ որպէսզի
Աղջամուղջին ընդերքներէն ազատազրոյ խաղին
լոյսը հասնի մեզի.
Որպէս զի հայ ամէն անհատ՝
Էջմիածնոյ կամ Հոռվմի կըղերին պէս
անբռնադատ,
Իր դերակայ
Խցճի, խօսքի Աստուածատուր ազատութեանն
տիրանայ.
Որպէսզի հայ ամէն հոգի՝
Լուսադարձութի եւ ուռճանայ յուրթի դանձովն
Աստուածաշունչ Ս. Գրքի.
Որպէսզի հայ ամէն մէկ միտք ու գըրիչ՝
Անհունութեան խորքը յուզող արծիւին պէս
երկնաթռիչ,
Ըլլայ ազատ, ըլլայ խիղախ եւ հըզօր

Ճախրանքին մէջ փառաւոր,
Ու նկրտի լոկ բարիին, գեղեցիկին, վրասմին
Հուսակունքը երկնային
Որպէս զի հայ ամէն կին՝
Ու կը կրկնեմ — հայ մարդուն պէս՝ ամէն հայ կին —
Հաւասարէ հաւասար,
Տիրանայ իր յաւէտ արդար
Իրաւունքին ու դիրքին,
Ու դառնայ մայր հայ հողեւոր սերունդներու՝
հայ փառքին .

Որպէս զի հայ ամէն օճախ՝
Խարխուլ հիւղէն մինչեւ փարթամ ապարանքը
ակնարախ,

Փոխակերպուի քրիստոսաշող տաճարի .
Որպէս զի ողջ ազնուազարմ որդիքը մեր քաջարի՝
Խաւարին դէմ՝ նախնեաց հանգոյն,
Բացուած ռազմին լըծեն իրենց բոլոր ուժերն
գերազոյն .

Եւ որպէս զի պարզ ու անձէս Եկեղեցին՝
Զոր մեր հայրերն ձգտարտութեան որպէս ամրոց
կանգնեցին,

Ազդիս Հայոց ու դրացի ցեղերու մէջ հեթանոս .
Դառնայ աղբիւր ուղիսինահոս
Անմահ կեանքի, բեղուն ուժի, խաղաղութեան
եւ լոյսի,

Որ կը բղխի բուն իսկ անձէն Յիսուսի:

Ու եւ այսօր՝
— Հոգիիս մէջ առհաւութեան անշիջելի հրայրքն
հրգօր —
Կու դամ ձեզի աւետելու հաւատակից եղբայրներ,
Մեր հայրերուն ազատաբեր
Արեամբ մեզի կըտակուած սուրբ ժառանգութեան
Եւ խորհուրդը, եւ փառքը մեծ, եւ արժէքներն
անսահման:

— Օ՛, բողոքի, ընդվըղումի ծառացումը այդ
պատմական օրերուն,
Ծառացումը ազատատենչ մեր պապերուն
Հոյակապ էր,
Եւ հոյակապ հաւատքի մեծ խարոյկին պէս
լուսարիւր՝

Զոր վառեցին անյիշատակ նախնի սուրբերն
արքեանի,

Մեր լերանց մէջ գեղանի .
Հոյակապ էր,
Եւ հոյակապ բողոքին պէս բազմաշարժար
Լուսաւորչին անվահեր՝

Զոր արքայէն մինչեւ բանւորն ջրաղացի
Կանչեց զղման եւ դարձի .

Հոյակապ էր,
Եւ հոյակապ տեսիլքին պէս այգարեր՝
Զոր ի խնդիր «ԿԵՆԱՅ ԲԱՆԻՆ»
Իր գերազոյն երկունքին մէջ մարտիրոսուող մեր
մեծ Սուրբին,

Աստուածակոյի հայ Գրին հետ՝
Ներշնչումին եւ հանճարին բացաւ ակունքն
արփաւէտ .

Հոյակապ էր
Արտաշատի բողոքագրին եւ ուխտին պէս աներեր,
Եւ հոյակապ ու մեծաքանչ
Աւարայրի նահատակաց պայքարին պէս
աննահանջ,

Երբ աղգ մ'ամբողջ յօժարեցաւ արտասուքի եւ
կըրակի մկրտութեան,
Կեանքի համար նաեւ մահուան...

Ու դուք ահա՛, հաւատակից եղբայրներ,
Մէկտեղուած էք բազմավաստակ ձեր հայրերուն
աւետարներ

Յաւէտ բեղուն եւ արցունքին եւ քրտինքին եւ արեան
Հունձքին դիմաց ոսկեման .

Ու դարձեալ,
Մէկտեղուած էք անոնց օրհնեալ
Յիշատակին շատարեւ
Եւ տեսիլքին եւ պայքարին եւ անկըչիո գործին
առջեւ՝

Կոթողելու տուրքը դոհար
Ձեր հիացման, ձեր սրտառուչ մեծարանքին
խանդավառ:

Եւ այս սակայն՝ մեր պապերուն յեղափոխիչ
պայքարին

Հանգրուանն է առաջին:
Ու ես այսօր,
Այդ սրբազան Ռազմիկներուն աստուածաշունչ
փողովն հրգօր,
Առաքուած եմ Յորեւեանի արեւնաչող այս
պահուն՝

Շեփորելու ամենուն
Մարտակոչի հրաւէր:
Հարկ է փութով, զի ռազմը սուրբ քրիստոսակիր
մեր հայրերուն անձնուէր,
Անոնց եւ մեր ծովածաւալ տեսիլքին
Աստուածացոյց սահմանները զըրաւած չէ
տակաւին:

Ամենուրէք,
Հորիզոնէ հորիզոն սեւեռաբիր դիտեցէ՛ք,
— Դե՛ռ որքա՛ն մեղք, որքա՛ն խաւար, որքա՛ն
չարիք,
Եւ բռնութիւն, եւ արհաւիրք, եւ կուրութիւն
եւ կարի՛ք...
Դեռ մինչեւ ե՞րբ դիչերն պիտի երկարի,
Եւ այդունի Աւետարանն բերդարդելուի թիպոց
ներքեւ վիթխարի:
Դեռ մինչեւ ե՞րբ շուքեր, ձեւեր եւ պատրանքը
ոսկեզօծուած կեղծիքին՝
Իչիեն խղճին, գիտակցութեան եւ կեանքին:
Դեռ մինչեւ ե՞րբ արդարութեան, խաղաղութեան
եւ սիրոյ

Արքայութիւնն Աստուծոյ՝
Յամառօրէն մերժելի
Մեր երկնքին տակ ծաւի:
Եւ հողեւոր արժէքներն այն որոնց ի սէր՝
Մահը կեանքէն նախընտրեցին անցեալի ողջ
սերունդներ,
Այսօր, ափսո՛ս, հայրենիքի սահմաններէն
յիմարութեամբ դառնաղէտ,
Դուրս չպրտեն կաւէ կտորած անօթներու պէս
անպէտ:

Ա՛րդ, ժամ է այժմ, հարկ է փութով հաւատակից
եղբայրներ,
Հարկ է փութով ու ձեզի հետ ամբողջական
ուժերը ձեր:
Ձեր հաւատքին, ձեր աղօթքին, ձեր հոգեյոյզ
մաղթանքին պէս սիրազեղ՝
Ձեր թանկարժէք ժամանակին եւ վաստակին հետ
չըբեղ՝
Հարկ է բերել միացեալ
Սրտի, մտքի եւ մարմինի անուշահոտ պատարազը
ձեր օրհնեալ:
Ամբողջական յաղթանակի ի խնդիր,
Մեր կենսախայտ աղջկանց պէս, մեր ջլապինդ
տղոց հետ մէկ անխրտիր՝
Մեկնելու են կանայքը մեր,
Եւ վարդերես մանուկներէն մինչեւ կըքած մեր
սիրելիքն աւհհեր:
Այս օրերուն, երբ Աստուծոյ եկեղեցին,
Յառած չքնաղ իր տեսիլքին եւ իր կոչման
երկնային,
Կենաց—մահու կլօ մղէ իր մարտը դժուար,
վիթխարի,

Լինել չեղոք, կամ ձեռնծալ՝ հաւասար է
ստրկութեան եւ հաւասար ոճիրի...

Ու ես կու գամ հրդեհել ձեզ մէկիկ—մէկիկ, ու
կանգնել ձեզ
Դարագլխու մեծաճաճանչ որպէս խաբոյկ
հըրակէզ:
Ու ես կու գամ փոթորկելու ամէն հողի,
Գիտակցութեամբ մ'որ հոգւոյս մէջ վերածուած է
ամենասուրբ հըրայրքի:
Ու ես ահա՛, Քորեփ լեռան Աստուածափառ
Մորենին եմ մեծափառ:
Ու ես ահա՛,
Աստուածակոչ մեր հայրերուն աւետահունչ ձայնն
եմ անմահ:
Ու կ'արտօրամ Յորելեանի անզուգական այս
պահուն,
Շեփորելու ամենուն
Մարտակոչի հըրաւէր:
Հարկ է փութալ, զի ռազմի սուրբ քրիստոսակիր
մեր հայրերուն անձնուէր՝
Այս օրերուն եղական,
Իր պատմութեան է՛ն բախտորոշ, է՛ն վճռական
Վայրկեա՛նն է որ կ'ողջունէ:

Ու ես այսօր,
Դարագարձի սա հոգեչունչ ժամերուն մէջ
հանդիսաւոր,
Եկայ ձեզի աւանդելու ձեր ջահակիր նախնիք—
ներուն՝ մեծախորհուրդ
Մարտնչումը, պաղատանքն ու վերջին կամքը,
յառաջապահ ժողովուրդ:
Ու ես ահա՛, հաւատակից եղբայրներ,
Կը մօտենամ իմ կարեւոր՝
Սակայն ջըղուտ, Հայու երկու
Ձեռքերովըս պիրկ եւ հուժկու,
Խաչին ոտքը ուխտի ծըռող կորովաբիր նոր
սերունդին
Փոխանցելու՝ յաւէտ անդին
Առհաւական ջահն այս վճսեմ.
Ձոր ստացայ ռազմադաշտի մեր պապերէն
հըրաղէմ:
Օ՛ն, սըլացէք պայքարի,
Ձի ռազմի օրն՝ օր է յաւէտ անմահութեան եւ
փառքի...

Երուսաղէմ, Փետր. 1946

Ե Ր Կ Ո Ւ Ն Ք Ե Ի Ծ Ն Ո Ւ Ն Դ

Գրեց՝ ՎԵՐ. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԱՆ

Ո՞վ չ'ուզեր ճանչնալ իր ծննդեան պատմութիւնը: Մեր Եկեղեցիին հարկւրամեակը առիթ կու տայ մեզի երախտագիտութեամբ ծոելու հարիւր տարի առաջ տեղի ունեցած կարեւոր իրողութիւններու վրայ, ժամանակին փոշիներէն դուրս քաշելու մեզի աշխարհի սիրելի անհատներուն փորձառութիւններն ու պայքարները (*):

ԺԶրդ դարու բարեկարգութիւնը խորապէս ցնցեց աշխարհը: Սակայն անկէ առաջ եւս միշտ գոյութիւն ունեցած էր ժողովուրդ մը որ աւելի կամ նուազ չափով ապրած է բարեկարգութեան հոգիով եւ ծառայած է պաշտօնական Եկեղեցիին սրխայններուն դէմ:

Անցնելով ամէնէն հին ժամանակներուն վրայէն, կը նկատենք որ 750 թուին, Հայաստանի մէջ երեւան կու գայ Պողոս անունով Հայ մը: Ան կը սկսի հոգեւոր շարժումի որ կը տեւէ մինչեւ Թ. դարը: Յետոյ կը տեղափոխուին եւ շարունակուելով Սմբատ անունով առաջնորդի մը ձեռքով, կը կոչուին Թոնդրակեցիներ:

Շատ կարեւոր է նկատել որ այս շարժումը օտար ներածում մը չէր, այլ հայկական ծագում ունի: Ան Հայոց սահմաններէն դուրս եւս կը ծաղկի եւ կը հասնի Եւրոպա: Այս քրիստոնեաները կարելի է կոչել Աւետարանականութեան հայրերը: Անոնք կը մերժէին արտաքին ձեւակերպութիւնները, պատկերներու եւ մասունքներու պաշտամունքը: Հայ Առ. Եկեղեցին անդթօրէն հալածեց եւ խտորէն պատժեց զանոնք: Հալածեալներուն մէջ կային կղերականներ եւ աշխարհականներ: Այրեր եւ կիներ կը յիշուին իրենց անուններով: Հատիվերոցի կը պատմէ թէ Սամուէլ Կաթողիկոս, կարմրած երկաթով կը խափանէր վեց վարդապետներու երեսները զանոնք իբր վտանգաւոր ցոյց տալու համար: Բազում հալածանքներէ յետոյ Լուսաւորչական Եկեղեցին խորհեցաւ թէ հարուածը սպառած էր: Ո՛չ բոլորովին: Թաթարական արշաւանքներն էին որ ցրուեցին զանոնք: Անոնց հեղե-

ղին առջեւ Թոնդրակեցիները իրենց պաշտպան իշխաններով չուեցին Ասորեստան եւ Պուլկարիա ուր փոքրմիջ քահանան շարունակեց շարժումը: Անոնք մտան եւ իրենց դադափարները տարածեցին մինչեւ հիւս. Իտալիա եւ միջին Եւրոպա ու Ֆրանսա՝ Ալպիժուաններու եւ Վալտենցուց մէջ: Անտարակոյս «Լիոնի Աղքատներուն» առաջնորդը Բիէռ Վալտո իր լոյսը կը պարտի այս հայ դադափականներուն եւ անոնց յաջորդներուն:

Ուրեմն ահա հայ քրիստոնեաներ, որոնք Լուստերի բարեկարգութենէն առաջ մշակած են ինքնատիպ բարեպաշտութիւն մը իրենց հայրենիքին մէջ եւ հալածանքի թափով քշուած են օտար երկիրներ:

Շատ հետաքրքրական պիտի ըլլար, եթէ մեր հարկւրամեակին առթիւ հմուտ պատմագետ մը ճշտէր Թոնդրակեցիներու պատմական դերը ԺԶ. դարու բարեկարգութեան նախապատրաստութեան մէջ: Հայ Աւետարանականութեան համար շատ կարեւոր պիտի ըլլային ձեռք բերուած արդիւնքները:

ԺԹ. դարը, Հայերուս բերաւ կարգ մը փոփոխութիւններ եւ ի մէջ այլոց գրական եւ հոգեւոր արթնութիւն մը:

1800ին Ռուսիոյ մէջ կը հիմնուէր Սբ. Գրոց ընկերութիւն մը: 1804ին Անգլիոյ մէջ Բրիտանական եւ Օտարաց Սբ. Գրոց ընկ.: Այս ընկերութիւնները կը հետաքրքրուին Հայերով: Ռուսերը 5000 օրինակ գրաբար Սբ. Գիրքեր կը տպեն 1815ին եւ երկու տարի վերջ Անգլիացիք 2000 Նոր Կրտակարան. Ռուսերը դարձեալ 2000 Ն. Կ.: Այս գիրքերը մեծ ընդունելութիւն գտան Հայոց մէջ: Իրաւ մեր գրական Ոսկեդարէն ի վեր Ս. Սահակ եւ Սբ. Մեսրոպ մեզի տուած էին Աստուածաշունչը, սակայն հաղուադիւտ եւ սուղ էին Սբ. Գրքերը եւ ժողովուրդը կարօտ էր Աստուծոյ խօսքին: Ընկերութիւնները Մխիթարեան Հայրերէն ալ Ն. Կ. ներ կը գնէին ծախելու կամ բաժնելու համար:

Սակայն ժողովուրդը լաւ չէր հասկնար գրարարը, իսկ աշխարհաբարը չունէր արդի կառարելութիւնը: Կային թրքախօս Հայերն ալ: Ուստի տպուեցան նաեւ աշխարհաբար եւ հայաստա թրքերէն Նոր Կտակարաններ, որոնք հակառակ իրենց թերութիւններուն գոհացուցին իրական պահանջ մը: 1816ին հիմնուեցաւ նաեւ Ամերիկեան ընկե-

(*) Գործածուած աղբիւրներ: — Ծագում եւ Ընթացք Աւետարանականութեան ի Հայրս Վեր. Ստեփան Խ. Իւրիմեան:

Le Christianisme en Turquie au 19^e siècle.
Rev. H. G. O. Dwight. — (Paris, Grassart - 1855)

րուէթին մը որ տպեց զբարբար Աստուածաշունչ մը առանց անկանոն դրժներու: Աստուծոյ խօսքին այս արձակումը ուրախութեամբ ողջունուեցաւ բարեպաշտ տարրին եւ մտաւորականներուն կողմէ: Հոն ուր Աստուծոյ խօսքը կը մտնէ՝ կեանքի սերմեր եւ լոյս կը մտնեն: Սբ. Գրոց տարածումը իր դերը խաղաց մեր Եկեղեցւոյ պատմութեան մէջ:

Ամերիկեան Պօրտ ընկերութիւնը իր առաջին առաքելութիւնը 1819ին ղրկեց Ասորիներուն: Դէպի Չմիւսիս եւ Երուսաղէմ իրենց ճամբորդութեանց ընթացքին յարաբերութեան մէջ մտան Հայերուն հետ եւ այնքան դնահատեցին անոնց վարքն ու բարքը, կրօնասիրութիւնն ու նկարագիրը, որ մեծ դժուկանքներով յիշեցին զանոնք իրենց տեղեկագրին մէջ, 1823ին Վեր. Կուտէլ Պէյրութ հասաւ միայն Հայերու համար: Ան յարաբերութեան մտաւ Երուսաղէմի Ուխտէն Դիոնիսիոս Եպ.ի եւ Յակոբ ու Գրիգոր վարդապետներու հետ: Հոգեւոր կրօնաւորներ, որոնք լեզուի ուսուցչութիւն եւ թարգմանչութիւն կ'ընէին Միսիոնարներու:

1825ին Մր. Քինկ անունով Միսիոնար մը իր կաթողիկ բարեկամներուն կ'ուղղէր հրաժեշտի նամակ մը, ուր կը պարզէր իր հոգեւոր եւ Սբ. գրական պատճառները թէ ինչո՞ւ չէր կրնար հօտմէական ըլլալ: Դիոնիսիոս թարգմանեց նամակը: Ան եւ իր ընկերները, շատ հեղ զբաժ էին Պոլսոյ իրենց բարեկամներուն Եկեղեցւոյ հոգեւոր վիճակին մասին եւ շատ սրտեղ պատրաստած էին: Ուստի այս նամակն ալ զրկուեցաւ Պոլիս: Թուղթը խոր տպաւորութիւն ձգեց ընթերցողներուն վրայ: Պատրիարքին նախագահութեամբ հաւաքոյթ մը տեղի կ'ունենայ, որուն ընթացքին նամակը կրկին կը քննուի, Սբ. Գրոց մէջբերումները կը կարդացուին եւ ամէն ոք կ'ընդունի թէ Հայ Եկեղեցին եւս բարեկարգութեան պէտք ունի:

Այս ժողովէն ծնաւ փէշտիմալեանի Ակադեմիային գաղափարը, զպրոց մը որ պիտի ծառայէր կղերը կրթելու: Սակայն որո՞ւ կը յանձնուէր այսքան կարեւոր գործ մը:

Աչքառու եւ արժէքաւոր անձ մ'էր Գրիգոր պատուելի (2) փէշտիմալեան: Հզօր իմացականութեան եւ յիշողութեան տէր էր: Հայկաբան, պատմադէտ եւ ծանօթ՝ աստուածաբանական հարցերու: Լաւ գիտէր Սբ. Գիրքը: Նեղացած տիրող նախապաշարումներէն եւ յուսախար՝ կղերականներու ընդհանուր վարքէն, պահ մը խորհեցաւ որ կրօնքը խաբկանք մ'է, սակայն հետզհետէ հա-

մոզուեցաւ որ Սբ. Գիրքը Աստուծոյ խօսքն է ու հաւատքի միակ առաջնորդը: Ան իր աշակերտները առաջնորդեց խոր եւ քննական ուսումնասիրութեանց: Լուսերի ժամանակակից Երսամոսի կը նմանէր փէշտիմալեան: Սակայն եթէ պահ մը ունեցաւ անոր վարանումները, Երսամոսէ աւելի հեռու գնաց եւ ժամանակին քայլերեց եւ պաշտպանեց իր աշակերտներուն յառաջացեալ տեսակէտները: Ու մենք շատ բան կը պարտինք անոր քանի որ իր աշակերտներէն ոմանք յետոյ եղան Աւետ. չարժման առաջնորդները:

1831ին Մր. Կուտէլ կը հասնի Պոլիս, որուն կը հետեւի Մր. Տուայթ: Անոնք յարաբերութեան կը մտնեն Մատթէոս վրդ. Չուհաճեանի հետ եւ կը տեղեկանան հայ բարքերու, եկեղեցական դասանութեանց ու սովորութիւններու վրայ: Կը նկատեն նաեւ Եկեղեցւոյ սխալներէն եւ հակա Սուրբ-գրային վաղապետութիւններէն ոմանք: Ժողովրդական դարձի մը անպատեհութիւնները ծանօթ են մեզի, եւ Հայ Եկեղեցին խուսափած չէր անոնցմէ: Հեթանոս ազդեցութիւններէն զատ, հայ բարեպաշտութեան օտար տարրեր եւս հետզհետէ ներածուած են, լատին կամ յոյն եկեղեցիէն:

1833ին Ժէզուիթները լուր տարածեցին թէ «օտարականներ» եկած էին որոնք կրթական նպատակներու քողին տակ անհաւատութիւն պիտի տարածեն Հայոց մէջ: Փէշտիմալեանի աշակերտներէն Յովհաննէս Տէր Սահակեան, հոգեւոր ընդունակութիւններով օժտուած երիտասարդ մը, կ'երթայ Միսիոնարները տեսնելու: Կը մտերմանան: Տէր Սահակեան սիրտը կը բանայ եւ կը նորոգուի ճշմարիտ դարձով մը: Յետոյ տնօրէն կը կարգուի Միսիոնարներու Բերայի Վէջ հաստատած բարձր. վարժարանի:

Օրուան Ստեփան Պատրիարքը համակիր էր բարեկարգութեան: Ան Միսիոնարները իբր պատուոյ հիւր կը հրաւիրէ քահանաներու օծման հանդէսին: Կապ մը կը ստեղծուի անոնց եւ նորընծաներէն Տէր Գէորգ Արծրունիի միջեւ, որ քիչ յետոյ պիտի քարոզէր իր ստացած նոր լոյսերը: Իսկ Միսիոնարները միայն 1836ին կը սկսին հրապարակային քարոզութեան:

Ամիրանները կը փորձեն ձախողեցնել Բերայի դպրոցը, անյաջող կ'ելլեն: Ի վերջոյ Միկրտիչ ձէգայիրեան ամիրա, Խապուղի մէջ կը հաստատէ նոր դպրոց մը, Տէր Սահակեանի տնօրէնութեամբ, եւ ուր կը դասախօսէ Տէր Գէորգ: Աշակերտաց թիւը որ 40 էր Բերա, կը բարձրանայ 600ի: Ամիրանները կը նախանձին եւ դիմելով բիւր մեքենայութիւններու կը նեղացնեն զիւրազգած ամիրան,

(2) Այն ատեն պատուելի կը կոչուէին Ասագ ուսուցիչներ եւ կարգ մը մտաւորականներ:

որ կը հրաժարի խնամակալութենէ: Աշակերտները կը ցրուին, դպրոցը կ'իյնայ անշուք՝ վիճակի մը մէջ ու Տէր Սահակեան արձակուելով կը մտնէ Ամերիկեան հրատարակութեանց գործին մէջ:

1837ին Նիկոմիդիոյ մէջ կար խումբ մը որ լաւ ըմբռնած էր ձրի շնորհքով եղած փրկութիւնը: Արդարեւ երկու քահանաներ՝ Եղնակեան Տէր Վերթանէս եւ Տէր Յարութիւն Պաղտասարեան, արթուն եւ համարձակասօս հովիւներ, շարունակ կը քարոզէին Կենդանի Աւետարան մը: Պատրիարքը զանոնք Վերին Վոսփոր հրաւիրեց, ուր պաշտօնավարեցին իրենց լոյսը տարածելով շատ չըջանակներու մէջ:

Բարեկարգութեան կողմնակիցները կը կազմեն Բարեպաշտական Միաբանութիւնը: Անոնք կը հաւաքուին, կ'աղօթեն եւ կը խորհին իրենց հոգեւոր փորձառութիւնները տարածելու միջոցներուն վրայ: Կը սկսին 12 անդամով, սակայն շուտով կը բազմանան: Մնայուն քարտուղար մը լայն թղթակցութիւն մը կը վարէ գաւառին հետ: Կը հիմնեն հակալքօլական ընկերութիւն մը: Ահա խմբակը որ ի վերջոյ պիտի կազմէր Հայ Աւետ. Եկեղեցիին կորիզը:

Ամիրաները, կրթական գործը վիժեցնելէ յետոյ, կ'որոշեն նաեւ խեղդել հոգեւոր գործը: Ուստի հեղահամբոյր Ստեփան Պատ.ի ծերութիւնը պատրուակելով, անոր օղնական կը կարգեն Յակոբոս Եպ.ը: Պատրիարքը չէզոքացուած էր, Մկրտիչ ամիրա, արդէն քաջուած էր գործէ: Ամէն ինչ պատրաստ էր հալածանքը սկսելու:

Պատրիարքութիւնը Պոլսոյ մէջ հիմնուեցաւ 1451ին Սուլթան Մուհամէտ Բ.ի օրով: Պատրիարքը Եպիսկոպոս մ'է, քաղաքական որոշ իրաւասութիւններով եւ պատասխանատու է պետութեան իր ազդին վարքին համար: Ան իշխանութիւն ունէր հալածելու եւ նոյն իսկ սպաննել տալու իր վտանգաւոր համարած անձերը: 1828ին տասը հազար պապական Հայեր աքսորուեցան մեծ խստութեամբ: Նոյն հալածանքները կը սկսէին բարեկարգութեան ցանկացողներուն:

Իբր և քայլ ձերբակալուեցան Տէր Սահակեան եւ Պօղոս Ֆիղիքա Պատուելի: Չորս օր առանց հազորդակցութեան բանտարկուած մնացին, մինչ ձեռք կը բերուէր իրենց աքսորի հրամանը: Ոճիրնի՞ն: Որովհետեւ անոնք եկեղեցւոյ հեղինակութենէն աւելի բարձր սեպած էին Աստուծոյ խօսքը: Տէր Սահակեան բանտին պատուհանէն, իր եղբոր կը պատուիրէ հեռացնել իր բնակարանը

գտնուած բարեպաշտական միաբանութեան թուղթերը: Եղբայրը կը յաջողի վերջին լուպէին: Ապա կ'աքսորուին Կեսարիա: Ձիով պիտի ճամբորդէին ձմեռ ատեն: Ֆիղիքա շուտով կը հիւանդանայ, սակայն կը ստիպեն շարունակել: Նիկոմիդիա եւ այլուր շատ սէր ցոյց կը տրուի աքսորականներուն: Իսկ թուրք պահապանը, պարզեանի շահելու համար, իր կողմանէ կը չարչարէ դժբախտները, անոնց ոտքերը ձիուն տակ կապելով, եւ վիզերնուն կախելով ծանր քար մը: Հարկ եղաւ 2000 դրշ. վճարել անկաշկանդ ճամբորդելու համար:

Պոլսոյ մէջ, արգելուած էր կարգաւ Միսիոնարական հրատարակութիւնները: Խասգիւղի Տէր Գէորգը կը բանտարկուէր եւ իր միջնորդ բարեկամները ձեռնուռնայն կը վերադառնան Պատրիարքարանէն: Երկու վարդապետ, մեկուսացած կ'աքսորուէին ուրիշներու հետ: Քանի որ որ եւ է դատարան չկար, երբեմն խնդրոյն բոլորովին օտար անձեր իսկ զոհ կ'ըլլային հալածանքի, վրէժխնդրական ցուցմունքներու հետեւանքով:

Տր. Համլինի հայերէնի ուսուցիչը Մեսրոպ Թաղիաթեանց, յանկարծ կը բռնուի եւ կ'որոշեն զայն Միպերիա աքսորել ուսական դեսպանին միջոցաւ: Համլինի դիմումները անօգուտ կը մընան ինչու որ վճիռը արդէն տրուած եւ խեղճը Տրապիզոնի շոգենաւը մօտեցած էր: Հոն էր որ օգնութիւնը պիտի հասնէր անակնկալ կերպով: Մինչ աքսորականը տրտում նստած էր ճամբորդներուն միջեւ, Ամերիկացի Միսիոնար մը որ զայն տեսած էր Տր. Համլինի տունը, կը ճանչնայ զայն եւ կը հարցնէ ո՞ւր երթալն ու տխրութեան պատճառը: Խեղճը կը պատմէ գլխին եկածը: Ամերիկացին ցաւելով, ինչերը կը պատմէ նաւապետին որ Անգլիացի մ'էր: Այս վերջինը զայրանալով անմեղի մը պարտադրուած այս պատիժին, կ'առաջադէ զայն ազատել: Մովը կը նետուին Հայուն անցադիրն ու հագուստները: Մեսրոպ կ'ածիլէ պէխն ու մօրուքը եւ կը ծպտուի իբր Եւրոպացի: Տրապիզոն հասնելուն Մեսրոպ, Ամերիկացիին անցադրով ցամաք կ'ելլէ եւ ներկայանալով անգլիական հիւպատոսին, կը պատմէ ինչերը: Հիւպատոսը իր օգնութիւնը Մեսրոպի ընծայելէ զատ, անմիջապէս նաւ կը փութայ՝ Ամերիկացին ցամաք հանելու: Ի վերջոյ, Մեսրոպ կ'ապաստանի Կալիֆա:

Ստեփան Պատրիարք չկարողանալով հանդուրժել հալածեալ ոգիին եւ թերեւս իր անձին համար եւս վախճալով՝ կը հրաժարէր: Յակոբոս Եպ. ա-

զատ էր ընելու ամէն բան: Հնար չէ մէկ քանի տողով ճշգրիտ պատկերը գծել այդ հալածանքին: Թունաւոր միջոցաւ մը կը տիրէր Պոլիս եւ գաւառները: Կասկածի տակ էին առ հասարակ մաքուր հայերէն (աշխարհաբար) խօսողներն ու Աւետարան գործածողները: Մնամէջ ամբաստանութիւններ, ծիծաղելի պատմութեանքներ, արդելափակում իբր խելագար, աքսոր, բանադրանք հասարակ բաներ էին:

Հալածանքին Ա. Թափը կտրեցաւ կարգ մը ծանր դէպքերու առջեւ: Սուլթանը յանկարծ մէկ շրջանակին հոգիները: Ան պիտի ըլլար Պոլսոյ քանի հազար զօրք պահանջեց Պատրիարքներէն, պատերազմը շարունակելու համար Եգիպտոսի փոխարքային Մէհմէտ Ալի փաշային դէմ: Պահանջքը թէեւ աննախընթաց՝ կատարուեցաւ: Արդէն թուրք բանակը պարտուեցաւ եւ նաւատորմիդը յանձնուեցաւ Եգիպտացոյց: Յուլիս 1, 1836ին Սուլթանը կը մեռնէր, դեռ ձախող լուրերը չը հասած:

Ապա պատահեցաւ Բերայի մեծ հրդեհը որ մէկ քանի հազար տուն լափեց, մարդկային զոհեր ալ խլելով:

Ամիրաներու ժողովը գումարուեցաւ վերաքննելու տարադիրներու հարցը: Բուռն վիճարանութիւններէ յետոյ կ'որոշուի շատերը ետ կանչել: Ո՛չ Տէր Սահակեանը որ՝ առաջնորդ կը նկատուէր: Վերադարձողները գէշ աղէկ կանոնաւորեցին իրենց դիրքերը, ու տառապանքով զօրացած՝ լա՛ւ եւս կը վկայէին:

1840ին, Յունվարի Ա. Բչ. օրը կը յատկացուէր գոհարանական աղօթքիս ծոմապահութեան: Աղաչանք որ վերնան արգելքները, որ Սբ. Հոգին զօրացնէ գործիչներն ու եղբայրները եւ օրհնէ Հայ Ազգն ու Եկեղեցին իր կղերով:

Նոր Գահակալը, Կիւլհանէի հրապարակին վերայ նոր օրէնքներ կը հրատարակէր ի նպաստ իր հպատակներուն, երաշխաւորելով նաեւ խղճի ազատութիւնը: Այս օրէնքը զգալապէս կը կրճատէր նաեւ Ամիրաներու իրաւասութիւնները:

Մայիս 24, 1840ին, վերջին աքսորականը, Տէր Սահակեան տիրացաւ իր ազատութեան: Պատրիարքը, Բ. Դրան մօտ զայն ամբաստանած էր իբր «կախարդ եւ վտանգաւոր մարդ»: Հարկ եղաւ դործածել ամէն կերպ միջոցներ, անողորմ Եպիսկոպոսին ձեռքէն ազատելու իր որսը: Իր վերադարձը մեծ ուրախութեամբ ողջունուեցաւ իր բարեկամներէն: Յակոբոս Պատ. իր ժողովրդականու-

թիւնը կորոնցուցած եւ անկարող՝ դիրքը պահելու հրաժարեցաւ, եւ իր տեղ, վերընտրուեցաւ Ստեփան Պատրիարք:

Հոգեւոր քահանաներ կը քարոզէին եռանդով: Բարեպաշտ երիտասարդ մը, Աբիսողոմ Իւթիճեան որ Պօղոսի նման «անարատ էր» ըստ իր եկեղեցւոյն օրէնքներուն, որ հնազանդ՝ այրած էր իր նոր դրքերը, կը ներկայանայ Տէր Վրթանէսի եւ կը խոստովանի: Փոխան իր ակնկալած ապաշխարանքի գործերուն, քահանան անոր աչքերը կ'ուղղէ Աստուծոյ Դառին, որուն արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ: Երիտասարդը իր խաղաղութիւնը կը գտնէ Քրիստոսի մէջ: Իր տան մէջ կու տայ յըստակ վկայութիւն մը եւ ի վերջոյ կը շահի իր շրջանակին հոգիները: Ան պիտի ըլլար Պոլսոյ Հայ Աւետ. Եկեղեցւոյ Ա. հովիւը:

Յառաջացման շրջան մը կը բացուէր: Մր. Համլին Ռապէլ Քօլէմի օրրանը եղող Պէպէքի վարժարանը կը հիմնէր: Գործը կը հաստատուէր Նիկոմիդիոյ մէջ: Խեղճ թիթեղնադործ մը նոր գաղափարները կը հասցնէր Պարտիզակ եւ լուրը արձագանգ կը գտնէր միակ ծերունիի մը սրտին մէջ, որ յետոյ իր գիւղին Աւետ. Եկեղեցւոյն սիւններէն մին պիտի ըլլար: Գործը կ'երկարի Ատափագար: Պրուսայի մէջ հակառակ հալածանքի, անէծքի եւ գրքերու խարոյկներու, ժողովները տեղի կ'ունենային ու հոգիներ կը դառնային Քրիստոսի: Տրապիզոնի մէջ նոյնը: Էրզրումի մէջ պայքարը դժնդակ էր: Զմիւռնիոյ մէջ մամուլը անդադար կը գործէր, 1840ին աւելի քան վեց միլիոն էջ տըպելով:

Այս բոլորը անօգուտ չեղան, Առաքելական Եկեղեցին, չափով մը կը զգաստանար: Աւելի կը քարոզուէր Դարձը, Դատաստանը, Քրիստոսի Մեծութիւնը, եւն.: Տէր Վրթանէս աշխուժով կը շարունակէր: Կը ջանար Սբ. Գրքը սիրելի դարձնել մարդոց, ու հակառակ իր կացութեան, Պատրիարքարանը դեռ պաշտօն իսկ չվստահեցաւ անոր:

Տեղապահին համակրութիւնը նպաստեց գործին յառաջխաղացման: Շատ ժամանակ կը տրուէր աղօթքի եւ հոգեւոր խօսակցութեանց: Պետրոս վարդապետը, իր փրկութեան մասին կը լուսաւորուէր պարզ եղբորմէ մը: Ամէն կողմ դարձեր տեղի կ'ունենային: Հրէից աւետարանչութեան համար հետաքրքրութիւն կ'արթնայ: Կիներն ալ կը սկսին յաճախել ժողովներու: Միսիոնարական հրատարակութեանց տասը զբաղումներ միջոց կը դործէին:

1841ին Մր. Կուտէլ լրացուց հայատառ-թրքե-

րէն, Հին Կտակարանի թարգմանութիւնը եւ սըրբագրեց Նոր Կտակարանը: Մր. Աճըր սրբադրեց աշխարհարար Ն. Կ.ը:

1843ին Պոլսոյ մէջ թուրք կառավարութիւնը հայ երիտասարդ մը կը գլխատէր: Ինչո՞ւ այս մահապատիժը: Որովհետեւ ան գինովութեան մէջ խոստացած էր թրքանալ ու յետոյ սթափած՝ տեսաւ թէ չէր կրնար ուրանալ իր քրիստոնէական կրօնքը: Հակառակ իր փախուստին եւ ծալուածին՝ բռնուեցաւ եւ դատաւարտուեցաւ իբր հաւատուրաց: Դիակը անթաղ մնաց երեք օր: Անգլիոյ դեսպանը բողոքեց: Քիչ յետոյ նոյնը կրկնուեցաւ Յոյնի մը վրայ: Այդ առթիւ, Մեծ Պետութեանց դեսպանները յաջողեցան Սուլթանէն դրաւոր հաւաստիք մը առնել կրօնական ազատութիւնը երաշխաւորող: Այսպէս, խղճի ազատութեան պայքարը Հայոց մը դիմակին շուրջ մղուեցաւ: Հետեւանքները կարեւոր էին բարեկարգութեան համար:

Վրայ հասաւ Մատթէոս հալածիչ Պատրիարքին շրջանը: Ան իր ուշը դարձուց Տէր Վրթանէսին վրայ եւ փիլոնազուրկ ըրաւ զայն: Ան ալ դաւառները գնաց քարոզելու: Վերադարձին բանտարկուեցաւ: Մատթէոս կ'ուզէր որ հերքէ, Վրդանէս հիմնուեցաւ Աւետարանին վրայ: Պատրիարքը պնդեց վերջնադիր մը լրկելով: Տէր Վրթանէս պատասխանեց.

«Թուրքերը, Հայ մը գլխատեցին մահմետականութիւնը ուրացած ըլլալուն համար, եթէ կ'ուզէք դուք ալ զիս Եկեղեցիի դրան առջեւ գլխատեցէք, բայց չեմ կրնար ստորագրել ձեր թուղթը»: Աքսորուեցաւ Արմաշի վանքը:

Դիրքի եւ մեծութեան ծարաւի Պատրիարքը, բարեկարգութեան հանդէպ իր ունեցած կարգ մը հակումները խեղդեց եւ դարձաւ անողոք թշնամի մը: Սկսաւ արհեստաւորներէ: Վերցուց իր եւ Ամիրաներու երաշխաւորութիւնը անոնց վրայէն եւ մէկ օրէն միւսը դանոնք մատնեց անկարելի դժբերութեան մը: Պատրաստեց «բողոքականներուն» բանադրանքը: Յարձակեցաւ Պետրոս վրդ.ի վրայ որ մերժեց արգելափակուիլ: Պետրոս թողուց իր դիրքը եւ նուիրուեցաւ Կիլիկիոյ Աւետարանչութեան, ու 1849ին զոհ գնաց համաճարակի մը: Անյողողոք Տէր Վրթանէս կը շարունակէր դործել Արմաշի մէջ, վանականներ շահելով իր դադափարներուն: Կեսարիա աքսորեցին, ճամբան միշտ կը քարոզէր: Ի վերջոյ տօնի մը առթիւ Սուլթանը զայն արձակել տուաւ:

Պատրիարքը, բարեկարգութեան համակիրնե-

րը տգէտ անուանելով, հրապարակային վիճարանութիւններ եւս սարքեց: Եկեղեցւոյ անսխալականութիւնը, գոյափոխութիւն, խոստովանութիւն, եւն. նիւթերու շուրջ: Նիւթերը գաղտնի կը պահուէին եւ կը պատրաստուէին վերջին ժամուն: Ուժերը անհամեմատ էին: Մէկի դէմ տասը. անպամ մը, երեք-չորս Աւետարանականի դէմ 300 ներկաներ կային: Տակաւին վէճերուն ելքը աննպաստ եղաւ Եկեղեցիին: Ժողովներու ելքին, Աւետարանականները կ'ը քարկոծուէին: Գրքոյկներուն պատխանուեցաւ գրքոյկներով, եւ գրածախները լիովին կատարեցին իրենց պարտականութիւնը:

Էրզրումի եւ Տրապիզոնի Եպիսկոպոսները խստութեան մէջ իրար հետ կը մրցէին: Յանկարծ մին կը բռնեն եւ կ'արգելափակեն իբր յիմար: Գանակոծում եւ աքսոր. հասարակ պատիժներ էին, մեռելները կը մնային անթաղ: Բանադրանք, փողոցի մէջ թուրք եւ նախատինք օրական բաժինն էին հալածեալներուն: Տակաւին ճշմարտութիւնը վստահօրէն կը յառաջանար եւ կեանքեր կը փոխուէին: Յաճախ կատաղի հալածիչներ դարձի կու գային ի մեծ ուրախութիւն տառապեալ փոքրամասնութեան:

Թուրքիոյ մէջ անկարելի էր չվերաբերիլ ընդունուած հասարակութեան մը: Աւետարանականները չէին կրնար բաժնուիլ առանց կորսնցնելու իրենց քաղաքացիական իրաւունքները: Հոգեւոր կեանքին համար իրենք իրենց կը հաւաքուէին ու կը կատարէին Տէրունական ընթերցը, յուսալով որ բարեկարգութիւնը պիտի չուշանար:

1846ին Մատթէոս Պատրիարք կը դիմէր ծայրայեղ միջոցներու: Չկարողանալով վերստին ձերբակալել Տէր Վրթանէսը, Յունվար 25ի կիրակին, խորանը կը խաւարեցնէին, անէծքի Կոնդակը կը կարգադրէր բոլոր «արքիական հերձուածողներու» դէմ, Տէր Վրթանէս որ այնքա՞ն կը սիրէր Տէր Յիսուսը, կը կոչուէր «որդի Սատանայի, Քրիստոսի սպաննիչ, դեռ ստախոս, ստորին թշուառական եւ զոր պէտք էր հալածել իբր դեւ մը: Հրաման կը տրուէր ժողովուրդին խզել ամէն յարաբերութիւն, զործի եւ բարեկամութեան, եւ նոյն իսկ ազգականական կապեր, մերժել հաց, ջուր, բնակարան եւ բարեւ տալ բոլոր Աւետարանականներուն եւ անոնց համախոհներուն:

Ապա ամէն Աւետարանական հրաւիրուեցաւ ստորագրել մասնաւոր մեղալագիր մը: Հարկ էր խոստովանիլ թէ Սատանայէն խաբուած էին, բայց թէ կ'ընդունէին Եկեղեցւոյ հաւատքին անարա-

տուութիւնը: Կցուած էր (անոնց համար անընդունելի), հաւատոյ հանգանակ մը: Ո՛չ մէկ բացատրութիւն կամ խղճի գոհացում կը տրուէր: Մեր ժողները կը հարուածուէին, հացն ու ջուրն իսկ կը զլացուէր անոնց: Եկեղեցական հրատարակութիւնները, հալածեալները կը ներկայացնէին իրր «չնացող, բազմակիւն, գող, ապստամբ, եւն», ալ ինչպէ՛ս չհասկնալ ռամիկ ժողովուրդին ատելութիւնը:

Մատթէոս Պատ. կը ջանայ «գնել» Ա. Իւթիւճեանը, որ անդրդուելի կը մնայ եւ որ լուրջ տեսակցութեան մը միջոցին կը յանդիմանէ Պատրիարքին խստութիւնները եւ կը գլուշացնէ զայն իրեն սպասող հետեւանքէն:

Աւետարանականները ի դուր կը գրեն Պատրիարքին եւ Բ. Դրան, պաշտպանութիւն եւ արդարութիւն խնդրելով: Մատթէոս տասնըմէկ հոգիի աքսորը կը պահանջէ:

Բայց Սուլթանը վեր ի վայր կը շրջէ անոր ծրագիրները: Այս ալ հետեւանքն էր ազատամիտ եւ մարդասէր Սըր Սթոքֆորտ Լէնքիկի ճիգերուն որ Սուլթանին յիշեցուցած էր իր երեք տարի առաջ տուած խոստումը: Բէշիտ փաշա, Պատրիարքը կանչել տալով կը հրամայէ դադարեցնել հալածանքը:

Սակայն անհատները չազատեցան: Կարգը եկաւ Տէր Յարութիւնի: Ինութեամբ խաղաղապէր, ընդհանուր նեղութենէն զօրացած էր անոր դիմադրական ուղին: Եպիսկոպոսը զայն զըջման հրաւիրեց: Տէր Յարութիւն պինդ փարած էր Աւետարանին: «Ի՛նչ չնորհադրկում կամ պատիժ որ ալ վերապահուած ըլլան ինծի, պատրաստ եմ զայն սիրով եւ ուրախութեամբ կրելու Աստուծոյ փառքին համար:» Կիրակնօրեայ պաշտամունքին, մերկացուցին զայն իր կղերական զգեստէն. «Վնտեցէ՛ք անիծեալը» կը գոչեն: Ժողովուրդը զայն դուրս կը նետէ տաճարէն: Տէր հայրը կը կրէ սիրալիր լուծեամբ եւ տուն կը վերադառնայ: Ի վերջոյ, քանի որ միշտ կը մերժէր փոխել իր միտքը, կ'ածիլեն անոր մօրուքն ու մագերը: Փողոցի ստահակները, ճողի մը ծայրն անցուցած անոր գլուխն ու մագերը, կը խալտառակեն զայն: Տէր հայրը անարգանքով, թուրով եւ լուսանքով բանտ կ'առաջնորդուի: Թուրք բանտապետը ըմբռնելով կացութիւնը, անմիջապէս կ'արձակէ արի ծերունին որ տուն վերադառնալով կ'երկրպագէ փա՛ռք տալու «համբերելու» շնորհին համար:

Պէպէքի ճեմարանը կը շարունակուէր: Հա-

լածեալ երիտասարդներէն մաս մը, հո՛ն կրթուցաւ եւ ընդգրկելով աստուածաբանական ասպարէզը, պատրաստուեցաւ հովուութեան:

1846 Յունիս 21ին, խստադոյն կոնդակով մը Աւետարանականները կ'ենթարկուին նոր բանադրանքի եւ անէճքով վերջնականապէս դուրս կը ձգուին Հայ Առաքելական Եկեղեցիէն: Արտաքսուած խմբակը դեռ չէր կրնար կազմակերպուիլ իրր հասարակութիւն, սակայն յետ այնու իրաւունք ունէր կազմակերպուելու հոգեւորապէս եւ տիրանալու իր նուիրական իրաւասութեանց:

Ապագան շատ մութ էր, Տէրը միայն գիտէր թէ ի՞նչ կը սպասէր այդ փոքրամասնութեան: Առայժմ միայն պարտականութիւնը որոշ էր: Եղբայրները խորհուրդ կը հարցնեն Մխիթնարներու, ու կը գումարուի արտակարգ ժողով մը:

1846, Յուլիս 1ին, մայրաքաղաքին 40 Աւետարանականները (որոնց երեքը կ'ին) կը կազմակերպուին իրր Եկեղեցի: Եթէր Ամերիկացի եւ երկու Սկովտիացի Մխիթնարներ, եւ գաւառէն երկու Հայ պատուիրակ ներկայ կ'ըլլան, Մր. Տոնայթի տան մէջ գումարուած այդ պատմական ժողովին: Այդ առթիւ կը հարցուի Բարեպաշտական Միութեան անդամներուն թէ «ո՛ր յարանուանութեան յարիլ որոշած են»: Հայրերը կը պատասխանեն թէ պէտք չունին որեւէ յարանուանութեան մաս կազմելու. «Մենք Սուրբ Աւետարանին աշակերտած եւ անոր հոգեկեցոյց սկզբունքները արդէն որդեգրած ըլլալով կը փափաքինք մեր մայրենի Եկեղեցին իր նախնի առաքելական ուղղափառութեան եւ մաքուր պարզութեան վերածել, վասն որոյ որոշած ենք «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի» կազմուիլ եւ ոչ ուրիշ բան»: Ժամը յուզիչ էր, ու շատեր կ'արտասուէին, մինչ հետըզհետէ աղօթք, յորդոր եւ երգը «Եկեղեցիդ ընդհանրական», կը յաջորդէին իրարու: Միարանողութեան անդամները կ'ըլլան անդամ Եկեղեցւոյ, եւ կ'արձանագրուին իրր այն: Արիստղոս Իւթիւճեան (կամ իմաշատուրեան) կ'ընտրուի իրր հովիւ, որիչ պաշտօնեաներ եւս կ'որոշուին եւ ժողովը կը փակուի չուրջ հինգ ժամ տեւելէ վերջ:

Յաջորդ կիրակի Եկեղեցին կը գումարուի եւ տեղի կ'ունենայ հովիւին քննութիւնը: Դրուած հարցերը կը շօշափեն իր անհատական բարեպաշտութիւնը, հովուական պաշտօնին մասին իր ըմբռնումները, իր վարդապետութիւնը, եկեղեցական կարգն ու սարքը եւ խորհուրդները, եւն: Թեկնածուն Մր. Հոգիով լեցուն անհատ մըն էր,

Հմուտ Սբ. գրոց, տէր առողջ դատողութեան, անվախ, եռանդուն եւ անկեղծ: Փէշտիմալճեանէ ստացած կրթութենէն զատ հետեւած էր նաեւ աստուածաբանական դասերու:

Յաջող քննութենէ մը վերջ տեղի ունեցաւ Ձեռնադրութեան հանդէսը մեծ բազմութեան եւ Պատրիարքին ներկայացուցիչներուն առջեւ: Ապա Եկեղեցին հրատարակեց իր հաւատոյ հանգանակը եւ Կանոնադիրը, բացատրելով իր գործունէութեան շարժառիթները: Փոքր յառաջարանով մը Եկեղեցին Ազգին կը ծանուցանէր իր կրած դառն հալածանքները եւ կ'արգարացնէր իր հիմնարկութիւնը: Նմանօրինակ հիմերու վրայ եկեղեցիներ կը կազմուէին Նիկոմիդիա, Ատափազար եւ Տրապիզոն:

Հալածանքը մասամբ կը շարունակէր դեռ, Պոլիս կ'աշխատէին արգիլել ժողովները: Ա. Թաղման՝ յուղարկաւորները քարկոծուեցան, Միսիոնար մը եւ Հայ մը ծեծուեցան, հազար հոգիներ խուժան մը կը հետեւէր դադաղին: Նիկոմիդիոյ մէջ, անհատներու եւ տուններու քարկոծումը հասարակ բան մըն էր: Ատափազարի հովիւը, շրջափակալ բանտ նետուեցաւ եւ էրզրումի մէջ Տր. Սմիթհի տունը թալանուեցաւ:

Սակայն հետզհետէ կը փարատէին նեղութիւնն ու հոգերը: Բ. Թաղումը տեղի ունեցաւ Աւետարանական ծէսով ոստիկանական հսկողութեան տակ եւ մեծ տպաւորութիւն թողելով: Նոյնը Ա. ամուսնական պսակադրութեան առթիւ: Ա. տարուան վախճանին, 48 խնամով քննուած անդամներ կ'աւելնային Եկեղեցիին վրայ:

Արթնութիւնը սկսած էր կանանց մէջ եւս: Ուրոշուեցաւ անոնց ալ իրաւունք տալ Աստուծոյ խօսքը լսելու: Նախ կը լսէին ժողովատեղիին կից սենեակէ մը: Ապա արտօնուեցան նստիլ սրահին խորքը, վարագոյրի մը ետին: Ի վերջոյ իրաւունք ստացան նստելու սրահին մէկ կողմը, մինչ միւս կողմը կը յատկացուէր այրերու: Կիները սկսան կարգաւորել սորվիլ Սբ. Գիրքէն օգտուելու համար:

Վեր. Իւթիւճեան ութը ամիս միայն կրցաւ վարել իր պաշտօնը: Մարմնով փափկակազմ, միշտ ենթակայ հաղարումէկ անարգանքի եւ դժուարութեանց, բռնաւորուած հալածեալ ժողովուրդի մը հոգերով, հիւանդացաւ: 1847 Մարտ 12ին վախճանեցաւ, տալով յստակ հոգեւոր վկայութիւն մը: Եղբայրը Սիմոն՝ յաջորդեց իրեն:

Այնթապի շրջանին մէջ, Պետրոս վարդապետի եռանդուն աւետարանական գործունէութիւնը,

միացեալ՝ տիրական նպաստաւոր հակումներու լաւ մը պատրաստած էր գետինը: Ոնդրագրի մը ընթացք տրուելով, պարբերական այցելութիւններ տրուեցան: Հետզհետէ կարելի եղաւ հիմնել Եկեղեցի մը, որ արագօրէն աճելով, ծիլ պիտի նետէր չորս դին ու դառնար կարեւոր կեդրոն մը: 1847ին, էրզրումի եւ Պրուսայի Եկեղեցիներով եօթը Եկեղեցի կար:

Լորտ Գօվլէյ, 1847 Նոյեմ. 15ին, ձեռք կը բերէր, Հայ Աւետարանականներու, իբր անջատ հասարակութիւն կազմակերպուելու իրաւունքը: Ստեփան էֆ. Սերովբէեան, Ազգապետ կ'որոշուէր, զբաղելու համար Հայ Աւետարանականներու գործերով: Նոյն օրերուն կը խոնարհէր հալածիչ Պատրիարքին աստղը: Ան որ բիւր զրպարտութիւններ հնարած էր եւ ահարկու անէծքներով շանթահարած խղճի աղատութեան ռահվիրաները, յանցանքի մէջ բռնուեցաւ սա հանրային դանձը, շնորհազուրկ եղաւ եւ դատապարտուեցաւ աքսորի որմէ հազիւ ազատեցաւ, մարդասէր ծանօթի մը երաշխաւորութեամբ, ու իր կեանքը շարունակեց անփառունակ՝ Պոլսոյ մէջ:

Իր վերադարձին Լորտ Սթրէթֆորտ աւելի հաստատուն ֆէրման մը ձեռք բերաւ ի նպաստ Աւետ. Հայոց: Տէր Սահակեան Միացեալ Նահանգներէն կը վերադառնար եւ կը ձեռնադրուէր հովիւ: Մեր առաջին հովիւները բոլորն ալ գիտնականներ չէին, սակայն այն պարագաներուն տակ տրամադրելի լաւագոյն կրթութիւնը ստացան: Օտար բարեկամներ մեծ գովեստով կը խօսին անոնց հպատքին, սրտի եւ մտքի կարողութեանց ու գործելու կորովին մասին: Անձնական փրկութիւնը, խաչին միակ պատարագը, Գրիստոսի բարեխօսութեան բաւարարութիւնը, հաւատքով արդարացման եւ սրբութեան վարդապետութիւնը, Սբ. Հոգւոյն գործը մարդուն վրայ, Եկեղեցւոյն ներքին եւ արտաքին գործունէութեան ձեւը կը կազմէին այն շրջանին պատգամին կարեւորագոյն մասը:

1897ին, իր հիմնարկութենէն յիսուն տարի վերջ, Եկեղեցին կը հաշուէր 1094 հովիւ, քարոզիչ եւ ուսուցիչ: 155 Եկեղեցի, 281 Աղօթատեղի: Ունէր 15,500 Եկեղեցւոյ անդամ: Պաշտամանց կը մասնակցէին 40,000 հոգի եւ 35,000 կիրակնօրեայ զպրոցներու: 5 բարձրագոյն վճարովի դպրոցներ տղոց եւ աղջկանց, 4085 աշակերտներով: 621 դպրոցներ 27,400 աշակերտներով: Այն ատենուան Աւետարանականներու թիւը կը հաշուուէր 70,000:

Կարմիր Սուլթանին օրերն ենք սակայն: Ան-

կէ վերջի պատահարները ծանօթ են ձեզի: Այսօր՝
Հայ Աւետ. Եկեղեցին կը ծառայէ Աստուծոյ եւ
Ազգին Սփիւռքի Հայութեան մէջ եւ փոքր չափով
մը Հայաստանի մէջ:

Տէրը շնորհէ որ մեր հարիւրամեակին հանդի-
սաւոր յիշատակութիւնները, մեր մէջ արծարծեն
Աստուծոյ պարգեւը որպէսզի որեւէ կերպով ան-
հաւատարիմ չգտնուինք մեր ստացած հոգեւոր
ժառանգութեանց: Տէրը շնորհէ մեզ Աստուծոյ ծա-
ռայել, գիտակից մեր սխալներուն եւ թերու-
թեանց, առանց յարանուանական հպարտութեան
եւ մոլեռանդութեան:

Տէր Վրթանէս, բարեկարգութեան այդ ան-
խոնջ եւ գաղափարապաշտ առաքեալը, որ վախճա-

նեցաւ 87 տարեկանին, մինչեւ իր վերջին շունչը
տողորուած մնաց նոյն տեսիլքով: Յոգնաբեկ եւ
անկարող ներկայանալու Բիւթանական Միութեան
ժողովին, Տէր Վրթանէս անոր կը ղրկէր իր հոգե-
ւոր կտակը. — «... Ի սկզբան մեր սրտին ամե-
նաջերմ բաղձանքն էր որ մեր Եկեղեցին, մե'րը,
Աւետարանով բարեկարգուի եւ անոր մէջ կրօնքն
ու աստուածապաշտութիւնը վերականգնանան:
Այդ պատուական նպատակէն չչեղինք, որ մեր ար-
դար պարծանքն է»:

Ամէն, Վրթանէս Հայրիկ, յարուցեալ Գրիս-
տոս օրհնէ Հայաստանեայց Առաքելական եւ Աւե-
տարանական Եկեղեցիները ի փառս Աստուծոյ:

Զ. Բ. ՊՈԲՏԱՔԵԱՆ

Պոստն, 27 Մայիս 1946



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գրեց՝ ՎԵՐ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Յուլիս 1, 1946ին Հայ Աւետ. Եկեղեցին պիտի տօնէ իր գոյութեան հարիւրամեակը: Ծիշող դար մը առաջ էր որ նա կազմակերպուեցաւ իբր անկախ եկեղեցի, նախ Կ. Պոլսոյ եւ ապա Թուրքիոյ ու արեւմտեան Հայաստանի շատ մը նահանգներուն մէջ:

Այս ղէպքէն մի քանի կարեւոր կէտերու վրայ պիտի գրեն իմ բարեկամներս: Իմ նպատակս է հոս ըստ կարելոյն ցոյց տալ թէ ինչ էին Հայ Աւետ. Եկեղեցւոյ ծագման պատճառները:

Առաջին՝ պակասք քրիստոնէական հաւատոյ մեծ հերոսի մը: ԺԸ. դարու երկրորդ եւ ԺԹ. դարու առաջին կէսը քաղաքական եւ ընկերական յեղաշրջումի դարն է: Բաւական է յիշել Գաղիական մեծ Յեղափոխութիւնը (1789) եւ Կովկասի ու Արեւելեան Հայաստանի մեծ մասին զբաւեռմը (1828-1829) Ռուսերու կողմէն: Երկուքն ալ շատ ծանրակշիռ ղէպքեր նաեւ Հայերու համար: Մէկ կողմէն կը կարօտէինք քաղաքական հանճարներու՝ ազգին նաւը խուժելու մէջէն՝ փոթորկայոյց ծովուն վրայ՝ ապահով ղեկավարելու համար: Իսկ միւս կողմէն՝ հաւատոյ բարձր ներշնչումներով օժտուալ կրօնական անձնաւորութիւններու:

Ինչպէս գրեթէ միշտ, մեր պատմութեան ընթացքին, այդ շրջանին ալ առաջինը չունեցանք. ուստի հետզհետէ աւելի փտանդուեցաւ Հայուն գոյութիւնը Թուրքիոյ մէջ, եւ յանգեցաւ վերջին աղէտին:

Ուրիշ քաղաքական անկման շրջաններուն՝ երբ Հայուն «լինել չլինել»-ու հարցը կար, գէթ ունեցանք մեր հաւատքի հերոսները, — Յովհաննէս Ռրոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի ԺԳ. դարու վերջերը եւ ԺԵ. ի սկիզբը. Մովսէս Տաթեւացի ԺԶ. դարուն սկիզբը եւ Յովհաննէս Կոլոտ ու Գրիգոր Շղթայակիւր ԺԸ. դարու առաջին կիսուն: Ասոնք իբր Կաթողիկոս ու Պատրիարք, իբր կրօնական ուսուցիչ եւ աւետարանիչ ու իբր հոգեւոր մատենագիր, իրենց սուրբ կեանքով եւ կենդանի քարոզներով արթնցուցին եւ արծարծեցին Հայուն քրիստոնէական հաւատքն ու եռանդը եւ մղեցին զայն զոհելու ամէն բան Գրիստոսի սիրոյն, իր գոյութեան ու խղճի ազատութեան համար:

Բայց Գրիգոր Շղթայակիւրի մահէն (1749) յետոյ մինչեւ Աւետարանական Եկեղեցւոյ ծագումը մեր մայր եկեղեցին չունեցաւ կրօնական ունէ հանճարեղ առաջնորդ: Շիտակ է թէ այդ շրջանին ալ Հայ հասարակ ժողովուրդը գրեթէ ամբողջութեամբ՝ պատրաստ է իր կեանքը զոհել քան թէ իր հաւատքը, եւ տուած է Յովհաննէս Մալաթիացիի, Սահակ Կարնեցիի, Վառվառէ Դմիտրիի եւ Տըրկատեցի (Պարբերդ) Սուրբ Դաւիթի նման բազմաթիւ նահատակներ, որոնք կեանքէն աւելի մարտիրոսութեան պսակը ընտրեցին:

Սակայն դժբախտաբար անիկա չունեցաւ մէկը, որ լեցուած ու լուսաւորուած Աստուծոյ Հոգիով՝ խորապէս ըմբռնէր ժամանակի պահանջը, ճանչնար բարեպաշտ հոգիներու խորը, աւելորդապաշտ սովորութիւններու ներքեւ թագնուած կենդանի հաւատքը եւ Աւետարանի պարզ քարոզութեամբ արծարծէր զայն ու ցրուէր զանիկա ծածկող մոխիրները:

Ասով Հայաստանեայց Եկեղեցին արդէն 100 տարի առաջ նախ ներքնապէս, հոգեւորապէս պիտի նորոգուէր, որ է էականը, կենսականը, եւ ապա պիտի կատարէր անհրաժեշտ արտաքին բարենորոգումները, որոնց մասին կը խօսուէր երկարատեւ ի վեր:

Բայց այն ատենուան պատասխանատուները զայդ չհասկցան. հոգեւոր ճշմարիտ կեանքի ճրգ-տող մարդէկը Թշնամի նկատեցին մայրենի եկեղեցւոյն ու զանոնք ստիպեցին զատ եկեղեցի մը կազմել, զանոնք դուրս վնասելով մայրենի եկեղեցիէն:

Երկրորդ՝ Աւետարանական Եկեղեցւոյ ծագման ուրիշ մէկ պատճառն այն է Աւետարանականութեան ոգիին ընտանութիւնը Հայու հոգիին հետ:

2.- Հայուն քրիստոնէական հաւատքը սկիզբէն հաստատուեցաւ ոչ թէ աւելորդապաշտութեան՝ հապա Աւետարանի ճշմարտութեանց վրայ: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Աւետարանին քարոզած խաչեալ ու յարուցեալ Քրիստոս Վէմին վրայ հիմնեց Հայաստանեայց Եկեղեցին:

2.- Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ ալ Աւետարա-

նը դռան իրր ամենէն կենսատու աղբիւրը՝ հաւատքի կեանքին համար: Ուստի անոնք չգոհացան զայն միայն յունարէն բնագրէն կարդալով ու ժողովուրդին հայերէն բացատրելով, կամ զայն միայն կղերին սեփականութիւնը դարձնելով, հապա տուին մեզի հայերէն ոսկեղնիկ լեզուով թագուհի թարգմանութեանցը եւ դարձուցին զայն ժողովուրդին սեփականութիւնը, որպէսզի ըստ կարելւոյն ամէն մարդ կրնայ զայն իր տան մէջն ալ կարդալ:

3.— Աւետարանի հոգիով տրուած դաստիարակութիւնն էր որ Սահակի ու Մեսրոպի ձեռնասունները, Վարդան ու իր ընկերները, հաւատքի դրօշը բարձր պահեցին, Մարտիրոսացան եւ իրենց արիւնով ոռոգեցին ու պտղաբեր դարձուցին հայ հաւատոյ դաշտը:

4.— Դարձեալ Աւետարանն էր գէնը, որով Գրիգոր ու Մովսէս Տաթեւացիներ եւ Յովհաննէս Կոլոտներ ու Գրիգոր Շղթայակիրներ՝ Տաթեւի ու Ամրոտլուի վանքերուն աստղերը, պայքարեցան իրենց ժամանակին մէջ տիրող մեղքերու դէմ, արծարծեցին հայ ժողովուրդին թմրած հաւատքը եւ խրախուսեցին զայն այդ դժբախտ, յուսահատական օրերուն: Կ'արթէ հոս մէջերում մը ընել «Աւետագիր» թերթի Փետրուարի թիւէն.— Ժէ. դարու Տաթեւ վանքի ազդեցութիւնը տարածուեցաւ Հայաստանի վրայ եւ այդ ազդեցութեան կը պարտինք Յովհաննէս Կոլոտի ու Շիրվանցի Գրիգորի (Շղթայակիր) աւետարանչական նախանձաւորութեանը... Ամէն ձմեռ անոնք շարունակեցին քարոզել գիւղերու եկեղեցիներուն մէջ. երթալով, ինչպէս կ'ըսէ Կոլոտ, ձմեռնային օդին եռանդագին հուշակելով Աստուծոյ խօսքը հոն՝ ուր Հոգին կ'ուզէր եւ յաջողութիւն կու տար:

Կոլոտ Աւետարանական հակումով մարդ մըն էր, թէեւ հագիւ կարելի է ըսել թէ անիկա լսած էր Լուսերի մասին... Իր գրչէն արտադրուած քչիկ մը բանին մէջ երբեք բառ չկայ սուրբերու եւ անոնց բարեխօսութեան մասին, բայց աւելի Բրիստոսի եւ Անոր աստուածային միջնորդութեան մասին: Կոլոտ գիւրդութեամբ պիտի մեղադրուէր իբր բողոքականութեան հակամիտեալ մը յետագայ տարիներուն, Աւետարանական Եկեղեցւոյ սկզբնաւորութեան ատեն:

Ահա Հայաստանեայց Եկեղեցւոյ այս լուսատու ջահերուն ժառանգ ձգած լոյսն էր զոր Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադիրները մոխիրներու տակէն հանեցին ու աշտարակի վրայ

բարձրացուցին: Անոնք Կոլոտներու քայլերուն էր որ կը հետեւէին, թերեւս անգիտակցօրէն, երբ կը պնդէին թէ «Մէկ Աստուած կայ ու մէկ Միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ, Բրիստոս Յիսուս մարդը» (Ա. Տիմ. Բ. 5) եւ թէ Աստուածաշունչն է մանաւանդ Աւետարանը, մեր հաւատոյ աղբիւրը, անսխալ առաջնորդը:

Ուստի մենք Հայ Աւետ. Եկեղեցւոյ ծագումը կը պարտինք Աւետարանականութեան ոգիին ընտանութեան հայ հոգիին հետ: Այս եկեղեցին է հետեւողական ժառանգորդը մեր լուսապայծառ հայրերուն:

Այժմ նկատողութեան առնենք.

Երրորդ պատճառը, Թոնդրակեցւոց շարժումը.— Ասոնք շփոթելու չէ Պաղիկեաններու հետ, որոնք թէեւ ասոնց նման հայկական ծագում ունին եւ ժամանակի կարգով անոնցմէ առաջ գործած են, բայց ուղղափառ հաւատքէն բաւական կը չեղին եւ քչիկ մը կը նմանին Մանիքէական աղանդին:

Թոնդրակեցիները իբր գլխաւոր կեդրոն ունեցած են Հարք դաւառի Թոնդրակ գիւղը, բայց կրօնական մեծ շարժում մը յառաջ բերած են Հայաստանի շատ մը կողմերուն մէջ Թ.—ԺԱ. դարերու ատեն: Ունեցած են շատ ազդեցիկ առաջնորդներ, ինչպէս Զարեհաւանդցի Սմբատ, Յեսու եւ Հարքայ Եպիսկոպոսը Յակոբ, եւ իրենց հետեւորդներուն մէջ ունեցած են նոյնիսկ ազնուազգի այրեր ու կիներ, ինչպէս Հրանդյ:

Թոնդրակեցիք կը պահանջէին թէ՛

1.— Կղերականները իրենց պաշտօնին համար մասնաւոր կոչում եւ իրր Աստուծոյ ծառաներ ամբասիր կեանք ունենալու են Տէրովը ու մարդոց առջեւ:

2.— Աստուծոյ խօսքին ընթերցումը ամէն կիրակի, քարոզն ալ նոյնիսկ ամէնէն տղէտին հասկնալի լեզուովը:

3.— Ուստի ամէն պատկերներու եւ լքում Սուրբերու պաշտաման: (Գ. Սիսլեան, Էթիւս սիւռ լա Բէֆորմ Առմէնիէն):

Ուրեմն կը պահանջէին Հայաստանեայց եկեղեցիէն սոյն բարեփոխութիւնները, որոնց մասին պնդեցին Հայ Աւետարանականները մեզմէ մէկ դար առաջ:

Թոնդրակեցիները ընդհանրապէս խստակեաց էին: Յակոբ Եպիսկոպոսի համար գրուած է թէ քրճազդեւատ ու պահեցող էր եւ բոկոտն կը պտըտէր, ուստի մեծ ազդեցութիւն գործեց ժողովուր-

դին ու շատ մը կղերականներու վրայ թէ՛ իր վարած լուրջ կեանքին եւ թէ պերճախօս քարոզներուն միջոցաւ: Եւ իրենց թիւը հետզհետէ աճեցաւ:

Սակայն ոմանք ալ ծայրայեղութեան դիմեցին. ուստի շատ խիստ հալածանքներու ենթակուեցան, մանաւանդ Գրիգոր Մազիստրոսի կողմէն: Շատեր աքսորուեցան, ծեծուեցան, բանտարկուեցան եւ խարանուեցան ու նոյնիսկ սպաննուեցան:


Սակայն Թոնդրակեցիք իրենց կրօնական համոզման մէջ հաստատուն մնացին: Ոչ հալածանքները եւ ոչ ալ համոզիչ խօսքերը չկրցին զանոնք չեղեցնել պաշտպանելէ իրենց խղճի ազատութիւնն ու կրօնական գաղափարները:

Բայց եկաւ Թաթարական արշաւանքը եւ Հայաստանի մէջ կորսուեցաւ անոնց հետքը: Այսու ամենայնիւ անպտուղ չմնաց անոնց գործն, ու քարոզութիւնը եւ արիւնը: Թոնդրակեցիներէն շատեր փախան Հայաստանէն դուրս եւ հաստատուեցան Ասորեստան եւ մանաւանդ Պուլկարիա: Անոնք հոն շարունակեցին իրենց շարժումը «Պօկոմիւններ» անունով (Գ. Սիսեան, Էթիւտ սիւռ լա Ռեֆորմ Առմէնիէն) ու տարածեցին իրենց վարդապետութիւնը Պուլկարիոյ եւ Հարաւային Սլաւ-

ներու մէջ: Հաւանաբար Ֆրանսայի Ալպիկենցիները ու Վօտուացիներն ալ մեր Թոնդրակեցիներէն լրջօրէն ազդուած են: Ինչպէս կը կարծէ Պրայս, թերեւս մեր Թոնդրակեցիները եղած են նաեւ նախակարապետները Բողոքական բարեկարգութեան Եւրոպայի մէջ:

Հայաստանի մէջ ալ անոնց մղած պայքարը աւելորդապաշտութեան դէմ՝ ու խղճի ազատութեան համար եւ անոնց ցանած աւետարանական ճշմարտութիւնները անպտուղ չմնացին: Ասոնք սրտէ ի սիրտ փոխանցուեցան, անուղղակի եւ անգիտակից կերպով ազդեցին շատ մը հայ հաւատացեալներու վրայ և զանոնք պատրաստեցին ԺԺ. դարու բարեկարգութեան, որուն քարոզիչները բերրի հող մը գտան հայ ժողովուրդին մէջ: Անոր մէջէն մեծ բազմութիւն մը ընդունեց Աւետարանը ուրախութեամբ իբր «Աստուծոյ զօրութիւնն ու իմաստութիւնը», հետեւեցան անոր հակառակ հալածանքի, բանտի, աքսորի ու ծեծի: Քանզի անոնց համար Աւետարանականութիւնը ոչ թէ օտարամուտ վարդապետութիւն մըն էր, հապա իր «Ոսկորէն ոսկոր ու մարմինէն մարմին էր» իր հայրերուն արիւնով զնուած ու իրենց փոխանցուած իբր ամէնէն թանկագին ժառանգութիւնը:

Գ. ԽԱՅԻԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԵՏ . ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԻՒԼԲ ԹԵ ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Գրեց՝ Յ. Ն. Ղ.

Հարիւր տարիներու ընթացքին շատ շունչ եւ ժամանակ վատնուեցաւ, շատ գրիչ շարժեցաւ, թեր ու ղէմ գրողներու կողմէ պաշտպանելու կամ պարսաւելու Աւետարանականներու բաժանումը Մայր Եկեղեցիէն:

Ոմանք այս բաժանման մէջ փնտռեցին գծուծ շարժառիթներ, կոչելով Աւետարանականները միասինարական իւղոտ պատաններուն նպաստընկալները: Ուրիշներ որակեցին զանոնք որպէս անհաշտ ուժացածներ եւ նորոյթի թեթեւամիտ եւ անխորհուրդ հետեւողներ, իսկ Պօրտի միախոնարները լոկ մարդորմներ:

Իրաւ է թէ մեր առջեւ չունինք անկողմնակալ պատմաբաններու ընդարձակ երկասիրութիւններն այս մասին, բայց ունինք դեռ բաւական տեղեկութիւն իրողութեանց մասին, երկասիրութիւններ եւ ձեռագրեր մնացած Պոլսոյ Պատրիարքարանէն, Աւետարանական Եկեղեցւոյ ներկայացուցիչներէն եւ միախոնարներէն, որոնք շահեկան լոյսեր կը սփռեն խնդրոյն անկեղծօրէն մօտեցողներու ճամբուն վրայ:

Թերթիս մէջ հրատարակուած երեք յօդուածներով գործակիցներս ջանացած են ներկայացնել այն յստակ իրականութիւնը թէ դարեւ ի վեր Աւետարանականութիւնը հայ իրականութեան մէջ պահանջ մըն էր դարձած նաեւ ԺԹ. դարուն մէջ, միախոնարներու Պոլիս հասնելէ շատ առաջ: Անիկա դուրսի աշխարհէ մտած չէ մեր մէջ, ընդհակառակն, պատիւ մըն է մեզի պատմականօրէն վըստահարար հաստատել հանգուցեալ Տոքթ. Տաղաւարեանի եւ ուրիշ պատմաբաններու հետ թէ ԺԶ. դարուն Եւրոպայի մեծ բարեկարգիչները Լուտեր եւ Կալուին եւ իրենց յառաջապահները ձան Հուս եւայլն աւետարանական լոյսը ընդունած են Հայ Աւետարանական շարժման նախահայրերէն (Թոնդրակեցիներէն) աւանդ ձգուած ժառանգէն:

Հայերս ուրեմն հպարտ կը զգանք ինքզինքնիս, որ ոչ միայն ճարտարապետութեան եւ այլ ճիւղերու մէջ ուսուցիչը եղած ենք Եւրոպայի ներկայ քաղաքակրթութեան, հապա նաեւ ազատ Աս-

տուածապաշտութեան տեսակէտով ալ եւ աշխարհի Բարեկարգեալ կամ Բողոքական Եկեղեցիին ծագումին եւ վերածնունդին մէջ ծառայող դեր մը կատարած ենք: Այս թանկագին եւ պատուաբեր ծառայութեան համար Հայ Ազգը իրաւունքով՝ գուրգուրոտ յարգանքով մը սեղմելու է իր գրկին մէջ Հայ Աւետ. Եկեղեցին, իբր իր ինքնարուղի եւ ինքնադրոշմ գուտ հայկական մէկ առողջ որդին:

Գիտենք թէ, Աւետարանի ոգին խիստ ակնածանքով պաշտպանուած է Հայերուս մէջ, վասնզի Հայը անուրանալիօրէն կրօնասէր ժողովուրդ մըն է եւ իր կրօնքին կապուած է նոյնիսկ կեանքի գընով: Երկրորդ, որ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ուղղափառ բայց նաեւ ազատախոհ եկեղեցի մըն է: Ըլլալով կեդրոնացեալ եկեղեցի մը, ունի նաեւ իր մէջ լայն ժողովրդական ապակեդրոնացեալ գործելակերպ մը եւ առաձգականութիւն մը, արթնցնելու իր ծոցին մէջ ազատախոհներ եւ թոյլատու ըլլալու անոնց, որքան ժամանակ որ վտանգ մը չեն կազմեր իր գոյութեան:

Գալով ԺԹ. դարուն մէջտեղները գոյութեան կանչուած անջատ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյն, անոր արմատներն ալ կը գտնուին յիսուն տարիներու բարեշրջութեան մը հողին մէջ: Հող մը, որ մասնաւոր ձգտումներով հերկուած ու պատրաստուած էր:

Այդ դարը մեր ազգին համար իրական արթնութեան դար մըն էր, անկէ առաջ Եւրոպայի վրայէն անցնող Ֆրանսական Յեղափոխութեան ազատ շունչը հետզհետէ կը հասնէր Վոսիփորի ափերը եւ հոն ալ յեղաշրջում մը կը պահանջէր տընտեսական, ընկերային, կրթական եւ բնականաբար նաեւ կրօնական մարդերու մէջ: Յառաջդիմութեան միշտ հետամուտ Հայորդիներու եւրոպական ծաղկոյցները այցելող եւ անոնցմէ նիւթեր ծծող յանդուգն խումբերը երթալով կ'ստուարանային: Ասոնք իրենց հետ կը բերէին քաղաքակրթութեան զանազան նմոյշները, մանաւանդ ազատութեան թարմ շունչը: Արդար ըլլալու համար պէտք չէ ուրանալ նաեւ Վենետիկի եւ Վիեննայի մէջ գտնու-

ւող Միխիթար արքայի միաբանութեան վանքերը, որոնք կաթողիկ կրօնական հաստատութիւններ ըլլալէ աւելի գրականութեան եւ մտքի լուսաւորութեան ջանքերն էին:

Այդ առնձն ո՛չ միայն Թուրքիոյ տնտեսական զեկը Ամիրաներուն ձեռքն էր, այլ նաեւ հայ ընկերական կեանքի բոլոր բանալիները: Պատրիարքարանը եւ եկեղեցական բոլոր հաստատութիւնները այս մամոնայի բռնակալներուն ենթակայ էին: Անոնցմէ ոմանք թէեւ արժէքաւոր մարդիկ էին, բայց անոնց մեծամասնութիւնը գրեթէ անտեղեակ, բարոյապէս ոչ անբասիր քմահաճ եւ անշահ մարդիկ էին: Մտաւորական եւ ազատաշունչ դասակարգը չհանդուրժելով այս միահեծան բռնակալին, կը ծառանար անոր դէմ եւ բարեկարգութիւն կը փնտռէր ընկերական, տնտեսական եւ կրօնական մարզերու մէջ:

Աւելի կրկնութիւն չըլլալու համար հոս զանց կ'ընենք այդ սքանչելի արժնութեան մանրամասնութիւնները, որուն շահաւէտ արդիւնքներէն ամէնէն շատը մենք օգտուեցանք, ունենալով հոգեւոր յառաջապահներ, արժէքաւոր ուժեր, որոնց սրտի ամէնէն կարեւոր նիւթը բարեկարգութեան մը պէտքն էր Հայ Առաքելական եկեղեցիին ծոցին մէջ: Այս նիւթը իրենց շարունակական խօսակցութեան նիւթն էր: Պատրիարքներ, եպիսկոպոսներ, քահանաներ իրանց նիստերուն եւ քարոզներուն մէջ կը շեշտէին թէ եկեղեցին պէտքն ունէր թօթափելու միանգամ ընդմիշտ այն փոշիներն ու աւելորդ ծէսերը, որոնք պարտադրուած էին դարերու ընթացքին օտար իշխանութիւններէ եւ որոնց յակամայս գլուխ ծռած էր հայ եկեղեցին, իր դոյութեան սպառնացող յորձանուտներէն անցնելու պահուն: Մեծ է թիւը այն հոյլին, որ ձայն բարձրացուց, նոյն իսկ անձնական կեանքը վտանգած ըլլալով:

Այս բարեկարգութիւնը չպայթեցաւ, վասնզի բարեկարգութեան հերոսը կը պակսէր: Այդ անձը պէտք էր օժտուած ըլլար բազմապիսի բարեմասնութիւններով: Միայն կեանքը վտանգելու յանդերձնութիւնը չէր բաւեր, պէտք էր ունենար կրօնական դիրքը, դաստիարակութիւնը, հոգակը, հրեւտորի կարողութիւնը, անյողդողդ կամքը, հեռատեսութիւնը, հաւատքը, Աստուածային տեսիլքը եւ անոր դաւանութիւնը: Կը պակսէին նաեւ հաւատքի զործակիցները, վասն զի բարեկարգութեան մը առթիւ բարեկարգիչին չափ արժէք կը ներկայացնեն իր նուիրուած գործակիցները:

1828ին Ստեփաննոս Աղաւնունի պատրիարքը Պատրիարքարանի կից ընծայարան մը բացաւ այդ բարեկարգիչները պատրաստելու, Փէշտիմալճեան Գրիգոր պատուելիի հոգածու խնամքին տակ: Այդ ընծայարանի աշակերտներէն խիստ արժէքաւոր անձեր երեւան եկան, ինչպէս Ս. Գէորգ Դ. կաթողիկոսը. սակայն բարեկարգութիւնը չծնաւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին մէջ որովհետեւ զործը ձեռք առնող մարդը չկար: Թէեւ փափաքողներ չէին պակսեր, սակայն բարեկարգութեան կողմնակից պատրիարքին դէմ ցցուած էր ուրիշ պատրիարք մը, եպիսկոպոսին հակառակ դադափար ունեցող եպիսկոպոսը, ամիրային ձեռնադրութեան դէմ՝ ստորերկրեայ միջոցներով հակառակող ամիրան, բանիմաց փիլիսոփայ Աստուածաբանին դիմաց կեցող նոյնքան կարող իր պաշտօնակիցը: Ասոր կը միանար ժողովուրդի մէջ գտնուած հակոտնեայ դադափարները, զորոնք ի մի բերել եւ նոյն տեսիլքին մէջ բերեղացնել կրցող մարդը կը պակսէր:

Բոլորովին նոյնը եղած են պայմանները Կովկասէն սկսեալ մինչեւ Հնդկաստան գտնուող Արեւելահայոց մէջ:

Կովկաս՝ Էջմիածնայ մթնոլորտին մէջ ապրած եւ սնած են անձեր, որոնք մինչեւ կաթողիկոսութեան բարձրագոյն աստիճանին հասած եւ բնաւ մոռցած չեն եկեղեցական դաւանութիւնը ժողովուրդին մատչելի ընելու փափաքը, որպէսզի ազգը չտնէ իր ներքին բաղձանքին ճշմարիտ յազուրդը: Եփրեմ Ա. Ձորագեղցիի օրով Գանաքեոցի Սարկաւազ Խաչատուր Արովեան, արեւելահայ գրականութեան հիմնաքարը դնողը, բարեբաւտիկ պատահումով մը Տորբատի համալսարանի բրոֆէսորներէն միոյն եւ անոր բարեխօսութեամբ ոռոս պետական ծախքով նոյն համալսարանը կը զրկուի ուսանելու: Հոն, հինգ տարուան անմոռանալի ուսանողական ջրջանէ մը վերջ այս օժտեալ ազգասէր երիտասարդը իր երեսուն եւ մէկ տարեկան հասակին մէջ կը վերադառնայ Էջմիածին կրօնաւոր ըլլալու նպատակաւ, որպէսզի կարենար անարգել լաւագոյն դաստիարակութեամբ մը օժտել եկեղեցականներն ու ուսուցիչները, ազգին գիտակից եւ արժանաւոր մշակներ հասցնելու:

Ազգին սիրովը տողորուած եւ ինքզինքը համակ անոր ծառայութեանը նուիրած այս երիտասարդին միտքը, հակառակ Տորբատի մէջ ընդունած աւետարանական թարմ դաստիարակութեան, սորված էր իր ուսուցիչներէն մնալ իր եկեղեցիին

մէջ եւ դարկ տալ անոր հոգեւոր կեանքին, հասկնալի ընելով Աւետարանի պատգամը հասարակ ժողովրդի մտքին: Արչակ Զօպանեան կ'ըսէ. — «Առաջին քայլին իսկ, խեղճ տղան կը բաղխի զըզուելի նախապաշարումներուն, աւանդադաժն արգելքներուն, իր տեղեւորներն մէջ ամրացած ժողովրդի մը ամբողջ յամառ չարկամեցողութեանը: Արովեանի բերած նոր ուժին դէմ կը դաւակցին բոլոր հնամուլ, բորբոս, խաւարտչին մտքերը. կաթողիկոսն ալ (Տ. Յովհ. Կարնեցի) կ'անսալ զըզուարտութիւններուն, եւ Արովեան մերժում կը դնէ, որովհետեւ զինքը կը համարին ապականուած, օտարացած Հայ մը, գերմանացած, բողոքական դարձած Հայ մը:»

Պատճառը այս է որ անկա գրիչը ձեռք կ'առնէր եւ առաջին անգամն ըլլալով կը պատուէր, կը փլցնէր գրաբարի անմատչելի ամբողջները եւ իր ըսելիքները կը գրէր հայ գեղջուկին հասկցած լեզուով: Այս ժեսը — աշխարհաբար գրելն — արդէն բողոքական ըլլալ կը նշանակէր, վասնզի աշխարհաբար բողոքականի լեզու կը նկատուէր: Անոր հետեւեցան, նոյն համալսարանին մէջ սնած Ստեփան Նադարեանց եւ Միքայէլ Նալբանդեանց, մանաւանդ Յովհաննէս Շահաթումեան, որոնք Արեւելահայ վերածնունդի ազատական դպրոցին յառաջապահներն եղան:

Ասոնք իրենց բանին ու երկերովը խստիւ քննադատեցին էջմիածինն ու միաբանները, անոնց տղեղութիւնն ու աւելորդապաշտութիւնը, անոնց կեանքին նոր Կտակարանի հակոտնեայ ըլլալը զոյց տալով՝ որոնք անկարողներ, բայց էջմիածնի կրօնական հանդամանքին փրէսթիժը իրենց պայքարներուն միակ միջնաբերդն ըրած էին: Դժուար էր այս նոր շարժման ռահվիրաներուն գործը, որոնց ջանքերուն սերմերը հետզհետէ կը սկսէին բողոքօլի: էջմիածին կ'արթննար մէկ կամ միւս բարձրագոյն եկեղեցականին մէջ, մինչեւ որ Մելքիսեդէկ Մուրատեանց կաթողիկոսութեան թեկնածուն ինքզինք յօժար կը սեպէր Աւետարանի սկզբունքներով բարեկարգութիւն մը ընելու Հայ եկեղեցւոյ ծոցին մէջ, եթէ ինքն ըլլար կաթողիկոս: Անոր կաթողիկոսութիւնն ու տրամադրութիւնները վիժեցան հակառակորդ ուժերու ձեռքով:

Պարսկաստան՝ արդէն Կովկասի կողքին՝ միշտ հարեւանն ու ամէնէն առաջին օգտուողն եղած էր Ռուսահայ գրականութենէն ու վերածնական շարժումէն:

Հնդկաստանի մէջ ալ նոյնն էր պարագան ճիշդ նոյն ժամանակամիջոցին: Հոն գտնուող մեր հին

ու պատկառելի գաղութը, մանաւանդ Կալկաթայի մէջ, շիման գալով Անգլիացի բարձրաստիճան քրիստոնեայ պաշտօնեաներու եւ անոնց ընտանիքներուն հետ, նկատելով անոնց կրօնական ըմբռնումի ջինջ երեւոյթն ու անոր զօրութիւնը գործնական կեանքի վրայ, զգացին թէ որքա՞ն անորոշութեան մէջ թաղուած էին Աւետարանի ճշմարտութիւնները մայր եկեղեցւոյ մէջ, ուր հարկ էր բան մը փոխել: Հոն այդ փոքր գաղութին մէջ եղան արթնցողներ, որոնք սկսան տարբեր մտածել քան իրենց հայրերը եւ աւելի պարզ մեթոտներով մօտենալ իրենց պաշտած Աստուծոյն, քան որ իրենց եկեղեցին կը թելադրէր իրենց: Սակայն յանդիմանութիւնը, ուժացման վտանգները, հոգեւոր առաջնորդի չգոյութիւնը պատճառ եղան, որ այդ շարժումը իր սաղմնաւորութեան մէջ իսկ վիժի, թէեւ անոր ազդեցութիւնը մնաց հոն, յաջորդ սերունդին վրայ:

Ահա ԺԹ. դարու եռեփ վերածնունդին մէկ պատկերը իր գրական եւ բացասական կողմերով: Թէեւ հակառակութիւնը մեծ եւ պայքարը անհաւասար ուժերով կը կատարուէր, սակայն Աւետարանի լոյսը հետզհետէ կը թափանցէր հայ մտաւորականին սրտին, հայ ընտանեկան պարագաներէն ներս եւ խումը մը նուերուած եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած ու իրենց ազգին զաւակներուն փրկութեան համար հրկիզուող անձեր չէին խնայեր իրենց ջանքերն ու վկայութիւնը: Բայց ասոնք ալ Դեռ պէտքն ունէին փորձառութեան եւ դաստիարակութեան: Հոգեւոր ճշմարտութիւնները զեռնոր էին իրենց եւ հայ եկեղեցւոյ աւանդական սեփականութիւնն ալ խիստ թանկագին եւ դժուարաւ թօթափելի: Սակայն եկեղեցիին զխաւորները ո՛չ տրամադրութիւն եւ ոչ մտադրութիւն ունէին իրենց ելքի ճամբայ մը ցոյց տալու. ընդհակառակն կը կնճռոտէին:

Ի՞նչ ընէին այդ վճռական վայրկեաններուն: Աւետարանական եկեղեցւոյ կազմութեան առթիւ ալ, կը սրակսէր հերոսը, յեղափոխականը: Փէշտիմալճեան Գրիգոր Պատուելի իր երկնային հանգիստը մտած էր ութ տարիներէ ի վեր, ձգելով իր ետեւէն միայն քանի մը աշակերտներ: Վեր. Իւթիւճեան, առաջին Աւետ. հովիւը՝ հաւատքի տէր մէկը՝ չունէր անհրաժեշտ կորովն ու առողջութիւնը: Մէր Սահակեան, որ «Բարեպաշտութեան Միաբանութեան» քարտուղարն ու զայն Պոլսէն սկսեայ մինչեւ դաւառները սքանչելի ոգեւորութեամբ մը արթուն պահող անձը, չունէր առաջնորդի հզօր մասնայատկութիւնները: Այս

պատճառաւ իրենք ստիպուած էին արտաքին ուժերէ օգնութիւն խնդրել: Այդ անձերն էին Ամերիկեան միսիոնարները, որոնք իրենց փորձառութեամբն ու հոգեւոր գիտակցութեամբ տարիներէ ի վեր լոյս տուած էին իրենց, ու իրենց կատարեալ վստահութիւնը գրաւած էին, որպէս հոգեւոր եղբայրներ ու վստահելի առաջնորդներ: Իրականութեան մէջ ալ որո՞ւ կրնային դիմել, երբ Աստուածաշունչ Մատեանը ի ձեռին, կը նկատէին որ աղքատին մայր եկեղեցւոյ կարգ մը աւանդութիւններն ու վարդապետութիւնները խոտոր կը համեմատէին Աւետարանի ճշմարտութեանց. եւ անոնց լուսաբանութիւնը իրենց հոգեւոր պետերէն չկարենալ ընդունելէն զատ անոնցմէ կշտամբանք եւ յանդիմանութիւն կը կրէին, չգրադելու աշխարհի բարդ հոգեւոր հարցերով՝ որոնք միայն կրօնականներուն կ'իյնար, որոնք պէտք էր կրէին իրենց հոգիներուն հոգը: Խստապահանջ եկեղեցական իշխանութեան կամայական եւ անբանաւոր դաւանական պարտադրութեանց ենթարկուիլ եւ հնազանդիլ, դէմ էր իրենց խղճի ազատութեան զգացումին: Որո՞ւ կրնային դիմել անոնք, քանի որ զիրենք եւ իրենց ներքին տաղանակները հասկցող եկեղեցականներէն շատերը թէեւ իրենց համամիտ, անկարող էին, իսկ իշխանութեան գլուխը զբաղուածներ, անդրդուելի հակառակորդներ եւ հալածողներ: Մտածէ՛ս Պատրիարք առաւ քայլեր, որոնք այս բաժանման ահաւոր պատասխանատուութեան դատապարտութիւնը իր վրայ ծանրացուցին: Անիկա իր իշխանական զօրութիւնը գործածեց վրդովելու, բանտարկելու, իրաւադրկելու, աքսորելու, եկեղեցիէն դուրս ձգելու, փիլոնազրկելու Աւետարանի ճշմարտութեանց հաւատարիմները: Ամենէն վերջը, ահաւոր եւ ապօրինի բանբասանքներով բանադրուած, հօրենական, ընտանեկան բոյնէ, եկեղեցական իրաւունքէ զրկուած, անտանելի վիճակի մը մէջ շարունակել անկարելի էր Բարեպաշտական Միութեան անդամներուն, որոնց թիւը անցեալ տասը տարիներու ընթացքին բազմապատկուած էր Պոլսոյ եւ ներքին դաւառներուն մէջ: Բնական վիճակ մը ստեղծելու համար օժանդակող մարմիններու ձեռք կարկառելու ժամանակը ալ հասած էր: Այդ օժանդակող ձեռքերը միսիոնարական ձեռքերն էին:

Որպէսզի կարենանք ըմբռնել այս օժանդակութեան տարողութիւնը, հարկ է մեզի գիտնալ թէ ի՞նչ է միսիոնարական ձեռնարկ մը: Ոեւէ տեղի մէջ միսիոնարական առաջին պարտականութիւնն է մարդկութեան մեղքը վերցնող խաչեալ

Յիսուս Քրիստոսը քարոզել, այսինքն փրկութեան Աւետարանը: Ասոր անմիջապէս կապուած են լուսաւորութեան համար կազմակերպուած դպրոցները եւ բարեսիրական հաստատութիւնները, հիւանդանոց եւ բարենպաստակ զանազան օժանդակութիւններ:

Պօրտի միսիոնը այս ուղղութեամբ արդէն քայլեր առած էր տասնեակ մը տարիներէ ի վեր Պոլսոյ մէջ եւ անոր շրջակայ տեղերը: Անոնք հայկական վերածնունդին ամենամեծ զարկը տուին: Թուրքիոյ մէջ գտնուած ցեղերուն մէջ մենք թէեւ եղակի դիմք մը կը գրաւէինք որպէս քրիստոնեայ, լուսաւորեալ եւ արդէն ոսկեղարի որդիներ, սակայն որպէս գերեալ, ընկճուած ու բռնադատուած, իրաւազրկուած ազգ մը շատ արժէքներ կորսնցուցած էինք: Ամերիկեան միսիոնը պէտք էր նոր Աւետարան քարոզելու, անիկա միայն օգնեց մեզի զանոնք վերագտնելու: Ամենէն ցոյուն գործը որ եղաւ, էր Ս. Գրոց հրատարակութիւնները գրաբար, հայատառ թուրքերէն (թրքախօսներու համար), հայերէն չախարհաբար (արեւելեան եւ արեւմտեան): Այս գանձն ի ձեռին՝ հայ քրիստոնեան ինքզինքը կը գտնէր ուղղակի լուսոյ աղբիւրին առջեւ եւ ա'լ պէտք էր խղճի առաջնորդներու, որոնց կեանքն ու վարդապետութիւնը արդէն խնդրոյ առարկայ էր: Միսիոնարներ այս դործով հրահրեցին արթնութեան միացող կրակը, որ սկսաւ բռնկեցնել հայկական բոլոր զանդուածը իր ամբողջութեան մէջ:

Անոնք հոգեւոր արթնութեան եւ հոգեւոր գործին զուգընթաց գործերու ալ հող տարին, հիմնելով հիւանդանոցներ: Դեռ մեր մտքին մէջ թարմ են Տոբթ. Փոսթի, Շէփերտներու, Էթէրնսնի, Ըշըրի եւ այլոց յիշատակները, որոնք հազարաւոր հիւանդներու կեանքը ազատած են: Հայ մտքին եւ սրտին զարգացման համար անոնք տուին Կուտէլը, Համլինը, Կոտսէլի ընտանիքը, Րիկզեան մեծ ընտանիքը, Լին, Պարնըմը, Մէքալըմը, Պարթընը, Բէյնոլտը, Ալէնը որոնք անմոռանալի ծառայութիւններ մատուցին Հայութեան անխորաքար: Կարելի՞ է ուրանալ Տաճը, որ իր դրամովն ու անձովը դեռ ծառայութեան մէջ է Սուրբիոյ ուսանող պատանեկութեան համար: Անոնք հիմնեցին գօլէճներ, որպիսին են Ռոպէրթ գօլէճը, 1863ին (հիմա համալսարան), Պէյրութի համալսարանը (հիմնուած 1866ին), Այնթապի գօլէճը (1876ին), Խարբերդի Եփրատ գօլէճը (Արմէնիա 1879ին), Մարգուանի Անաթոլիա գօլէճը (1887ին), Տարսոնի Ս. Պօղոս գօլէճը (1888ին): Լուսաւորութեան

Ի՞նչ ջահեր եղան ասոնք եւ ի՞նչ թանկարժէք որդիներ եւ դատրեր հանեցին Հայոց աշխարհին: Գիտնականներ, Պէշգճեանի, Լեւոնեանի, Նահիկեանի, Մանխաճեանի նման, բրոֆէսորներ, Թէնէքէճեանի, Պուճիգանեաններու, Զէճիգեանի, Մ. Յովհաննէսեանի, Ալեքսանեանի, Թումայեանի, Տաղլեանի, Սողիկեանի նման, բժիշկներ, ղեզադորժներ, փաստաբաններ, եւ այլ բարձր արուեստագէտներ ծնան եւ սնանեցան այդ Հաստատուութիւններուն մէջ, եւ ուղղութիւն տուին Հայ ազգին եւ մտքին: Մոռա՞նք Աստուածաբանականները, Մարգուանի, Մարտինի, Խարբերդի, մանաւանդ Մարաշի, որոնք Աւետարանական եւ նոյն իսկ Առաքելական եկեղեցւոյ հովիւներ եւ հոգեւոր առաջնորդներ տուին, նման Շմաւոնեանի, Պետիկեանի, Փափազեանի, Սինանեանի, Եղոյեանի, Ամիրխանեանի, Զէնանեանի, Գաւաէի, որոնք հոգեւոր դարաշրջաններ բացին Հայութեան մէջ:

Չենք ուղեր մանրամասնորէն յիշել այն թեր-
թերն ու գիւրքերը, որոնցմէ իւրաքանչիւրը իր
լարերաւ գերն ունեցաւ հայ մտքի եւ սրտի մշա-
կոյթին մէջ: Հապա հոգեւոր երգերը՝, եւ անոնց
հոգեւոր արժէքը:

Այս բոլոր հաստատութիւններէն եւ զբաղան արտադրութիւններէն հաւասարադէս օգտուած են նաեւ լուսաւորչականներ, որոնց թիւը հազարներու կը հասնի, որոնք ընդունած հաստատուն նկարագիրներ, ծառայեցին իրենց շրջանային ու հայրենիքին :

Այս ցուցադրուած պղտիկ հորիզոնը պէտք է անդհաճատելի ծառայութիւն մատուցած է մեզի մեզ համոզած ըլլայ թէ, Ամերիկեան միախոնը եւ հայ ազգը միայն երախտագիտական դէպքում- ներով մօտենայու է անոր յիշատակին :

Անոնց գործունէութեամբ աղբը պատակութեամբ չէ: Անոր մէջ գոյութիւն ունեցող հոգեւոր շարժումը միայն ուղղութիւն ընդունած է: Անոնք մեր ազգային կեանքը, հայրենասիրական զգացումները չմեղուցին, հապա գանոնք յղկեցին, ճշմարիտ ազգասէրներ ըլլալու: Եղան թերեւս միօրոնարներ, որոնք աղօտացուցին այդ զգացումները, եղան սակայն ուրիշներ, Նէփի նման, որոնք որպէս Հայ եւ յեղափոխականներ՝ Թուրքերէն հալածուեցան եւ մահու վտանդէն անցան: Եղան սըլխալներ հոգեւոր կամ ազգային, բայց հարիւրամեակի հաշուեյարգարին առջեւ, շահր վնասէն սասնապատիկ, եթէ ոչ հարիւրապատիկ աւելի է: Ասոր համար Աստուծոյ փառք կու տանք: Այսօր

Հարկւր տարիներ անցած են : Գոյութիւն ունի Հաստատանս յց Աւետարանական Եկեղեցին : Հաստատութիւն մը որ յարգանք միայն կը ներշնչէ իր բազմապիսի գործունէութեան թանկարժէք արդիւնքներով :

Պորտը տեսնելով անոր ինքնաբաւ եւ ինքնա-
պահ ըլլալու աստիճան ուժերն ու նւթական կա-
րողութիւնը, անշահախնդրօրէն ետ կը քաշուի
գործի դաշտէն, — ինչպէս կը վալթելէ ճշմարիտ
միտիոնի մը — ձգելով դայն հայ ձեռքերու հո-
գածութեան: Հայ Աւետարանականութիւնը շնոր-
հակալութեամբ ընդունելով այս հարիւրամեակի
նուէրը, որպէս չափահաս եւ գիտակից իր պա-
տասխանատուութեան, ձեռք կ'առնէ գործը: Պիտի
շարունակէ տարածել Աւետարանի լոյսը հայ ի-
րականութեան մէջ, միշտ պահելով երախտագի-
տական քաղցր յիշատակը հանդէպ իր բարերար-
ներուն, բայց պինդ պիտի բռնէ հարիւր տարինե-
րէ ի վեր իր հայրերէն աւանդուած ժառանգը:

Հայ ժողովուրդը, քանի մը սիւնակներով փոր-
ձեցելից ցոյց տալ Հայաստանեայց Աւետարանա-
կան Եկեղեցւոյ գոյութեան ներքին պահանջը եւ
անոր ուժեղ շարժառիթները Հայ իրականութեան
մէջ: Բացատրելինք եւ կրնայինք աւելին խօսիլ Ա-
մերիկեան միսիոնարութեան նախախնամական դե-
րի մասին: Անիկա մեզի համար օժանդակ եղած է
ամէն մարդի մէջ, առանց խտրի եւ անչափախը-
դօրէն: Կը մնայ քու մէջդ քու որդիդ Աւետ. Ե-
կեղեցին, իր հարիւր տարրուան փորձառութեամբ,
առողջ, աշխոյժ եւ փորձուած մեթոտներով:
Ճանչցի՛ր զայն մօտէն: Ճանչցի՛ր այս արժանաւոր
հատուածին մտային, ազգային եւ հոգեկան տե-
սիւքները, որոնցմով ան քու պաշտամունքիդ, տե-
սիւքիդ արդեւք չէ եղած, ընդհակառակն քու զար-
գացմանդ մղում տուած եւ եղած է քու անկեղծ
նեցուկդ: Անիկա քեզի պատիւ բերած է, բռնե-
լով իրեն յատուկ պատուաւոր: Դիրք մը օտար աչ-
քերու առջեւ: Անիկա քու պատուաւոր դիրքիդ մէջ
ճանչցուցած է զքեզ օտար ոքրիստնեայ ազգերու:
Ճանչցի՛ր զայն եւ թօթափէ՛՛ քու անհիմն եւ սխալ
գաղափարներդ իր գոյութեան մասին: Անիկա քու
սրտիդ մէկ հատորն է, կանչուած՝ յիշեցնելու քե-
զի քու փրկութիւնդ եւ յուսաւորելու զքեզ յաւի-
տենական ժառանգութեանդ եւ սրբութեանդ կեան-
քին յաղթական մարդերուն մէջ: Անոր խորթ նա-
յի՛՛ անտեղի է: Սիրէ՛՛ զայն, օգտուէ՛՛ անոր մա-
տուցած աշխատանքի վաստակէն: Անոր քեզի ներ-
կայացուցածը արժէքաւոր է, գիտցի՛՛ր զնահատեւ
զայն:

Յ. Ն. Ղ.

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՐԸ

Գրեց՝ Պատ. Յ. ՀԵԼՎԱՃԵԱՆ

Երիցս անգամ հեռու մեզմէ՝ նոյնիսկ անուղղակի կերպով՝ Հայ Առաքելական (վերջերս՝ Հայաստանեայց Եկեղեցի) եկեղեցին նսեմացնելու զիտաւորութիւնը: Շա՛տ բան կը պարտինք անոր: Կ'աղօթենք անոր համար: Անոր հոգեւոր արթնութիւնը պիտի ուրախացնէր զմեզ:

Սակայն մենք բարեկարգութեան որդեակներ ենք, եւ բարեկարգութիւնը, ո՛չ թէ ԺԶրգ դարու գործ է, այլ անոր իսկութիւնը պէտք է փնտռել Նոր Ուխտի տնտեսութեան մէջ: Բարեկարգութիւնը պահանջ մըն էր, Քրիստոսի եկեղեցւոյն իր նախնական, Աւետարանական զիրքը տալու համար:

Ինչո՞ւ սակայն, հաղիւ հարիւր տարիներ առաջ, մեր պապերը Հայոց եկեղեցիէն բաժնուելու հարկադրանքին առջեւ գտնուեցան: Ի՞նչ դրդապատճառներէ մղուած՝ հիմը դրին Հայ Աւետ. Եկեղեցւոյն: Ի՞նչ է այդ պատուարը՝ որ փոքրամասնութիւն մը կը բաժնէ մեծամասնութենէն:

Այդ պատուարը վարդապետական է:

Որեւէ ուրիշ պատուար՝ բաւարար փաստ մը չէր կրնար համարուիլ, բաժանումը արդարացնելու համար:

Մեր վարդապետութիւնը «մերը» չէ: Եթէ այդպէս ըլլար, ան բնա՛ւ տարբերութիւն պիտի չունենար «Ձեր» եւ «Անոնց» վարդապետութենէն: Ուրեմն մեր տօկմը հիմնուած չէ այսինչ աղանդի, կամ՝ այնինչ աստուածաբանի համոզումներուն վրայ: Աւելի՛ն: Հայաստ. Աւետ. Եկեղեցին հիմնուած չէ, նոյնիսկ, բարեկարգութեան հերոսներուն վրայ, — որքան ալ շատ բան պարտի աւնոց — այլ՝ զանոնք լուսաւորող, զիեցնող, կերտող Գիրքին վրայ, զոր մեր սիրելի լեզուն Աստուածաշունչ կը կոչէ:

Եթէ բաժանման միջուկը ըլլար քինանդորութիւն, չահախնդրութենէ մղեալ բան մը, հարիւր տարի յետոյ, աշխարհի չորս ծագերուն մէջ պիտի չգտնուէին Հայորդիներ, Հարիւրամեակի Յոբելեանը տօնելու համար:

Փորձենք քննել այն զլխաւոր կէտերը, որոնք վարդապետական պատուարը կը կազմեն, եւ որ

Հայ Աւ. Եկեղեցւոյն կու տան՝ իր ինքնայատուկ զիրքը:

X

Ս. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ա. — Հաղորդութիւնը. — Հայ Առաք. Եկեղեցին Ս. Հաղորդութեան խորհուրդը հետեւեալ կերպով կ'ըմբռնէ.

«Հաղորդութիւնն է Ս. խորհուրդ Եկեղեցւոյ սահմանեալ ի Քրիստոսէ, որով ընդ տեսակօք հացի եւ գինւոյ՝ կը հաղորդուինք իսկապէս (ընդգծումը մերն է) մարմնոյ եւ արեան Քրիստոսի:» (1)

«Խորը Եկեղեցիները կ'ընդունին թէ գոյացափոխութիւնը պատարագի միջոցին տեղի կ'ունենայ:» (2)


Հայոց Եկեղեցին կը հաւատայ գոյացփոխութեան վարդապետութեան (թռանսիւպսամսիսմսիսմ): Ըստ այս վարդապետութեան, պատարագի պահուն (Հոռոմ. Եկեղեցւոյն մէջ «առէք կերէք» ի տեսն) հացը եւ գինին կը վերածուին Քրիստոսի իրական մարմնին ու արիւնին: Տառապէս առնելով Տէր Յիսուսի խօսքը թէ «եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք եւ անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար», (Յովհ. Զ. 54) Հայոց Եկեղեցին, գոյացփոխութեան վարդապետութիւնը ընդունելէ յետոյ՝ անխառնափոխօրէն ինկաւ, հաղորդութիւնը քաւութեան միջոց նկատող վարդապետական ուրիշ սխալի մը մէջ:

Յովհ. Զ. 54ը սխալ չհասկնալու համար հարկ է կարգալ նաեւ նոյն զլխու 52րդ համարը. — «... այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինն է, զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար:»

Այս համարը հոգեւոր իմաստ ունի: Քրիստոս իր մարմինը տուաւ աշխարհի կեանքին համար, եւ հաւատքն է այդ կեանքը ունենալու պայմանը:

(1) «Քրիստոսի Կրօնագիտութիւն», Տ. Սահակ Բախ. Սարգիսեան, Կ. Պոլիս, 1878, էջ 479:

(2) «Հայ Առաք. Եկեղեցին եւ իր վարդապետութիւնը», Փարիզ, 1945, էջ 170, Պետրոս Բախ. Գառարեան:



40/10/1906
M. N. GHAZAROSSIAN

[Signature]

PANPÈRE

REVUE MENSUELLE

RED. : H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère, 7

MARSEILLE

(FRANCE)

«Եւ զուր չէք ուզեր ինծի գալ որ կեանքս քանցեմ»
ըսաւ Տէրը, իրենց ծէսերուն եւ աւանդութիւննե-
րուն կառչող, բայց հոգեւոր հարցը մէկ կողմ թո-
ղող Հրէաներուն: Յով. Ե. 40:

Թողունք որ Ս. Գիրքը խօսի. — «Տէր Յիսուս
իր մատնուած գիշերը հաց առաւ, եւ գոհանալով՝
կտրեց ու ըսաւ. Առէք կերէք այս է իմ մարմինս
որ ձեզի համար կը կտրուի, ասիկա ըրէք Զիս յի-
շերու համար, (եւ ո՛չ թէ թողութիւն գտնելու հա-
մար: Յ. Զ.): Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ե-
տեւ առաւ ու ըսաւ. Այս գաւաթը նոր ուխտ է
իմ արիւնշուս, ասիկա ըրէք քանի անգամ որ խը-
մելու ըլլաք, զիս յիշելու համար: Վասն զի քա-
նի անգամ որ այս հացը ուտէք, եւ այս գաւաթը
խմէք, Տէրով մահը կը պատմէք, մինչեւ ինք
գայ»: Ա. Կորնթ. ԺԱ. 23-26:

Հ. Աւետ. Եկեղեցին կը մերժէ գոյափոխու-
թեան վարդապետութիւնը, եւ կը հաւատայ, Ս.
Գրոց վկայութեանց վրայ յենուելով, թէ՛ օրհ-
նուելէ վերջն ալ՝ հացը եւ գինին անփոփոխ կը
մնան: Անոր համար, Ս. Հաղորդութիւնը նոր
Ուխտի ճշմանն է: Այդ ուխտը երկու կողմեր ու-
նի, ինչպէս բոլոր ուխտերը: Աստուած եւ մեղա-
ւորը դէմ առ դէմ են: Աստուած կը խոստանայ
Քրիստոսի արեամբ ներել մեղաւորին, եթէ վեր-
ջինս զղջայ, ապաշխարէ եւ հաւատայ: Մեղաւորին
քաժինն է, այս Ուխտին մէջ, հաւատալ Տէր Յի-
սուս Քրիստոսի յաւիտեանական կեանք ունենալու
համար: Յովհ. Գ. 16: Երբ մեղաւորը հաւատա-
լով, Ուխտին մէջ իր քաժինը կը կատարէ, Աստ-
ուած ալ կը ներէ անոր Տէր Յիսուսի միջոցով: Այն
ատեն մեղաւորը հաղորդ կ'ըլլայ Քրիստոսի — հե-
տեւարար եւ Ս. Հոգւոյն — եւ Անոր փրկածներուն
հետ: Ասկէ յետոյ, քանի անգամ որ այս հացը
ուտէ եւ այս գաւաթը խմէ, Տէրով մահը կը պատ-
մէ, հաւատալով եւ ընդունելով թէ այս մահը իր
փրկութեան համար եղաւ:

Հաղորդութիւնը հաւատացեալին համար էն
նուիրական պահն է: Ո՛չ մէկ պաշտամունքի ըն-
թացքին, Տէրոջը հոգեւոր ցնդալիւքին աշն-
քան զգալի է, որքան Ս. Հաղորդութեան ճաշակ-
ման առթիւ, հաւատացեալներու բազմութեան
մէջ:

Հաղորդութեան սեղանին առջեւ, հաւատաց-
եալը կը վայելէ Տէրը, եւ երկիւղածութեամբ,
անձկութեամբ կը խոնարհի Անոր առջեւ: Այդ նը-
ւիրական պահուն, հաւատացեալը իր աչքերը կը
դարձնէ գալիք Յոյսին, եւ զօրացած հաւատքով կը

սպասէ Փրկչին գալստեան:

Փրկչին մարմնաւոր բացակայութիւնը չի
տրամեցներ զինք, որովհետեւ խոստացեալ Ս.
Հոգւոյն մխրթանութիւնը ունի իր սրտին մէջ:

Բ. — Պատարագը. — Պատարագը ոչ միայն ըն-
դունուած է Հայոց Եկեղեցւոյն կողմէ, այլ նաեւ
գլխաւոր տեղը կը գրաւէ իր Ս. Խորհուրդներուն
մէջ: Խորհրդին մէջ, ոչ-Աւետարանական Եկեղեցի-
ներուն համար պատարագը է՛ն նուիրական բանն
է երկրի վրայ: Քրիստոս խաչին վրայ պատարագ-
ուեցաւ, սակայն, ըստ այդ եկեղեցիներուն, պա-
տարագը կը վերարտադրէ Քրիստոսի փրկագոր-
ծութիւնը: Ուրեմն անոր մասնակցիլ պէտք է, Քր-
իստոսի մարմինը եւ արիւնը ընդունելու համար:

Ս. Գրոց համար պատարագը կատարուած բան
մըն է: Եբր. Է. 26-27: «Բայց Քրիստոս մէկ զոհ
մատուցանելով մեղքերու համար, մշտնջենաւորա-
պէս Աստուծոյ աջ կողմը նստաւ: Վասնզի մէկ պա-
տարագով մշտնջենաւորապէս կատարեց սրբուած-
ները: Եբր. Ժ. 11-14: Նոյնպէս Քրիստոս մէկ
անգամ պատարագ մատուցուեցաւ, շատերուն
մեղքերը վերցնելու համար: Եբր. Թ. 28, Ժ. 10:

Հետեւաբար ձեռով եւ խորքով պատարագը
վերցուած է Հայ Աւետ. Եկեղեցւոյ պաշտամունք-
ներէն:

Գ. — Մկրտութիւնը. — Ահաւասիկ Մկրտու-
թիւնը Հայոց Եկեղեցւոյն համար. —

«Մկրտութիւնն է սրբարար խորհուրդ Եկե-
ղեցւոյ՝ սահմանեալ ի Քրիստոս Յիսուսէ, նախա-
ծնողաց սիրեալ մեղքն սրբուելու, եւ ի Ս. Հոգ-
ւոյն՝ հոգեւոր սուրբ եւ նորագ կեանքով մը վե-
րբարին ծնանելու համար (1): (Ընդգծումը մերն
է):

Հ. Աւետ. Եկեղեցւոյն համար Մկրտութիւնը
հեռու է նման բան մը ըլլալէ:

Ս. Գրոց համար Մկրտութիւնը ո՛չ «նախա-
ծնողաց սերեալ մեղքէ սրբուիլ, եւ ոչ ալ ի Հոգ-
ւոյն Սրբոյ՝ Հոգեւոր Սուրբ եւ նորոգ կեանքով
մը վեցտին ծնանիլ» է: Նոր Կտակարանի մէջ,
վերստին ծննդեան պայմանն է հաւատքը առ Քր-
իստոս: Մկրտութեան նպատակը չէ մարդուն
մարմնին հետ շաղախուած նախածնողաց մեղքէն
սրբել, քանի որ մարմնոյն արտաքին մասին հետ
զործ ունեցող արարողութիւն մըն է: Մկրտութիւ-
նը վերստին ծնունդ չէ: Հոս է որ վարդապետա-
կան ահաւոր խրամատ մը կը բացուի: Առաք. Ե-

(1) Գննի. Կրօն., Ս. քահ. Սարգիսեան,
Էջ՝ 450:

կեղեցիքն կը հաւատայ թէ՛ մկրտուած մանուկը վերստին ծնած է: Մինչդեռ վերստին ծննդեան վարդապետութիւնը եւ անհրաժեշտութիւնը Յիսուսի կողմէ Իսրայէլի մէջ վարդապետ եղող ծերունիի մը քարոզուեցաւ (Յովհ. Գ. 1-10):

Վերստին ծնունդը Ս. Հոգւոյն գործն է: Ասիկա կարելի չէ պարտադրել մէկուն որեւէ արարողութեամբ: Աստուծոյ խօսքը լսող, Ս. Հոգւոյն հնազանդող եւ Տէր Յիսուսը իրեւ իր անձնական փրկիչը ընդունող հոգին վերստին կը ծնի, եւ կը մկրտուի ջուրով: Ուրեմն, Ս. Գրոց մէջ Մկրտութիւնը վկայութիւն մըն է վերստին ծնունդի, եւ ոչ թէ պայման կամ միջոց փրկութեան: (Գործք. Բ. 38, Ը. 36-38, եւայլն): Մկրտութիւնը հաւատքով Բրիստոսի հետ թաղուելն ու վերակենդանանալն է: Հռովմ. Զ. 3:

Մեղաւորը դարձի գալէ, մկրտուելէ վերջն ալ, ինքն իր մէջ կը մնայ մեղաւոր: Մեղաւորը կ'արգարանայ Բրիստոսով, սակայն այդ արտօնութիւնը ենթակայական չէ (սիւլվէֆթիֆ), այլ Բրիստոսի արդարութիւնն է: Բրիստոսը ընդունելէ յետոյ միայն մեղաւորը ընդունակ կ'ըլլայ սրբութեան պտուղ բերելու հոգւով սրտով: (Եփես. Բ. 1-10, Ա. Կորն. ԺԲ. 13, եւայլն): (*)

Դ. Սրբոց բարեխօսութիւնը եւ Հոգեհանգիստ. — Ս. քահ. Սիմոնեան, իր «Բննակ. Կրօնագիրտութեան մէջ (1), սուրբերու բարեխօսութեան տեսութիւնը պաշտպանելով կ'ըսէ թէ՛ ... Պօղոս առաքեալ աղօթք կը խնդրէ Հռովմի հաւատացեալներէն (Հռովմ. ԺԵ. 30-32) եւ ասկէ կը հետեւցնէ թէ մեռնող եւ երկինք դացող սրբոց բարեխօսութիւնը թելադրուած է Ս. Գրոց մէջ:

Մենք ի սրտէ կը հաւատանք թէ բարեխօսական աղօթքը թելադրուած է Ս. Գրոց մէջ (Ա. Թես. Ե. 25, Բ. Թես. Գ. 1, Եփես. Զ. 19 եւայլն), սակայն Անոր մէջ ոեւէ տեղ թալադրուած չէ մեռնող սուրբերուն բարեխօսութիւնը խնդրել: Մեզի՞ ողջերուս՝ տրուած չէ անդենականի մէջ եղող ո՛չ սուրբերուն եւ ոչ ալ հրեշտակներուն հետ յարաբերելու մենաշնորհը: Մեր Յաւիտենական քահանայապետը երկինքն է, եւ կը բարեխօսէ իրեններուն համար, որոնք տակաւին երկրի վրայ են: (Ա. Յովհ. Բ. 1-2, Երբ. Է. 25 Յովհ. ԺԷ. 15):

(*) Հայ Աւետ. Եկեղեցիին մեծամասնութիւնը կ'ընդունի եւ կը կատարէ նաեւ մանկաւնց մկրտութիւնը, իբր կանխահոգ շնորհի մշակմբ. — Ծնթ. Խմբ.:

(1) Տես էջ 567:

Հ. Աւ. Եկեղեցին կը մերժէ նաեւ մեռնող հոգիներուն համար հոգեհանգիստ թելադրող վարդապետութիւնը, որ, դժբախտաբար, Հայոց Եկեղեցւոյ վարդապետութեան կարեւոր կէտերէն մին է:

«... Ահա թէ ինչո՞ւ մեզմէ զատուած սիրելիներու հոգիներուն համար կ'ընենք աղօթքներ, կը խնդրենք սրբոց բարեխօսութիւնը, կը կատարենք հոգեհանգիստներ, հոգեհաշեր՝ աղքատաց, վշտացելոց, նուիրատուութիւններ եկեղեցիներու, անկեղանոցներու, հայցելով Աստուծոյ բարեգիտութիւնը վերջին դատաստանին օրուան համար», կը գրէ Պետրոս քահ. Գասարեան» (1):

Մենք կը հաւատանք թէ ասդենականի մէջ կատարուող ոեւէ արարողութիւն կամ ելոյթ չի կըրնար անդենականի մէջ եղող հոգիի մը վիճակը բարեփոխել: Մարդիկ հոս է որ պարտին տալ կեանքը կամ մահը, երկինքը կամ դժոխքը, սատանան կամ փրկիչ Յիսուսը ընտրելու որոշումը, քանզի «մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ, ու անկէ ետք դատաստան (Երբ. Ժ. 27):

Ե. — Մեղաց Խոստովանութիւնը. — Ինչքան խօսուած ու գրուած է խոստովանութեան եւ անոր անպատում դայթակղութիւններուն մասին, մանաւանդ Հռովմէական եկեղեցւոյն նկատմամբ:

Տեսնենք Հայոց Եկեղեցւոյն դիրքը այս կէտին մէջ ալ: — «Եկեղեցական աւանդութիւնէն եւ պատմութենէն մեզի յայտնի է, թէ խոստովանանքը կը կատարուէր բոլոր հաւատացեալներու ներկայութեանը, երբ անոնք ժողովք կ'ըլլային: Գանի մը դարերու փորձառութիւնը ցոյց տուած էր թէ վերոյիշեալ ձեւը շատ մը անկարգութիւններու եւ անախորժութիւններու պատճառ կը հանդիսանար, գայթակղութեան մատնելով հաւատացեալներու բազմութիւնը: Արդ, Եկեղեցւոյ Ս. Հայրերը Գ. եւ Դ. դարերէն սկսեալ, նկատի ունենալով ընկերային կեանքի պայմաններուն յեղաշրջումը, միջավայրերու ազդեցութիւնը, նորադարձներու մտայնութիւնը, ընդունեցին առանձնակի խոստովանութեան ձեւը, որ կը շարունակուի մինչեւ այսօր: Բայց ան շատ կորսնցուցած է իր առաջնական լիարժեք, եւ այն բոլոր ազդեցութիւն մօտ, ու դարձած լոկ ձեւակերպութիւն մը շատերուն համար:» (1) Արժ. հեղինակը բաղդատաւանը ը-

(1) Հայ Առաք. Եկեղ. եւ իր վարդ., էջ 200:

(1) «Հայ Առաք. Եկեղ. եւ իր վարդ.», Գասարեան, էջ 263:

ներով Հայոց եւ Լատին Եկեղեցիներու խոստովանանքի ձեւերուն, կ'ըսէ թէ՝ վարդապետական տեսակէտով որեւէ տարբերութիւն գոյութիւն չունի, այլ միայն ձեւն է որ կը տարբերի, եւ կ'աւելցնէ. «Մեր կրօնաւորներն անոնցինն պէս մանրամասն հարցաքննութեամբ չեն զբաղիր, այլ Աստուծոյ եւ մեղաւորին միջեւ իրենց միջնորդի դերին մէջ կը մնան լուկ: (Ընդգծումը մերն է: Յ. Հ.):

Իսկ Ս. Գիրքը կ'ըսէ. — Մէկ միջնորդ կայ Աստուծոյ եւ մարդոց միջեւ, Քրիստոս Յիսուս մարդը: Ա. Տիմ. Բ. 5, մէկ քանամայնապետ՝ Աստուծոյ Որդին. Եբր. Դ. 14:

Մեղքը, նախ Աստուծոյ դէմ գործուած ապստամբութիւն մըն է, հետեւաբար մեղաւորը նախ պարտի զայն Աստուծոյ խոստովանել եւ թողութիւն գտնել Փրկչին արիւնով: (Ա. Յովհ. Ա. 9): Յետոյ՝ ի հարկին, պէտք է խոստովանուի անոր՝ որու դէմ գործուած է, եւ պէտք է հատուցուի: Տարբեր պարագայ մըն է «Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք» (Յակ. Ե. 16). խոնարհութեան եւ սրբութեան արգիւնք է, եւ յաճախ օգտակար:

Նոր Կտակարանի մէջ առաքեալներ երբեք միջնորդի դերը չեն կատարեր մեղաց խոստովանութեան մէջ:

Դժբախտաբար, մանաւանդ կաթոլիկ եկեղեցւոյն մէջ, խոստովանութիւնը ստացած է սովորական հանգամանք մը: Մինչդեռ Ս. Գրոց համար աւելի խորունկ բան մըն է ան, Աստուծոյ հետ խղուած յարաբերութեան վերահաստատուիլը, անառակ որդւոյն յուսահատ վերադարձն է դէպի տուն, որ իր մէջ մեքենայական կամ արոշեստանէն ունէ նշոյլ չունի:

2. Աւանդութիւնը. —

Աւետ. եկեղեցին եւ Հայոց եկեղեցին վարդապետական հակոտնեայ դիրքերու վրայ դնող կէտ մըն է աւանդութիւնը:

Վերջինը կը հաւատայ թէ Աստուծոյ գրաւոր յայտնութենէն (Ս. Գիրքէն) զատ կան նաեւ անդիր աւանդութիւններ, որոնք, բերնէ բերան, սերունդէ սերունդ, մեզի հասած են, որոնք պարտինք ընդունել նոյն անվերապահութեամբ՝ ինչպէս կ'ընդունինք Աստուածաշունչը:

Դարձեալ, արժ. Ս. քհնյ. Սիմոնեան կը գրէ (2) «Աւանդութիւնը Աստուածային յայտնութեան ամբողջացուցիչ մէկ մասն է», եւ կ'աւելցնէ թէ՝ Ս. Գրոց մէջ գտնուող դժուարիմաց հատուածները բացատրելու համար աւանդութիւնը անհրա-

(2) Նոյն, էջ 375:

ժեշտ է: Աւ. եկեղեցին կը մերժէ Աստուածաշունչի հեղինակութիւնը կացինահարող այս տեսութիւնը:

Հայոց եկեղեցին կը քննադատէ կաթոլիկ եկեղեցւոյ այն տեսութիւնը, ըստ որուն, Տէր Յիսուս Պետրոսի վրայ հիմնած է Եկեղեցին, եւ թէ առաքեալը իրեն յաջորդ նշանակած է Պապը, Աստուծոյ ներկայացուցիչը երկրի վրայ: Սակայն չպէտք է մոռնալ որ կաթոլիկ եկեղեցին իր ճարձատող եւ անհիմն տեսութիւնը պաշտպանելու համար, աւելի կը կառչի աւանդութեան, քան թէ Ս. Գրոց ճշմարտութիւններուն վրայ, որուն մէջ քնաւ ըսուած չէ թէ՝ Պետրոս առաքեալը ըլլար ենթադրեալ անդրանիկ Պապը:

Եթէ աւանդութիւնը «Աստուածային Յայտնութեան ամբողջացուցիչ մէկ մասն ըլլար, Տէր Յիսուս պիտի յայտնէր իր աշակերտներուն, սակայն, ընդհակառակը, ան կը զգուշացնէ զանոնք ամէն շնորհով:

Պօղոս առաքեալ, Աւետարանը ընդունած, սակայն հրեայ սուտ վարդապետներու կողմէ մոլորած Գաղատացիներուն կ'ըսէ. «Եթէ մենք, կամ երկինքէն հրեշտակ մը գայ, եւ աւետարանէ Ձեզի անկէ ուրիշ՝ զոր մենք աւետարանեցինք Ձեզի, նզովեալ ըլլայ: (Գաղ. Ա. 8):

Ամէն աւանդութիւն որ Ս. Գրոց համապատասխան չէ, կը մերժուի հայ Աւետ. եկեղեցւոյ կողմէ: Ս. Գիրքը չէ որ պիտի ենթարկուի աւանդութեան, այլ աւանդութիւնն է որ պարտի ենթարկուիլ Ս. Գրոց:

Կան նաեւ նշխարքի, միւռոնի, ջրօրհնէքի, աղօրհնէքի ծիսակատարութիւնները, որոնց վրայն կ'անցնինք:

Ահաւասիկ մի քանի գլխաւոր կէտեր, որոնք վարդապետական պատուարը կը կազմեն երկու եկեղեցիներու միջեւ, եւ որ կ'արդարացնեն մեր պատկերուն Հայոց եկեղեցիէն բաժնուելու եւ մեր ազգին մէջ Աւետարանական եկեղեցի մը կազմելու քայլը: Այս պարագան չի նսեմացներ մայր եկեղեցին: Մենք մեր սրտերուն վրայ կը կրենք Լուսաւորիչները եւ Շնորհալիները, որոնց հիմնած եկեղեցիէն շատ հեռացած էր ԺԹ. դարուն Հայոց եկեղեցին:

Համոզուած ենք թէ հայ Աւետարանական եկեղեցին մասնաւոր կոչում մը ունի մեր ազգին մէջ՝ հայրենիքէն ներս թէ դուրս՝ Աւետարանը քարոզել:

Այդ կոչման խորունկ գիտակցութիւնը պարտինք պահել, մինչեւ Փրկչին երկրորդ գալուստը: Արժանապատիւ հեղինակը բաղդատականը ը-

ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԱԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գրեց՝ Պատ. Գ. ՍԻՍԼԵԱՆ

Հայ Աւետարանականութեան պատմութիւնը աւելոր ծերունիի մը պատկառելի տարիները չոնի: Հարիւրամեակ մը միայն, քանի մը էջեր պատմութեան... Բայց եւ այնպէս, որքա՛ն ճոխ եւ խօսուն հոգեւոր օրհնութիւններով եւ յաղթանակներով:

Երբ կը նկատենք այս կարճ ժամանակամիջոցին անոր տարած յաղթանակները ազգային կեանքի բոլոր արտայայտութիւններուն մէջ, երբ անաչառաբար կը սերտենք մարդիկ եւ դէպքեր որ ուղղակի կամ անուղղակի կերպով անկէ ծնունդ առած կամ անով շարունակուած են, նամանաւանդ, երբ աչքի առջեւ ունենանք անոր այսօրուան ցուցուցած կենսունակութիւնը, եւ ինչո՞ւ չէ, քանի որ բառը օրուան կարդախօսն է, անոր տիեալիզմը, չենք կրնար չյիշել Պօղոս առաքեալին խօսքերը:— «Իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, Հըրեաներուն գայթակղութիւն, ու Յոյներուն յիմարութիւն, բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն եւ թէ՛ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:»

19րդ դարուն սկզբնական շրջանին փոքր Ասիոյ մէջ երեւցած աւետարանական շարժումը ուրիշ նպատակ չունէր եթէ ոչ Քրիստոսը եւ Աւետարանը տանիլ հոն բնակող Հրեաներուն, Յոյներուն եւ Հայերուն: Միախնարները խոստովանեցան, ժամանակն ալ հաստատեց որ այդ երեքէն միայն Հայերուն համար է որ Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը՝ եղաւ:

Այսու ամենայնիւ, անուրանալի իրականութիւն մըն է սա որ մեր մէջ այս շարժումը ընդհանրապէս չափաւոր մնաց: Քիչ անգամ անիկա ամբոխավար եւ անզուսպ ուժի մը խրախուսիչ երեւոյթը ունեցաւ: Եթէ հարկ ըլլար բազդատութիւնով խօսիլ, կրնանք ըսել որ հոս հեռու ենք, չատ հեռու ենք 16րդ դարու Գերմանիոյ եւ այլ եւրոպական երկիրներու Աւետ. շարժումէն: Հոն բաղմունքները տեսակ մը զերմարդկային անբաղադրելի ուժէն բռնուած, հոգեւոր, բարոյական, ընկերական եւ մտաւորական այնպիսի բարձր տեսիլքներ եւ վերելքներ ունեցան որ Եւրոպա-

յի պատմութիւնը հիմնովին յեղաշրջեցաւ:

Շիտակ է որ հոս բազդատութեան ոչ մէկ եղբայր: Եւրոպան, փոքր Ասիան չէր, ոչ ալ անոր քաղաքական եւ մտաւորական հանգամանքները մեր քաղաքական եւ մտաւորական հանգամանքները: Մեզի պակսեցաւ Մէլանկթոնի նման ներհուն տրամաբան մը, եւ Լուտէրի նման աննման հոգեբան — ամբոխավար մը: Սակայն Աւետարանականութեան յաղթանակները մեր մէջ աւելի անշուք, աւելի սահմանափակ ըլլալուն համար նուազ պանծալի չեղան: Հոս, ինչպէս հոն, միեւնոյն Աստուծոյ խօսքը, միեւնոյն կենսատու եւ կենդանարար Աւետարանը, իր անհամար եւ սքանչելի օրհնութիւնները սիրեց միտքերուն եւ սիրտերուն մէջ:

Աւետարանականութիւնը մեր մէջ մէկէ աւելի ուղղութիւններով դործեց, ուստի անոր յաղթանակները բազմատեսակ եղան:

1.— Առաջին իրական եւ մնայուն յաղթանակները հոգեւոր կեանքի յաղթանակները եղան: Ասիկա կարելի եղաւ շնորհիւ՝ ա) Սուրբ Գիրքը հասարակ ժողովուրդին դիւրամատչելի դարձնելով, բ) Քրիստոսը յայտնելով այնպէս ինչպէս որ է Աւետարաններուն մէջ:

Ա.— Իր ծննդեան առաջին օրէն իսկ Աւետարանականութիւնը մասնաւոր կերպով շեշտեց Սուրբ Գիրքին ընթերցումը: Ասիկա Աւետարանականութեան անկորնչելի պատիւն է: Սուրբ Գիրքը գրաբարէն աշխարհաբարի թարգմանուեցաւ: Հազարաւոր օրինակներ տպուեցան եւ ցրուեցան ժողովուրդին, յաճախ ձրի: Սուրբ Գիրքը դադրեցաւ դոյ գիրք մը ըլլալէ: Անիկա ամենօրեայ հոգեւոր հացը դարձաւ հոգիներուն: Մանաւանդ անիկա տեսակ մը հոգեւոր եւ բարոյական հայելի եղաւ որ մարդիկ իրենք զիրենք ենթարկեցին խորունկ եւ ազատարար ինքնաքննութեան մը:

Բ.— Սբ. Գիրքը առաջնորդեց Քրիստոսի: Իրենց սորված եւ ենթադրած Քրիստոսէն տարբեր Քրիստոս մը: Այլեւս պէտք չկար մոմերու եւ սուրբերու այս իրական Քրիստոսին հաննելու համար: Քրիստոս եղաւ մեր փրկիչը եւ եղբայրը:

2.— Աւետարանականութեան յաղթանակները

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Գրեց՝ Պատ. Մ. ՎԵՔԻԼԵԱՆ

Հայ ազգի կեանքին մէջ, Հայ Աւետարանական Եկեղեցին կանչուած է անհրաժեշտօրէն իր կենսատու դերը կատարելու: Անոր չգոյութիւնը այնպիսի մեծ կորուստ մը պիտի ըլլար, որ անկարելի էր դարձանել ոչ մէկ կազմակերպութիւնով, քանի որ անոր կոչումը երկնային է:

Ան շարունակութիւնն է առաքեալներու օրէն իսկ Յիսուսի վրայ հիմնուած ճշմարիտ Եկեղեցւոյն:

Հայ Աւետ. եկեղեցին ընդունած ըլլալով միայն Աստուածաշունչի հեղինակութիւնը, ինքզինք ուրախութեամբ կ'ենթարկէ անոր իշխանութեան, սնանելով անոր ներկայացուցած կենաց հացէն, խմելով անոր իմաստութեան եւ ճշմարտութեան անսպառ աղբիւրէն եւ այս պատճառաւ իսկ տեղեկացած ըլլալով անոր մէջ գտնուող մարդկային յղացումով անըմբռնելի գանձերուն՝ ամէն բանէ վեր կը դասէ զայն, դարերու ընթացքին մարդոց գիտական, բարոյական, փիլիսոփայական բոլոր գրուածքները անոր մէկ նախադասութեան պարունակութիւնն անգամ չունին իրեն համար, վասնզի յաւիտեանապէս խորունկ է ան իր սքանչելի հեղինակին նման:

Աստուածաշունչի լոյսով առաջնորդուած, Հայ Աւետ. եկեղեցին իր առջեւ ունենալով ճշմարիտ Եկեղեցւոյ՝ աշխինքն Քրիստոսի մարմնին

բացայայտ են նաեւ մեր ազգային բարոյական կեանքին արտայայտութիւններուն մէջ: Հոս կատարեալ յեղաշրջում մը տեղի ունեցաւ: Ըճմարիտը, Բարին եւ Գեղեցիկը նոր արժէքներ ստացան: Սուրբ, չարը եւ խարդախը տեսակ մը համարակալութեան (տաւալութեան) ենթարկուեցան: Այս ուղղութիւնով մասնաւոր դասախօսութիւններ տըրուեցան:

3.— Մտաւորական տեսակէտով ալ Աւետարանականութիւնը մեծ ծառայութիւններ մատուց մեր ազգին: Ամերիկայէն եկող միսիոնարները տեսակ մը կամուրջներ եղան մեզ նոր աշխարհին հետ կապող: Ամէն մի Ամերիկեան կրթական հաստատութիւն մեր երկրին մէջ՝ մեր երիտասարդներուն առջեւ նոր եւ աւելի լայն հորիզոններ բացաւ: Անոնք որ Ամերիկեան միսիոնարները կը քննադատեն, պէտք ունին պատմութիւնը աւելի սերտօրէն ուսումնասիրելու: Մեր գրողներէն շատ

վեհ տեսիլն ու սուրբ կոչումը, հասարակական եւ հաւաքական ծաւրերու մէջ, չուեր փաթթուած պահել, այն անձնական մեղքերը՝ որոնք չբուժուած, ներքին ծածուկ մեղքերու նման, կրնան քայքայել ամբողջ եկեղեցական մարմինը, եւ այս պատճառաւ իսկ ան կը խօսի Աւետարանի սուրբ լեզուով ուղղակի անձին եւ սրտին, մատը դնելով վարակիչ վէրքին վրայ, եւ ցուցնելով միեւնոյն ժամանակ միակ դարմանը, խոնարհութեամբ, Քրիստոսի արեամբ, շնորհքով փրկութիւնը, եւ կը կերակրէ կենաց Բանին անխարդախ ու բանական կաթովը վերստին ծնածները, որոնք Սուրբ Հոգւոյն խաղաղութեան կապովը իբր Քրիստոսի մարմնին անդամները իրարու կապուած, կը վայելէն թէ փառաց Տէրը եւ թէ անով գիրար՝ ըլլալով Քրիստոսին մէջ փրկութիւնը անձնապէս գիտցող նոր ստեղծուածներ:

Ահա այս գիտակից եւ լուսաւորուած կեանքէն կը բղխին Հայ Աւետ. Եկեղեցւոյ Սր. Գրոցին տեսիլքով ըմբռնուած բարեպաշտական հետեւեալ յատկանիշները:

1.— Կիրակի օրը տուրք պահելը.— Այլեւս հաւատացեալը ոչ թէ Կիրակին իբր օրէնք եւ պարտականութիւն միայն կը պահէ, հապա շաբթուան օրերուն մէջ իր ամենաուրախալի օրը կ'ըլլայ ան. վասնզի այդ օրը բոլորովին նուիրուած հոգեւոր

տերուն գործը անգլիական եւ ամերիկեան զրաւանութեան դրոշմը կը կրեն:

Ասոնց բոլորը աւետարանականութեան մեր մէջ տարած յաղթանակներուն մէկ հակիրճ եւ շատ ազատ պատկերն է: Տարբեր ալ չէր կրնար ըլլալ: Հոգեւոր աշխարհը ուրիշ աշխարհ մըն է: Անոր անձերուն եւ արժէքներուն վրայ ունեցած դատողութիւնը մեր նիւթական աշխարհին դատողութեանէն տարբեր է: Անոր օրէնքները անըմբռնելի են, անոր գործելակերպը անբացատրելի է:

Մենք թուեցինք միայն այն յաղթանակները որ մեր մարդկային աչքերով տեսանք: Ո՞վ պիտի կրնայ պատմել միւս յաղթանակները, այդ բոլոր անչուկ եւ անտեսանելի յաղթանակները, որոնք հոգիներուն խորը կը կատարուին, հոգին տակ թաղուած հունտի մը նման, եւ որոնց մեծնալուն եւ աճելուն դադարները միայն Տէրը ինքը գիտէ:

ՍԷՆՔ ԵՔԻԼԵՆ

Գ. ՄԻՍԼԵԱՆ

բաներու, ազատ աշխարհային թոհ ու բոհի կաշկանդումներէն, պիտի կրնայ վայելել աւելի մեծ օրհնութիւնով, թէ՛ անձնապէս եւ թէ՛ պաշտամունքներու ընթացքին Տէրը սիրողներուն հետ, շնորհաց աղբիւրը զԱստուած:

2.— Ժողովներ.— Հայ Աւետ. Եկեղեցին Աստուծոյ ճշմարիտ խօսքէն ուղղութիւն ստանալով, Սբ. Հոգւոյն առաջնորդութեամբ, ժողովները ուրախութեան եւ ցնծութեան միջոց մը կ'ընէ ներկաներուն, որոնք կը զգան թէ հօր մը շուրջ հաւաքուած պիտի լսեն զԱստուած. իր խօսքը լսելով, անոր հետ պիտի խօսին աղօթելով իրենց պէտքերուն համեմատ, եւ ազատ ընթացք տալով բարեպաշտական սբ. զգացումներուն եւ գոհացում պիտի դառնան:

Մեր հոգեւոր եւ այլ կարիքները միայն Սբ. Հոգին գիտնալով, կրնայ ներշնչել խորհուրդներն ու խօսքերը եւ առաջնորդել աղօթքով մեր խնդրանքը ներկայացնելու մեր Երկնաւոր Հօրը, եւ փառաբանութեան զգացումներով լեցնելով զմեզ: Այդ ազատութեան, Հօր եւ որդւոյ սիրոյ յարաբերութեան մթնոլորտին մէջ, հաւատացեալը՝ Աստուածապաշտութիւնը Աստուծոյ իրեն տրուած շնորհ մը, փառք մը եւ պատիւ մը կը նկատէ, եւ քանի որ Աստուծոյ միակ նպատակը զինք հոգւով եւ ճշմարտութեամբ պաշտողներուն երջանկութիւնն է, հաւատացեալը սիրայօժար եւ ուրախութեամբ կը յաճախէ ժողովներուն, վայելելու համար Սբ. Հոգւոյն ստեղծած պաշտամունքի եւ սիրոյ մթնոլորտը:

3.— Ընտանեկան պաշտամունք.— Ինչ քաղցր ժամ. ընտանեկան յարկը կը դառնայ խորան մը, երբ ընտանիքի բոլոր անդամները հաւաքուած Աստուծոյ խօսքին շուրջ, մտիկ կ'ընեն յարգանքով, զիրենք սիրող, իրենց պիտոյքները հոգացող ամենակարող Աստուածը, իրենց Երկնաւոր գթառատ Հայրը: Եւ այդ իսկ կ'ըլլայ ընտանեկան յարկը քաղցրացնող, դժուարութիւնները հարթող, իրարու հանդէպ սէրը արծարծող, մանուկը խօսքին անխարդախ կաթովը մեծցնող միջոցը. եւ այդտեղէն կը սկսի մանկան հոգեւոր անձնաւորութեան կազմուիլը, օր մը ծնանելու համար հոգեւոր աշխարհին մէջ, միանալով Աստուծոյ ընտանիքին, որ կը կոչուի նաեւ Աստուծոյ թագաւորութիւն:

Հինգերորդ դարու հայ ոսկեդարեան ցեղային այդ բարեպաշտական յատկանիշը, Աստուծոյ պարգեւը եւ պատուէրը, որ դարերու բարբարոս դէպ-

քերուն, դիւային անհաւատութեան, հեշտասիրութեան եւ անտարբերութեան փլատակներուն տակ կը հեծեր, Հայ Աւետ. Եկեղեցին վեր հանելով՝ վերականգնեց հայ ընտանիքին խորանը, ազատելով զայն ահաւոր անկումէ:

4.— Կիրակնօրեայ դպրոց.— Ուր պիտի կըրթուի հոգեւորապէս հայ մանուկը, նոր սերունդը, որ ապագան է ազգին: Մանուկը ոչ թէ միայն պիտի կերտուի մտաւոր եւ բարոյական կերպով, հապա հոգեւոր այնպիսի առաքելութիւններով, որոնց առջեւ ամէն ինչ կ'աղօտանայ: Մանուկը, որ ճերմակ թուղթ մըն է, որուն ապագայ կեանքը կը կազմուի իր մանկական եւ պատանեկան օրերուն մէջ կրած առօրեայ ազդեցութիւններէն եւ տպաւորութիւններէն, եւ որ դիւրութեամբ կ'ընդունի որեւէ դրոշմ, Հայ Աւետ. Եկեղեցին Կիր. դպրոցներուն միջոցաւ կը կրթուի, ճանչնալու զԱյն, որ Արարիչն է յաւիտենական տիեզերքին եւ աղբիւրն ամէն բարութեանց եւ գեղեցկութեանց, ու երանելի կեանքին ու անճառելի սիրոյն, որուն ազդեցութեան տակ մեծցող մանուկները պիտի ըլլան ոչ թէ միայն բարձրագոյն աստիճանի բարոյական անձինք, պահելով այդ պատճառաւ իսկ իրենց մարմնային կորովը, այլ անկէ աւելին, փառաց ի փառս Քրիստոսի սբ. պատկերին փոխուելով, պիտի ըլլան ազգին պահապան հրեշտակները, պահելու համար զայն անկումէ, ապականութենէ, քայքայումէ, ըլլալով նաեւ ազգին ազն ու լոյսը: Աւելին, պիտի ըլլան նաեւ Քրիստոսի կենսատու վարդապետութեան, սիրոյ, եղբայրսիրութեան եւ մարդասիրութեան առաքեալները, եւ Աստուծոյ մաքուր սիրովը լեցուած, երկնային իմաստութեամբ օժտուած, մարդկային կեանքին սպառնացող իրական վտանգին, մեղքին տեղեակ, պիտի սիրեն նաեւ մարդկային ընտանիքի բոլոր անդամները անխտրաբար, փշրելով ցեղապաշտութեան պիղծ շղթաները՝ որոնք պատուհաս եղած են շարունակ մարդկութեան, եւ ազատուած մեղքի գրութենէն, տեղեակ իրական ազատութեան, պիտի ըլլան Քրիստոսի սիրոյ վարդապետութեան առաքեալները զիրենք շրջապատողներուն մէջ եւ նոյնիսկ հեռուները, ըլլալով նաեւ մաքուր եւ անարտա Աստուածապաշտութեան, իմաստուն ու կենդանի օրինակները, մեր երկնաւոր Հօրը փառքին համար՝ որուն կը վայելէ փառք ու պատիւ եւ իշխանութիւն յաւիտենա յաւիտենից: Ամէն:

Ս. Անթուան-Մարտիլ

Մ. Վեբիկեան

ԱՅՆԹԱՊԻ ԱՐԹՆՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ Յ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

«Այնթապի մի՞ծ արթնութիւնը», որ պէտք է զանազանել նմանօրինակ՝ բայց աւելի փոքր շարժումներէ՝ տեղի ունեցաւ 1903ի սկիզբը:

Այս արթնութիւնը Այնթապի Կ. Թ. Գոլէճին մէջ սկսաւ, յօդուածագիրը այն ատեն Գոլէճի երիցապոյն կարգի աշակերտներէն էր եւ ականատես եղած է անոր: Տարւոյ առաջին կամ երրորդ շաբաթն էր, այդ շաբթուն ձմարանիս մէջ ամէն առտու մասնաւոր ժողով տեղի ունեցած էր եւ շաբաթ օր արձակուրդէն ետք. Գոլէճի ընթերցասրահին մէջ ալ նորէն ժողով մը եղաւ, որուն առաջնորդեց Վեր. Մ. Կ. Փափաղեան: Անոր բնաբանը ի՞նչ էր եւ ի՞նչ խօսեցաւ՝ չեմ յիշեր, սակայն, դեռ մտքիս մէջ են իր վերջին մի քանի խօսքերը. «Հիմա այս ժողովի առաջնորդութիւնը Սուրբ Հոգիին կը յանձնեմ» ըսաւ, եւ բեմի վրայի աթոռը պարապ թողուց ու եկաւ եւ առջեւի նստարաններէն մէկուն վրայ նստաւ: Սուրբ Հոգին իրեն վրատահուած գործը անմիջապէս ձեռք առաւ եւ հրաշալի կերպով լիովի կատարեց: Տէրը ատենէ մը ի վեր արթնութեան համար աղօթողներու խումբի մը աղօթքներուն պատասխանելու սկսած էր:

Ուսանողները սկսան իրարու ետեւէ իրենց մեղքերը խոստովանելով ապաշխարութեան աղօթքներ մատուցանել: Իմ դասընկերներէս մին անցեալի մէջ իր ուրացած մէկ ղէպքը խոստովանելու համար տնօրէնին դացած էր:

Շատ չանցաւ ժողովէն բացակայ եղող ուսանողներն ալ սկսան հոն խուժել, սրահը նեղ եկաւ, այնպէս որ յարակից մեծ սրահին դռները բանալ պէտք եղաւ, եւ սկսան հոն խճողուիլ: Նորեկներն ալ նոյն զօրաւոր ազդեցութեան տակ կ'իյնային, զարմանալի մթնոլորտ մը կար: Մեզի համար Պէնտէկոստէ մըն էր: Շատեր ապաշխարեցին: Այդ օր եւ օրերուն միայն մեր կարգէն որ 16 հոգի էինք, մէկէ մը զատ բոլորս ալ կա'մ ապաշխարեցինք եւ կամ նոր նուիրում ունեցանք: Այս 15էն 6 հատը ետքը Աւետարանի պաշտօնեաներ եղանք ուչ կամ կանուխ: Որոնցմէ չորսը դեռ կ'ապրինք.՝ Վեր. Ե. Հատիտեան (Պէյրութ), Վեր. Վ. Թահմիզեան (Ֆրէզնո), Պատ. Կ. Գրաշարեան՝ քարոզիչ-ուսուցիչ (Սուրիա) եւ յօդուածագիրը: Իսկ միւս երկուքէն Պատ. Կոստանդին Սիյահեան (Հաճըն-ցի) Սայ Կէչիտի նահատակներէն մին եղաւ, եւ

միւսը՝ Պատ. Յակոբ Թիւճճարեան (Եդեսիացի)՝ Եդեսիայէն Սէվէրէքի ճամբուն մէջ ժանտարմայի մը մէկ փամփուշտին զոհ գնաց: Հոս ինձ թոյլ տրուի որ այս սիրելի ընկերոջս մասին բան մը պատմեմ:

Յակոբ ապագային քահանայ մը ըլլալու մըտադրութիւնովը Գոլէճ եկած էր, այս հոգեւոր արթնութենէն ետք կ'երեւի թէ իր ծրագիրը փոխելու ստիպուած էր: Նա Սէվէրէքի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ որպէս քարոզիչ-ուսուցիչ պաշտօն կը վարէր: Տարագրութեան սեւ օրերը հասած էին, ուրիշներու կարգին ան ալ ձերբակալուեցաւ եւ ժանտարմայի մը յանձնուեցաւ ձեռքը դրութիւն մը տրուելով որպէսզի զայն ճամբան սպաննէ: Ժանտարման իրեն տրուած հրամանը կատարելու նպատակաւ անոր ետեւէն քանի մը անգամ կրակելու փորձը կ'ընէ, սակայն ամէն անգամին հրացանը ձեռքէն կ'իյնայ, ձեռքը առաջ չերթար այս խոնարհ եւ ազնիւ ոգի ունեցող անմեղը սպաննելու: Վերջապէս Յակոբ ողջ առողջ Եդեսիա բերուեցաւ եւ կառավարութեան յանձնուեցաւ: Երբոր պաշտօնեան անոր գրութիւնը կը կարդայ, ժանտարմային դառնալով կ'ըսէ. «Ինչո՞ւ ասիկա ողջ հոս բերիք»: Ապա Յակոբ նորէն ուրիշ ժանտարմայի մը կը յանձնուի եւ ղէպի Սէվէրէք ետ կը զրկուի, նոյն դիւային հրամանով, եւ այս անգամ անգութի մը ձեռքով ոճիրը կը կատարուի:

Օրհնեալ ըլլայ այս սիրելի ընկերներուս յիշատակները, անոնք Տէրովը սուրբ գործին մէջ Անոր վկայութիւնը իրենց արիւնովը կնքեցին:

Դպրոցին մթնոլորտը բոլորովին փոխուեցաւ, իրարու հանդէպ նախանձի տեղ հիմա սէր եւ վէճերու տեղ համաձայնութիւն եւ ներդաշնակութիւն կը տիրէր: Ի՞նչ օրհնութիւն, ի՞նչ ուրախութիւն:

Յաջորդ օր, կիրակի կէսօրէ ետք, Հայրիկ Եկեղեցւոյն մէջ երիտասարդներու համար ժողով մը սարքուած էր, ուր նախորդ օրուայ նոր եւ զարմանալի փորձառութիւնները իրարու ետեւէ կը պատմուէին, յորդորանքներ, աղաչանքներ, կոչեր եւ աղօթքներ կ'ըլլային, փառաբանութեան եւ հրաւերի երգեր կ'երգուէին: Խոստովանութիւններ եւ աղօթքներ իրարու կը յաջորդէին: Ժամերը կը սահէին, ժամանակը անցած էր եւ քարոզած-

դովի ատենը հասած: Հովիւը Վեր. Մ. Կ. փափազեան քարոզելու եկած էր, բայց քարոզելու պատեհութիւն չկար, եւ պէտք ալ չկար: Ժողովը առաջուան պէս շարունակեց: Այն օրէն սկսեալ, շաբաթ երկուները զանց ընելով, 5-6 շաբաթ ամէն իրիկուն հսկումի ժողովներ եղան, նոյն եկեղեցիին մէջ, Վեր. փափազեանի առաջնորդութեամբ եւ Տէրը առատապէս օրհնեց այդ ժողովները: Ամէն իրիկուն յաճախողներուն եւ ապաշխարողներուն թիւը կը շատնար:

Այս ժողովներուն մէջ առ հասարակ նպատակին յարմար կարճ պատգամէ մը ետք երբոր պատեհութիւնը ժողովուրդին կը արուէր, մարդիկ վկայելու, աղօթելու կամ խոստովանելու եւ ապաշխարելու համար ոչ թէ մի առ մի, հապա մէկ անգամէն յաճախ երեք կամ հինգ հոգի մէկէն կ'ելլէին եկեղեցւոյն ամէն կողմէն եւ սակայն իրարու կը սպասէին կարգապահութեամբ: Բոլոր ժողովը այնպէս կը շարունակէր ընդմիջուած հոգեւոր երգերով որոնք ազդարար փողի մը դերը կը կատարէին եւ հոգիները կը ներշնչէին եւ կը խրախուսէին:

Առաջին ժողովէն ետք, երկրորդ ժողով մը կ'ըլլար եւ երբեմն ալ երրորդ մը: Իսկ առաջին ժողովին մեկնողներէն ոմանք տունները այցելելու կ'երթային հոգեւոր խօսակցութեան եւ հոգիներ շահելու համար: Այս ժողովներուն մէջ հարիւրաւոր հոգիներ դարձի եկան եւ շատեր ալ նոր նուիրումներ ունեցան: Անոնք ամէն դասակարգի ու տարիքի կը պատկանէին, այր եւ կին, ռամիկ եւ ուսեալ, աղքատ եւ հարուստ, երիտասարդ եւ չափահաս: Փրօֆէսէօրներ, ուսուցիչ եւ ուսուցչուհիներ, բժիշկներ, դեղագործներ, առեւտրական եւ արհեստաւորներ: Ամենայնոքի կեանք ապրողներ նաեւ բարոյականի տէր մարդիկ:

Ինչպէս հրապարակաւ, նոյնպէս յաճախ անհատական խոստովանութիւններ ալ կ'ըլլային, նաեւ մեծ կամ պզտիկ հատուցումներ: Դեղագործ մը 150 դեղին ոսկի եւ բժիշկ մը 300 կամ 400 ոսկի հատուցած էին Ամերիկեան հիւանդանոցին: Այս հատուցումները ոչ միայն Հայերուն, նոյնիսկ թուրքերուն ալ կ'ըլլային եւ դիմացիին վրայ հարկաւ խոր տպւտութիւն կը թողէին: Այդ շաբաթներուն ամէն տեղ օրուայ խօսակցութեան նիւթն էր արթնութիւնը:

Հոս կ'ուզենք խօսքը Վեր. Մ. Կ. փափազեանին տալ, թարգմանելով Սէվընթի Երբզի մէջ տըպուած իր ճառէն:

«Հոգեւոր կեանքի տեսակէտով 1903 տարին

պատմական խիստ ծանօթ թուական մը եղաւ: Եկեղեցիներուն երեքն ալ, ի մասնաւորի Հայի եկեղեցին, Սուրբ Հոգւոյն զարմանալի եւ խորունկ մէկ այցելութիւնը վայելեցին: Թէեւ մարդկային միջոցներ չկային չէ, սակայն Աստուծոյ ուղղակի եւ արտասովոր կերպով մը գործելը եւ մարդոց կեանքը հիմնովին փոխելու հրաշքները արեւի պէս յայտնի էր: Հոգեւոր շարժումը այդ հրաշալի կերպով ամիսներով շարունակելէ ետք աւելի խորունկ եւ լոկկ, բայց կենդանի եւ զօրաւոր կերպով տարիներով շարունակեց: Շարժումը «Այնթապի Արթնութիւնը» անունով ծանօթ եղաւ: Այս արթնութեան հետեւանքը ըլլալով թէեւ երբեմն եղական անհասներու հոգեւոր կեանքը լեռան կատարներուն պէս բարձրացան, սակայն ըստ իս աւելի վարմանալին ընդհանուր ժողովուրդին հոգեւոր կեանքին քանի մը ոտք բարձրանալը եղած է: Եկեղեցիին միջոցով տարբեր գոյն մը ստացաւ, հրապարակային պաշտամունքի ժողովներուն ոգին փոխուեցաւ: Ընկերային սովորութիւնները փոխուելով, ընտանիքի, առեւտուրի, ընկերային յարաբերութեանց մէջ տեղի ունեցող անհամաձայնութիւններ, դժուարութիւններ, ապականութիւններ առանց աղմուկի եւ շշուկի վերջ գտան: Նոր կեանքը իրականութիւն մը եղաւ եւ այդ կեանքը ապրող անհատներուն մէջ նաեւ ընդհանուր եկեղեցիին մէջ աւետարանչութեան բուռն փափաք մը արթնեցաւ: Զգէ կղերականները, աշխարհականները քարոզիչ եւ հոգեւոր գործաւոր կտրեցան: Աւետարանչութեան համար չըջալայ քաղաքներ եւ գիւղեր երթալ սովորութիւն մը եղաւ: Նոյնիսկ թուրք դրացիներուն փրկութիւն քարոզուեցաւ: Աւետարան կարդալու եւ աղօթելու համար գիշեր ատեն սրճարաններ գացողներ եղան: Այս շարժման երբեմն մակերեսային կողմերը թէեւ ժամանակի ընթացքին մաշելով ինկան եւ սակայն հիմնական եւ բուն հոգեւոր մասը չանցաւ: Որքան ատեն որ Այնթապ Այնթապ մնաց, արթնութեան ազդեցութիւնը անոնց վրայ մնաց:

«Շարժումը թէեւ աւետարանական համայնքին մէջ ծնաւ, բայց այդ նեղ շրջանիկին մէջ սահմանափակ չմնաց. մեր Հայ Առաքելական Եկեղեցին անկէ ազդուեցաւ նաեւ հոգեւորապէս անկէ շատ օգտուեցաւ: Նպատակը Լուսաւորչականները Բողոքական ընել չէր, հապա թէ՛ Լուսաւորչական եւ թէ՛ Բողոքականը՝ քրիստոնեայ, այսինքն՝ Գրիստոսի մարդ, ընել ըլլալը ամէնուն յայտնի եղաւ: Եւ երկու համայնքներուն միջեւ խաղաղութեան վիճակ մը շարունակեց»:

Սակայն շարժումը Այնթապի սահմաններում մէջ ալ չմնաց, անոր կայծերը մօտ եւ հեռու քաղաքներ եւ գիւղեր ալ տարածուեցան եւ ուր որ գացին շատ մը հողիները բոցավառեցին եւ արթնցուցին: Մօտակայ քաղաքներէն, ինչպէս Բիւլիս, Հալէպ, Մարաշ, Ջէյթուն, Եդեսիա, Էյպէզ, եւ այլնէ զատ մինչեւ Ատանա եւ Թարսուս ու Կեսարիա ալ հասաւ:

Արթնութիւնը ինչ միջոցաւ Եդեսիա հասաւ, կ'ուզենք անոր նկարագրութիւնը տալ Վեր. Ա. Զ. Եղոյեանի Յուշարձանէն մէջ բերելով:

«Նախախնամական ուրիշ մեծ դեր մը խաղցաւ Եղոյեանի կեանքին մէջ Այնթապի արթնութիւնը որ պայթեցաւ 1903ի սկիզբը, Վեր. Մ. Կ. Փափագեանի միջոցաւ եւ անոր իմաստուն հսկողութեան տակ: Եղոյեան երբ լսեց իրեն մօտը գտնուած քաղաքին մէջ տեղի ունեցող Սուրբ Հոգիին անձրեւներուն եւ հեղեղներուն մասին, առաջին պատեհութեամբ Այնթապ սուրաց. գնաց հոն, ժողովներուն ներկայ եղաւ, լսեց աղօթքները, խոստովանութիւնները, ապաշխարութիւնները: Տեսաւ փրօֆէսօրներ, Պէզճեանը եւ Լեւոնեանը, տոբթորներ Նաղարեան եւ ուրիշներ, խօսեցաւ Վեր. Փափագեանի հետ, տեսաւ այս մեծ գլուխներու մանկական հաւատքն ու անոնց սրտերուն մէջի եփուն ուրախութիւնը: Անոր աչքերուն թեփերը թափեցան ու Եղոյեան կրկին Եդեսիա վերադարձաւ Ս. Հոգիին զօրութիւնովը զինուած: Նա արթնութեան հաղորդիչը եղաւ Այնթապէն դէպի Եդեսիա: Ո՛չ միայն հաղորդիչը, այլ նաեւ առաջնորդն ու ղեկավարը հոն: Նա կանչեց իր հոգաբարձուները, պատմեց իր տեսած հրաշքները, համոզեց զեղուն սրտով մը թէ նոյն արթնութիւնը կրնար նաեւ Եդեսիոյ մէջ օրհնութիւն սրբաւել, եթէ նախ երկինք, ապա եկեղեցին խոնարհէին, ու եթէ անմիջապէս աւետարանչական ժողովներու սկսէին: Հոգաբարձութիւնը ծունկի եկաւ իր հովիւին հետ, եկեղեցին պատրաստ էր ընդունելու Տէրօջը աջգեղութիւնը ամէն զոհողութեամբ ու քիչ օրէն արդէն Սուրբ Հոգիին հովերը սկսան շարժիլ Եդեսիոյ վրայ ալ»:

Հեռու Եդեսիոյ համար ալ Տէրը միջոց գործածեց Կ. Թ. Գոլէճին մէջ ապաշխարհող եւ նոյն տարին չըջանաւարտ ըլլալէ ետք որպէս ուսուցիչ հոն գացող Վահրամ Թահմիզեանը եւ Միսակ Այծեանը, Էյպէզի համար ալ անոնց դասընկերը Ենովք Հատիտեանը: Որոնք Տէրօջը ձեռքին մեծ օրհնութեան միջոցներ եղան:

Մեր յօդուածը վերջացնելէ առաջ կ'ուզենք

այս արթնութեան քանի մը ցցուն գործնական արդիւնքները յիշել:

Եկեղեցիները կենդանացան եւ նորոգուեցան, եւ անոնց վրայ շատ մը հողիներ աւելցան: Թէեւ ապաշխարողներէն շատեր ետ գացին, բայց շատեր ալ հաստատ մնացին եւ կեանքը շարունակեցին:

Աղօթածողովները նոր նշանակութիւն մը ստացան, քանզի աղօթողներ եւ աղօթքներ փոխուեցան եւ աղօթողներու բազմութիւնը շատցաւ:

Հոգեւոր կեանքը նոր նշանակութիւն մը ստացաւ, չափանիշը բարձրացաւ եւ գործնական կեանքը ապրիլ կարեւորութիւն ստացաւ:

Սուրբ Գիրքի ընթերցումն ու սերտողութիւնը կարեւորութիւն ստացաւ եւ հոգեւոր կեանքի համար անհրաժեշտ դարձաւ, անիկա ամէնուն եւ ամէնօրեայ Գիրքը եղաւ, նաեւ կրնանք ըսել թէ շատերուն համար Գրպանի Գիրք ալ եղաւ, քանզի շատ մը երիտասարդներ իրենց դրպաններուն մէջ դռնէ նոր Կտակարան մը կրել սկսան:

Նոր հրատարակութեանց ծնունդ տուաւ նոր երգերու, հոգեւոր նոր գրքերու եւ հոգեւոր թերթի մը՝ «Նոր Կեանք»ի:

Աւետարանչութեան ոգին արթնցուց եւ զօրացուց, անհատներու եւ խումբերու աւետարանչական գործունէութենէն զատ Հայիք Եկեղեցին ունեցաւ ներքին եւ արտաքին աւետարանչութեանց համար իր աւետարանիչները. մին՝ մօտակայ տեղերու համար, իսկ միւսը Զինաստանի համար, Kouchari «Յաւիտենական կեանքի» Եկեղեցիին չինացի աւետարանիչին թոշակը ինք կը ղրկէր Չայնա Ինկէմտ Միսիոնի ձեռքով կանոնաւորապէս մինչեւ տարագրութեան տարին:

Տէրօջը հունձքին համար նոր մշակներ ելան: Ուսանողներէն ոմանք հոգեւոր գործը իրենց համար կեանքի նպատակ ըրին եւ արհեստի հետեւող կարգ մը երիտասարդներ ալ իրենց արհեստները թողուցին ու Գոլէճ մտան, հոգեւոր գործի պատրաստուելու համար:

Անհատներու եւ ընտանիքներու միջեւ տեղի ունեցող կարգ մը անհամաձայնութիւններ, դժուարութիւններ եւ վէճեր ինքնաբերաբար վերջ գտան: Ասոր իբր օրինակ այդ օրերէն դէպք մը կ'ուզեմ յիշել զոր Վեր. Մ. Կ. Փափագեան պատմեց երբ իր աւետարանչական ճամբորդութեան ընթացքին հոս կը գտնուէր: Ժողովի մը մէջ տեսած էր որ տարիներէ ի վեր իրարու հետ դատ ունեցող երկու անձնաւորութիւններ քով քովի նշատած, երգարանի մը մէկ ծայրէն մին՝ միւս ծայ-

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Երախտազկութեամբ անդրադարձանք եւ ուրախութեամբ տօնեցինք մեր Յոբելեանը: Մեր պատմութեան քննութեան եւ անոր հետեւանքներուն մէջ կրցինք տեսնել Աստուծոյ շնորհքին եւ Անոր նախախնամութեան ներգործութիւնները, այս պատճառաւ ալ, մեր այսօրուայ գոյութիւնը ամէն բանէ առաջ կոթող մ'է, Աստուծոյ սիրոյն եւ հաւատարմութեան նշանը:

Այսօր Բ. դարաշրջանին արշալոյսին մէջ կը գտնուինք: Հարկ է գիտակցիլ այս պարզեւին ալ, եւ ետ նայել վերջ առաջ ալ նայիլ: Հարկւրամեակը ինքնամոխիման ժամանակ մ'ալ է: Հարկ է օգտուիլ անցեալի եւ այսօրուայ դասերէն եւ մեր զաւակներուն կտակել մեր տեսիլքներու անհրա-

ժեշտ սեպած ծրագիրը, վաղուան համար:

«Բանբեր», իր մեծ ընտանիքին եւ իր քոյր Եկեղեցիներուն կը թելադրէ իր տեսութիւնները, անոնց ենթարկելով հետեւեալ կազմակերպչական եւ հոգեւոր նկատումները:

Ա.— ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

20րդ դարու սկիզբէն ի վեր հայութիւնը հետզհետէ ենթարկուեցաւ զաղթականութեան, հաստատուելով այն երկիրներուն մէջ, ուր նետած էր զինքը տխուր կացութիւնը:

Այս պատճառաւ Հայ Աւետ. Եկեղեցիները զարգացան եւ կազմակերպուեցան իրենց տարբեր միջավայրերուն մէջ, աճեցան ինքնատիպ երեւոյ-

րէն ալ միւսը բռնած՝ միասին կ'երգեն: Մինչ այդ ո՛չ Ազգային Միութեան անխոնջ ջանքերը, ոչ ալ դատարանը կրցած էին այդ դժուարութիւնը հաւթել եւ համաձայնութեան մը բերել, բայց Սուրբ Հոգիին ներգործութիւնովը ինքնաբերաբար հաւթուած էր: Ասիկա հրաշք մըն է եւ այն ալ այդ օրերուն կատարուած շատերէն միայն մին:

Այնթապ ա՛կէ առաջ եւ ասկէ ետքն ալ Հոգիին այցելութիւնները եւ շատ մը օրհնութիւնները վայելած է: Արդեօք ի՞նչ էր անոնց առիթ տուող նախապատճառը: Երբ զայն քննելու ըլլանք, անոր հետքերը մեզ շատ հեռուն, ասկէ դար մը առաջ կը տանին, այն շարժումէն որ մեր նախահայրերուն մէջ սկսած էր արդէն իսկ քանի մը տարիներ առաջ եւ անոր հետեւանքը ըլլալով 1848 Յունուար 30ին, ութը անդամներէ բաղկացեալ քաղաքիս առաջին Հայ Աւետ. Եկեղեցին կազմուեցաւ Տոքթ. Աղարիս Սմիթի միջոցաւ: Այդ ութէն մէկը յօդուածագրի մեծ հայրն էր, իսկ եկեղեցին Հայերու մէջ երկրորդն էր, առաջինը Պոլիս ըլլալով: Այն օրէն իսկ սկսեալ Աստուծոյ շնորհիւ մեծ յառաջդիմութիւն ցոյց տուած եւ Կիլիկիոյ եկեղեցիներուն մայրը եղած է: 1856ին իրեն Եկեղեցւոյ ընդարձակ շէնքը ունեցած է որ Թուրքիոյ մէջ Հայ Աւետ. ներու մէջ առաջին կառուցուած եկեղեցին է: Այդ թուականէն սկսեալ իր հովիւին ամսականը ինք մճարած է միշտ եւ ապա երկրորդ եւ երրորդ եկեղեցիներ ալ ունեցած է: Հոգեւոր եւ կրթական գործը հսկայ քայլերով յառաջ երթալով

թէ՛ քաղաքին եւ թէ՛ իր շրջակայքին մեծ օրհնութիւն եղած է: 1847ի Տոքթ. Սմիթի մարդարեւութիւնը իրականացած է (*):

Ահա Այնթապի արթնութեանց առիթ եւ ծընունդ տուող նախապատճառը անցեալի այդ օրհնեալ շարժումն է: Գոհութիւն Աստուծոյ ասոր համար: Մեր նախնեաց շատ քան կը պարտինք եւ դալիք սերունդին ալ մեծ պատասխանատւութիւն ունինք: Առ այդ երանի՛ թէ այն օրհնեալ հովը կրկին փչէր, ամէն տեղ, մեր բոլոր եկեղեցիներուն վրայ եւ հոգիները շարժէր ու չորցած ոսկորները կենդանացնէր եւ մեզի նոր կեանք ու եռանդ տար եւ մեզ գործի մղէր:

Երանի՛ թէ Հարիւրամեակը ասոր համար Տէրօջը ձեռքին մէջ միջոց մը լինէր:

Յ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Տէսին, 7 Յունիս 1946

(*) «Այնթապի համար ի՛նչ քանի, իմ հոս գալս դեռ 15 օր եղած է, տեղւոյս ապագային խիստ յուսալից ըլլալուն երբեք կասկած չկայ: Ըստ իս, այս վայրը Զմիւռնիայէն, Պրատայէն եւ Կաքիմէն առ երկրին մէջ գտնուող որեւէ տեղէն առելի յատուից է: Եթէ հոս միսիոնարներ գտնուելու ըլլան, իր շուրջը իրեն հետ հաղորդակցութեան մէջ գրտնուող շատ մը տեղերուն լուսոյ կեդրոն մը ըլլալու համար նախախնամութեան կողմանէ պատրաստուած քաղաք մը կ'երեւի:»

թով եւ հասան տարբեր դիրքերու: Այսօր մեր եկեղեցիները իրենց որակով եւ քանակով կը ներկայացնեն որոշ երանգաւորութիւն մը: Միայն ցարդ կարելի չեղաւ համադրել այս բոլոր ցրուած ուժերը, մէկ նպատակի եւ կեդրոնական մարմնոյ մը շուրջ, ինչպէս էր մայր հայրենիքին մէջ:

Եկեղեցիներու եւ զանազան Միութեանց յարաբերութիւնները վերածեալ են լոկ թղթակցութեան եւ հաղուադէպ այցելութիւններու: Եկեղեցիները անտարակոյս տառապած են իրերու այս վիճակէն: Գաղութներու հեռաւորութիւնը եւ քաղաքական պարագաներ, ինչպէս պատերազմը, կը խղեն ամէն յարաբերութիւն, իւրաքանչիւր չըջանակի պարտադրելով ինքնագլուխ գործունէութիւն մը:

Հա՛րկ է դարմանել այս կացութիւնը, անդուլի չթողելու համար մեր եկեղեցիները: Մեր ընելիք առաջին բաներէն մին ըլլալու է՝ զբաղիլ Միացեալ Աւետարանական մանկատի մը կազմակերպութեամբ:

Քաղաքական եւ ընկերային չըջանակներու մէջ մարդիկ լաւ ըմբռնած են միացեալ ճակատի մը հարցը: Եկեղեցական մարդին մէջ, վերջին տարիներու ահադին աշխատութիւններ յառաջ տարուած են, բոլոր աշխարհի քրիստոնէական ուժերու գաղափարները համադրելու համար, համաշխարհային շարժումի մը մէջ: Քրիստոնեաներ չեն վարանիր վերցնել ամէն կերպ յարանուանական միջնորմեր զիրար հասկնալու եւ օրուայ հրատապ հարցերուն առջեւ պարզելու միակ քրիստոնէական ճակատ մը: Յայտնի է որ օրուան հրամայական պահանջն է միացեալ ճակատի մը դրութիւնը: Մեզի համար դժուար ըլլալու չէ իրականացնել զայս: Որո՞նք են սակայն առնուելիք քայլերը:

Ա.— Անմիջապէս յարաբերութեան մէջ մըտնել իւրաքանչիւր Միութեան վարչութեանց հետ, պարզել հարցը եւ կատարել գաղափարի փոխանակութիւնը այս խնդրոյն շուրջ:

Բ.— Մշակել միջ-միութենական յարաբերութիւններ, եւ բոլորն ալ իրարու կապել ֆէտէռասիօնի մը կապերով: Անմիջապէս պատրաստել կանոնադիր մը, բաւական լայն եւ ճկուն, որպէսզի կարելի ըլլայ խմբաւորել եւ ֆէտէռասիօնին մէջ միացնել բոլոր Հայ Աւետ. Եկեղեցիները, ինչպէս նաեւ բոլոր Աւետ. շարժումներն ու հատուածները, եղբայրութիւններ եւ ո՛չ յարանուանական եկեղեցիներ: Ֆէտէռասիօնը նպատակ ունենայ կարե-

լի դարձնելու որոշ գործակցութիւն եւ կեդրոնական հեղինակութիւն, բոլորովին ազատ թողելով իւրաքանչիւրի դաւանական հարցերը: Հաւատքի իրր նուազագոյն արտայայտութիւն կարելի է ընդունիլ «Նիկիական Հանգանակը»:

Գ.— Ընտրել միջ-միութենական կամ ֆէտէռասիօնի վարչութիւնը, կազմուած իւրաքանչիւր միութեան կարկառուն ղեմքերէն եւ որուն պաշտօնը ըլլայ, վարելու Հայ Աւետարանականութեան ընդհանուր գործերն եւ ուղղութիւնը: Չայն ներկայացնել այլ Եկեղեցիներու եւ համաշխարհային շարժումներու, վերջապէս դառնալու Հայ Աւետ. բարձրագոյն բարոյական հեղինակութիւնը: Վարչութիւնը կարելի է գումարել շուրջ չորս տարին անգամ մը որեւէ երկրի մէջ. անոր գործադիրը կը վարէ ընթացիկ գործերը այս ժամանակամիջոցին:

Դ.— Ամէն կերպով օժանդակել եւ զօրացնել Ամերիկայի Հայ Միսիոնարական Ընկերութիւնը, եւ զայն գործածել կրօնական եւ կրթական մարգերուն մէջ: Չայն բոլոր Հայ Աւետարանականութեան ընտրեալ գործիքը դարձնելու համար, կարգադրել որ անոր գործադիր Քոմիթէն աշխատի Միջ-Միութենական վարչութեան հետ ձեռք ձեռքի եւ անոր հովանիին տակ, որպէս Աւետ. Եկեղեցւոյ արժանաւոր անդրանիկ որդին:

Ե.— Հովիւներու պատրաստութեան համար ստեղծել կամ ընդարձակել արդէն գոյութիւն ունեցող Աստուածարանականին մշակութային ծրագիրը: Մասնագիտական ճիւղերու աւելցնել Հայ գրականութեան, Հայ աղգ. եւ եկեղեցական պատմութեանց ճիւղերը եւ հսկել անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու ուսուցման:

Զ.— Իւրաքանչիւր Միութեան թերթերէն զատ ունենալ միջմիութենական օրական մը: Թերթը կապ մը պիտի ըլլար բոլոր միութեանց միջեւ եւ յարմարագոյն ասպարէզը բոլոր Աւետարանականներու արտայայտութեանց համար: Շատ անուշ պիտի ըլլար հին յուշերը արծարծող Աւետարները յարուցանել եւ հրատարակել զայն բոլորին գործակցութեամբ:

Է.— Կազմակերպել միջ-միութենական մամուլը: Ունենալ մեզի յատուկ տպարան մը, կամ գէթ գրերու կազմածը: Մեծ զարկ եւ քաջալերութիւն պիտի ստանար հոգեւոր դրականութիւնը՝ գրքերու, տետրակներու հրատարակութիւնը, որ այսօր այնքան դժուարութեանց կը բաղխի, կաշկանդելով Աւետարանական գաղափարներու տարածումը:

Ը.— Միութեան ժողովներու առթիւ հրաւի-

րել դրացի երկիրներու միութեանց պատասխանատու ներկայացուցիչներ, ամրացնելու հաղորդակցութեան կապը եւ փոխադարձաբար օգտուելու իրարու փորձառութենէն:

Թ.— Քաջալերել այն պաշտօնեաները որոնք Տէրութենէն կոչուած ստացած են շրջուն Աւետարանչութեան: Ըստ կարելոյն, ունենալ մին՝, որ զբուռած Տէրութենէ եւ Միջ-Միութենական վարչութեան կողմէ, կարողանայ Տէրովը պատգամը հաղորդել բոլոր եկեղեցիներուն եւ հրավառել աւետարանչական ոգին:

Բ.— ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒ «ՄԱՐԳԱՐԷ»

Մեր գոյութեան Բ. դարուն սկիզբը, մեր եկեղեցին կը կանգնի շատ հանդիսաւոր Անճանօթի մը առջեւ: Սփռուքի եկեղեցիները, աւելի քան քառորդ դարէ ի վեր, կը ջանան յարմարիլ իրենց շրջանակին ու պարագաներուն եւ անոնց հոգեւոր ուղղութիւնն ու գործելակերպը կը փոխուի իրենց զանաւոր երկրին պարտադրած պայմաններուն համեմատ: Մեր մղձաւանջը ձուլումն է որ տարուէ տարի կը մօտենայ, օր ըստ օրէ շեշտելով Հայ Աւետ. եկեղեցւոյն «լինելու եւ չլինելու» հարցը: «Որքա՞ն ժամանակ մեր եկեղեցիները պիտի կարենանք պահել իբր Հայ»: Ահա՛ օրուան առաջնորդներու սեւեռուն հոգը: Հարուածը թերեւս պիտի չտրուի կոպտօրէն, զմեզ շրջապատող աղբերէն — թէեւ անոնք կ'անձկան որդեգրել զմեզ եւ տիրանալ այն ժառանգութեան զոր տարազրութիւնը նետած է իրենց զիրկը — այլ մեր մատաղ սերունդէն, որ լոյս եկած օտար ամբարներէ վրայ, զուրկ տոհմային դաստիարակութենէ, օրն ի բուն ենթակայ տեղական բարքերու ու սնած անոնց կրթութեամբ, մեծ մասամբ անզգայ է զմեզ տողորդող ազգայնական ոգիին եւ կը նախընտրէ իր ճանչցած լեզուն եւ շրջանակը: Եկեղեցիներու եւ պէս պէս կազմակերպութեանց ջանքերը յաջողած են մեզմեկ եւ ուշացնել վտանգը, բայց ո՛չ չէզոքացնել զայն: Այսպէս հին եւ նոր սերունդին միջեւ իրական բաց մը նշմարելի է: Այս բացը նաեւ գոյութիւն ունի դադարաւոր եւ հաւատքի գետնին վրայ: Դժուարութիւնը հաւանաբար նոյնն է ամէն տեղ, ու հոգեւոր առաջնորդները Հայ եկեղեցին պահպանելէն զատ պէտք ունին այսօր, հայ տղան ու աղջիկը անոր մէջ պահելու:

Թերեւս դեռ կանուխ է խօսիլ Հայ Աւետ. եկեղեցւոյն Հայաստանի մէջ խաղալիք դերին մասին: Անոնք որոնք պիտի կանչուին հովուելու ներգաղթող ժողովուրդը, առիթ պիտի ունենան խըն-

դրելու Աստուծոյ շնորհքին ու նախախնամութեան բոլոր միջոցներն ու ներգործութիւնները, Աւետարանին պայծառ լոյսը տարածելու համար մեր սիրելի հայրենիքին մէջ, որուն զանազան եւ ուրախալի վերելքներուն քով կը սլակաի հոգեւոր տարրը: Յամենայն դէպս մայր հայրենիքը մեզի կը սպասէ իբր մեր սիրելագոյն դաշտը, սիրելի իր անցեալով, սիրելի իր հոգեւոր կարիքներով, ու այս կոչումին առջեւ Հայ Աւետ. եկեղեցին պարտի կանգնիլ ճրագները վառ եւ մէջքը դօտուելու: Հաւատարիմ ծառայի մը պէս:

Շատ փոքր մաս մը միայն յիշեցինք այն հարցերէն որոնցմով պիտի զբաղի մեր եկեղեցին: Անոնց վրայ կը բարդուին քաղաքապիսի հոգեր: Աստուածային տնտեսութեանց վերջին օղակներուն մէջ ենք, կը հաւատանք, ու վերջին օրերը լի պիտի ըլլան ոչ միայն կրօնական եւ հոգեւոր մոլորութիւններով եւ փորձութիւններով, այլ նաեւ քաղաքական եւ ընկերային ամէն կերպ յեղաշրջումներով եւ պատուհաններով: Այդ ստուերոտ հեռապատկերին առջեւ, եկեղեցիին Տէրն ու փրկիչը պատուիրեց հսկել եւ աղօթել: Աղօթենք ուրեմն, յար աղօթենք որ մեր նախատեսած եւ դեռ անծանօթին մէջ ծուարուն բոլոր անակնկալներուն առջեւ Աստուած չթողու մեզ:

Աստուծոյ մեթոտը միշտ մարդն է: Սրբազան կամ ազգային պատմութեանց մէջ, Աստուած հանած է մասնաւոր անձեր որոնք զանազան կոչումներով զօրացած՝ գիտցած են տիրանալ կացութեան: Անոնց վարպետի ձեռքերուն տակ, պարագաները դարձնուած եւ ձեւի մտած են: Բարձրաբերձ փարոսներու պէս լուսաւորած են իրենց շրջանակը, գոյն եւ իմաստ տալով դէպքերուն: Մեկնած են, այո՛, չինած են պատմութիւնը: Այդ տիտանները յաճախ մնացած են անծանօթներ, սխալ հասկցուածներ, որոնց օրական վարձքը հակառակութիւն եւ նախատինք եղած է: Այսպէս ճգնած ու տառապած են Մարգարէն ու Դատաւորը, հայրենասէրն ու Առաքեալը: Տակաւին, անոնց երկունքը պարապ չէ անցած: Ի վերջոյ շահած են իրենց ժամանակակիցներուն մէկ մասին վտաճութիւնը: Մարդիկ զգացած են որ կը կանգնին «Աստուծոյ մարդոց» առջեւ եւ յետագայի դիտողները երախտագիտութեամբ ողջունած են զանոնք, իբր նախախնամական գործիքներ:

Աղօթենք որ նմանօրինակ առաջնորդներ չըպակսին մեզի: Աղօթենք որ յարմար ժամանակին եկեղեցին իր «Տեսանողներն» ունենայ, հոգեւորա-

կան եւ աշխարհական ղեկավարներ, որոնք իրենց հոգեւոր կեանքով ու հանճարով, ըլլայ Սփիւռքի հայութեան, ըլլայ հայրենիքի մէջ, Աստուծոյ ծրագիրներուն համեմատ եւ իր կոչման արժանի կերպով կառավարեն մեր Եկեղեցին:

Իսկ մեզի կ'իյնայ որպէս գործնական քայլ լըսել բազմաշխատ առաքելային խօսքը. Դու, իմ որդեակս, զօրացիր այն շնորհքովը, որ Քրիստոս Յիսուսով է, եւ այն բաները զորոնք ինձմէ լսեցիր, շատ մը վկաներով հաւատարիմ մարդոց յանձնէ, որոնք կարող ըլլան, ուրիշներու ալ սորվեցնել: — Ա. Տեմ. 2., 1:

Անցեալէն դատելով այս մասնաւոր կոչեցեալները, նման Մովսէսի, Սամուէլի, Եսայիայի եւ Պօղոսի, փոքրաթիւ եւ հազուադիւրս են, սակայն միշտ բաւարար, ապահովելու Աստուծոյ թագաւորութեան շահերը: Անոնց քով, լրացնելու եւ շարունակելու համար անոնց գործը, եւ կրելու համար գործին բովանդակ եւ մնայուն բեռը Եկեղեցին կը կարօտի հաւատարիմ եւ բանիբուն հովիւներու:

3. — ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Սյօսը, կը կարծենք թէ որոշ չափով մը զգալի է հովիւներու պակասը: Եկեղեցիին մէջ հոգեւոր պաշտօնէութեան կոչումներու նուազում կայ: Երիտասարդներ յօժարութեամբ կը նետուին գիտական եւ գրական ասպարէզներու մէջ, բայց կը դժկամակին ընդգրկելու հովուութեան փշոտ գործը: Եթէ Եկեղեցիին հոգեւոր կեանքը աւելի իրական ըլլար, ու մարդիկ համոզուէին իրենց նմաններուն կարօտութեան եւ աւելի լաւ ճանչնալին Ք. Ս. ի սէրը, պիտի դարմանուէր այս պակասը: Ուրիշներ, որոնք կոչում կը ստանան կը փորձուին ծառայելու գիրենք չըջապատող բնիկ եկեղեցիներու (Փրանսական, ամերիկեան, եւն.), այս ալ ճշուումին վտանգէն յառաջ կու գայ: Կայ նաեւ խեղդուած կոչումներուն պարագան: Շատ եկեղեցիներու մէջ, որդիներ՝ վերցուցած են իրենց ծերունի հօր վար գրած Զահր, եւ շարունակած են անոր նուիրական գործը, եւ այս միշտ մեծ օրհնութիւն մը եղած է եկեղեցիներուն: Երիցատան մը մէջ, աւելի պատեհութիւններ կան արթնցնելու եւ զօրացնելու նմանօրինակ կոչումներ: Դրժքախտաբար սակայն զոյգ մը կարեւոր պատճառներ շատ յաճախ խեղդած են նորաբոյս կոչումները: Մին՝ եկեղեցական բազում հոգերն ու նեղութիւններն են, որոնցմով ամէն օր լի է երեցատունը: Միւսը՝ նիւթական նեղ պարագաները որոնք պարտադրուած են հովիւին: Պաշտօնեան անոնց

դէմ կը պայքարի, սիրով, հաւատքով եւ նուիրմամբ, կ'ընդունի զանոնք եւ առ ոչինչ կը սեպէ իր կրած սահմանափակումները, սակայն չի կըրնար խլել այդ կացութեան խայթոցը, որ յար կը կծէ իր ընտանեկան կեանքը: Որդիներ նեղացած՝ անհատնում հոգերու դէմ որոնք կը դառնացնեն իրենց հօր կեանքը, եւ անձկալուճ դաժմանելու երկար զրկումներու շարք մը, կը նուիրուին ուրիշ ասպարէզներու, տունը, ծնողքը, եւ կրտսեր եղբայր — քոյրերուն ապահովելու համար լաւագոյն պայմաններ: Խեղդուած կոչումներու է՛ն տրամաթիւք կողմն է այս թերեւս, զոր կը յիշե՛ք դժկամակութեամբ, սակայն ի պարտէ, Եկեղեցիին մատնանչելու իր ունեցած սիրոյ եւ հոգածութեան թերութիւնը:

Սակայն կոչումներու նուազութիւնը, փորձութիւն մը ըլլալու չէ գործի լծելու անյարմար անձնաւորութիւններ: Եկեղեցիին ընդհանուր կեանքն ու գործը սերտիւ կապուած է այս կէտին: Կոչեցեալին առաջին պայմանը ըլլալու է ունենալ անհատական հոգեւոր կեանք եւ փորձառութիւն. ու սրբազան հուրը, Աստուծոյ եւ մարդկանց ծառայելու: Միայն այս պայմանաւ հոգեւոր գործիչը կրնայ յաղթել իրեն սպասող բազմապիսի յուսահատեցնող պարագաներու, այսպէս միայն կըրնայ շարունակել իր կոչումը եւ կրնայ ծառայել մարդոց:

Քանի որ կանչուած է ըլլալու ժողովուրդի առաջնորդ եւ ընկերային կեանքի դերակատար, հարկ է որ հովիւը ունենայ բազմակողմանի եւ խոր գիտութիւն: Համայնքը, բեմը, մամուլը տառապելու չեն տգէտ եւ սահմանափակ մտքերու առջեւ: Միութեան ժողովներու եւ պատկան մարմիններու կ'իյնայ ըլլալ խստապահանջ Աստուծոյ գործին սիրոյն համար: Անոնց կ'իյնայ նաեւ գործածել եւ օգտակար ծառայութեանց մղել, հոգեւոր նախանձով լի, սակայն հովուական գործին անյարմար հաւատացեալները:

4. — ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական Եկեղեցին իր Բ. դարաշրջանին մէջ կը մտնէ, եւ կը փափաքի ծառայել աղբին: Իր ծառայութեան մեծագոյն արտայայտութիւնն է տալ իր Պատգամը: Պատգամը Աւետարանին իր բովանդակ պարզութեան եւ խրատութեան մէջ: Իր լման եւ անձեռնմխելի յայտնութիւններով:

Տարակոյս չկայ թէ, ըստ մասին, այսօր մեր պատգամը չենք կրնար ծրարել այն ձեւերով որով քարոզեցին մեր հայրերը 100 տարի առաջ: Եւ ոչ

ոք կը պահանջէ այդ կայունութիւնը: Հարկ է որ մեր պատգամին ձեւը հազնի օրուան ըմբռնումին նման: Սակայն քաւ լիցի որ օրուան մտքերուն հետ քայլ պահելու համար ոեւէ բան զեղչենք մեզի յանձնուած աւանդին պատգամէն:

Պատգամէն բան զեղչել, վարդապետութիւնը թեթեւցնել, պատգամը կորսնցնել ըսել է: Քրիստոսի աշակերտները նոր պատգամով մը քալեցին Յունա-հռովմէական եւ հրէական աշխարհին վերայ: Իրենց պատգամը փրկսփոյալական հզօր միտքերու համար յիմարութիւն էր, եւ գայթակղութիւն՝ մոլեռանդ հրեաներուն համար: Ապաշխարութիւնն ու սրբութիւնը, հաւասարութիւնն ու դատաստանը, խաչն ու Յարութիւնը, մէկ խօսքով Քրիստոսն ու Աւետարանը, այն ատենուայ ընդունեալ մտաւոր եւ կրօնական տուեալները հրմշտկող դայթակղութիւններ էին միայն: Ի՞նչ ըրին Առաքեալները, բան զեղչեցին իրենց «Յայտնութենէն»: Ամենեւին: Անոնց կրակէ քարոզութիւնը հետզհետէ քանդեց հակառակութեան բերդերը, մինչեւ որ Քրիստոսի դէմ հպարտացած բարձր բաները Անոր հնազանդեցան:

Հայ Աւետ. Եկեղեցին եթէ կ'ուզէ ոեւէ տիրական զեր կատարել եւ ապրիլ, պէտք չէ թողու իր Աւետարանական, պահպանողական վարդապետութիւնը: Գիտենք որ այս շեղումը արդէն տեղի ունեցած է: Բեմի եւ խղճի ազատութիւնը յաճախ չարաչար գործածուած է: Ամերիկայի, Սուրիոյ, Ֆրանսայի եւ այլ գաղութներու հովիւներ չեն ստացած նոյն աստուածաբանական կրթութիւնը, եւ հեռի են ներկայացնել նոյն պատգամը: Մերիններէն ոմանք ստացած են եւ կը գործեն «արդիական» համոզումներով: Բարեբախտաբար կ'ապրինք այնպիսի շրջանի մը մէջ, ուր արդիականութիւնը մերկացած է իր հմայիչ հրա-Ներսիսյանի զանազան երկիրներու մէջ, հետզհետէ սլոյրներէն: Անոր անձնատուր եղող եկեղեցիները, գիտակցեցան անոր ներարկած թոյնին: Ժամանակի ընթացքին տեսնուեցաւ որ արդիական աստուածաբանութիւնը չի կիրարկեր եկեղեցին: Հոգեւոր կեանքը չորցաւ եկեղեցիներու մէջ, ոմանք բոլորովին անհետացան, շատ հովիւներ հետզհետէ վերածուեցան անպատգամ եւ անազգեցիկ վճարեալ պաշտօնեաներու: Այսպէս յիմարացան «իմաստուն ենք» ըսողները:

Ներսիսյանի եւ Ֆրանսայի մէջ, աստուածաբանական հոսանքը փոխուած է այսօր: Մատի վրայ կը հաշուուին խստասիրտ առաքիլները, շատ նուագած են արդիականները: Նէօ-Քալվինիսթ հո-

սանք մը կանցնի համալսարաններու մէջէն եւ Քառ Պառթի մը կամ Լըսէռֆի մը շունչին տակ, պաշտօնական վարդապետութիւնը կ'ուղղէ ետ, Աւետարանէն, յայտնութեան հիմնական վկայութիւններուն եւ բարեկարգիչներու հաւատքին: Իսկ լիպէրալիզմի աւերները ցնցած են շատ հոգեւորներ: Այդ կորսուած արժէքները վերագրաւելու համար, բուն արդիականութենէն Աստուծոյ հօգիով շահուած եւ Քրիստոսի սիրովը վառուած երիտասարդ հովիւներ, կրկին ձեռք առին փրկութեան պարզ Աւետարանը, — մարած սրտերու մէջ արծարծելու համար — հաւատքն ու ապաշխարութիւնը: Ֆրանսայի մէջ Աստուած այսպէս հանեց եւ գործածեց Պոլիկատ տը լա Տոսմն ու Կառտաճեմկի խումբը:

Նմանօրինակ վերադարձ մը, մեր միջեւ, պիտի նորոգէր շատ փլած խորաններ եւ ապահովէր մեծ հաճոյք մը: Մեր ապահովութիւնն իսկ կը պահանջէ այս:

5.— ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

Այսօրուայ մեր ապահովելիք է՝ն կարեւոր հարցերէն մին ալ Եկեղեցւոյն հոգեւոր կեանքն է: Թերեւս ոչ մէկ ատեն, ընդհանուր առումով մը, մեր եկեղեցիները եղած են այնքան գործօն եւ այնքան ուժեղ կազմակերպուած որքան այսօր: Ուրախալի է տեսնել մեր եկեղեցական կեանքին յառաջդիմութիւնը: Սակայն եկեղեցական կեանք հոգեւոր կեանք ըսել չէ: Եւ եթէ եկեղեցին հիմնուած չէ իրական հոգեւոր ապրումներու վրայ, ուշ կամ կանուխ պիտի վերածուի անպտուղ թլուզենիի մը:

Շահինք մարդիկ: Գրաւենք երիտասարդութիւնը, սակայն զանոնք եկեղեցիին կապենք, Քրիստոսի կապելով: Թերեւս մեր եկեղեցիներուն ամէնէն զգուշանալիք կէտն է իւմանիզմը: Այսինքն, ընդունիլ թէ մարդը բարի է, ատակ է հոգեւոր բաներու ինքն իրմով, եթէ միայն անոնց մէջ արթննայ եւ կրթուի: Այսպիսի բարեպաշտ, կրթուած եւ համոզուած բողոքականներով կարելի է լեցնել մեր եկեղեցիները, սակայն աւելի խորը իջնող փորձառութիւն մը պէտք է, հողի մը Քրիստոսի եկեղեցիին անդամ ընելու համար:

Նոր Կտակարանին մէջ թոյն է ապաշխարութիւն, դարձ, եւ վերստին Ծնունդ: Պէտք է քարոզել զայն իր բոլոր տարողութեամբ եւ հետեւանքներով: Այս միայն կրնայ քանդել հին մարդուն վատահոլութիւնը իր մեղապարտ արժանիքներուն մասին: Նոր ստեղծուած մարդուն աճումին համար սորվեցնել Սբ. Հոգւոյն սրբացուցիչ եւ

պտղաբերող դերը: Յաղթական մնալու համար, սորվեցնել խաչին պատգամը, եւ Քրիստոսով կեանքի նորոգութեան մէջ ապրելու կարելիութիւնը: Նոյնքան էական կէտեր, երաշխաւորելու համար յաղթական հոգեւոր կեանք մը, որ հեռի է մեր օրերու աժան եւ դիւրին քրիստոնէութենէն:

Ինչ որ ալ ըլլան, այլ եւ տեղական պատճառներով, այս մեկնումները, նոյնիսկ քանակը բաժանումներուն, մնալուն դասը անշարժ կը մնայ: Անօթին եւ ծարաւը կ'երթայ հո'ն ուր Տէրոջը սեղանը կը գտնէ իրեն համար:

Սր. Գրական հոգեւոր կեանքի մը զարգացումը ո'չ միայն կ'ապահովէ Հայ Աւետ. Եկեղեցիին ներքին կեանքն ու պտղաւորումը, այլ բարձրագոյն կոչն է՝ իր գիրկը հրաւիրելու բոլոր հոգեւր կաթօտեալները:

Սակայն քիչ բան է եթէ Եկեղեցին միայն ինքզինքը պիտի պահէ: Ուշ թէ կանուխ «Մեռեալ Ծովու» մը պիտի վերածուէր այն, եթէ չունենար վկայութեան կեանքն ու ճառագայթարձակ դործունէութիւն մը:

6.— ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈԳԻՆ

Սէրը առարկայի մը պէտք ունի: Եկեղեցին առ Աստուած ունեցած իր սէրը կրնայ արտայայտել իր պաշտամունքով եւ իր միսիոնարական ոգիով: Մենք ինքնապաշտպանութեան բնազդով, միշտ աւելի պիտի ծրագրենք մեզ համար ապրելու եւ դործելու, սակայն հարկ է ճամբայ մը գծել այդ բնազդին եւ ըմբռնել որ «եթէ չարտահոսենք, պիտի չորնանք»: Այս է միսիոնարական կեանքին մեծ հակասութիւնը:

Մեր եկեղեցին պարտի ի միտ ունենալ իր հիմնադիրներուն տեսիլքը, եւ ձգտիլ իր բոլոր ուժով Սփիւռքի հայութեան մէջ թագաւորիցներու Յէր Յիսուս Քրիստոսը: Չափով մը իր գործունէութենէն կախում պիտի ունենայ Հայ Առաք. Եկեղեցւոյն բարեկարգութիւնն ալ, որ կ'ուշանայ ցարդ իրագործուելէ:

Ս. Հայաստանի մէջ, Եկեղեցին պէտք պիտի ունենայ իր պատգամը պատշաճեցնելու տեղական պայմաններուն, եւ քարոզելու հոգիներու փրկութիւնը, տիրող անտարբերութեան մէջ:

Սփիւռքի մէջ, աքսորական ցեղի՝ զաւակները ու մեր փոքրաթիւ եկեղեցիները պէտք է վերապրին Ա. կրթ. Ա. 23-31ը, զիրենք շրջապատող ազգերուն տանելով իրենց Հաւատքն ու համոզումները, որպէսզի կարենան Քրիստոսի համար պըստղներ շահիլ զիրենք հիւրընկալող ազգերէն եւս:

Միսիոնարական ոգին ուրեմն, սրտերու մէջ, բեմին վրայ, եկեղեցիէն ներս եւ դուրս: Հովիւները պայտին ըմբռնել թէ լոկ իրենց վրայ չի ծանրանար այս հոգը, եւ պարտին ապահովել ժողովուրդին գործակցութիւնը:

Հարկ է ընդարձակել գրական վկայութիւնը: Շատցնել գիրքն ու թերթը, պատկերն ու թերթիկը: Գաղափարը զօրութիւն է, պէտք է տարածել զայն: Աստուծոյ խօսքը լոյս է, հարկ է զայն մտցնել ամէն անկիւն:

Կարելի չէ չափազանցել կրթական հաստատութիւններու խաղալիք դերը:

Հայ Աւետ. Եկեղեցին կրնայ պահել իր գոյութիւնը եթէ յօժարի Աւետարանչութեան ոգիով աւելցուն, սպառել իր նմաններուն սիրոյն համար:

Եւ իր գոյութիւնը պահել, կը նշանակէ իր գոյութիւնը արդարացնել ու իր կոչումը արժեցնել:

×

Ձեռք յաւակնիր սպառած ըլլալ Հայ Աւետ. Եկեղեցւոյն ապագայի վերաբերեալ բոլոր հարցերը: Կը խորհինք սակայն որ նմանօրինակ տեսակէտներն են որ ուղղիչ աղբակներ կրնան ըլլալ ապահով առաջնորդելու Եկեղեցին մինչեւ իր պըսակը:

Եկեղեցին մանաւանդ պիտի յաղթէ եւ պիտի ապրի եթէ հաւատարիմ կենայ իր կոչմանը եւ չըպակսի Աստուծոյ շնորհքին: Այս պատճառաւ ալ կը վերջացնենք զայն, յիշելով Պետրոս առաքեալի յորդորը.

«Աճեցէ մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովն ու գիտութիւնովը»: Բ. Պետր., Գ. 18:

Յիշենք նաեւ մեր սիրելի Փրկչին յուզիչ եւ հանդիսաւոր յայտարարութիւնը.

«Ահա քու առջեւ բացուած դուռ մը դրի, զոր մէկը չի կրնար գոցել»: (Յայտ., Գ. 18):

Կենանք պահ մը այդ դրան առջեւ եւ դիտենք բացուած հորիզոնը, ո'վ Աւետարանական եղբայր, մտաբերենք մեր կոչումը, ուրախանանք ասպարէզին հանգէպ մեր ունեցած գիտակցութեան վերայ, ուրախանանք որ ունինք հարիւր տարուան փորձառութեան մը սպառազինութիւնը եւ գեղեցիկ հեռանկարը ապագային, Ս. Հոգիին սուրբ ձեռնին, Յիսուսի նայելով՝ նոր աշխուժով եւ սրբտով փարինք հոգիները կրակէն ազատելու սուրբ գործին, քանզի առաւօտը մօտ է, բայց նաեւ դիւշերը:

Մարտի 11

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԱՆԲԵՐ»Ի



ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նկար՝ Ա. ՄԻՍԻՐԵԱՆԻ

Հ Ա Ր Ի Ի Ր Ա Մ Ե Ա Կ Ի Ն

«Երթայք աշխարհ ամենայն,
Եւ փարգեցէք գԱւետարանն
ամենայն արարածոց :»

Հարիւրամեայ սա Աւետեաց ճամբուն մէջ,
Ամբոխներու հետքերուն վրայ՝ յաղթապանծ,
Խոկերուս հետ մենաւոր ու երկիւղած,
Կը դեզերիմ ըզմայլանքով մը անվերջ :

Հարիւրամեայ աւետարեք դրոշմաւորներ,
Կը թռչնախն դերթ մարդարտեայ թիթեռներ,
Եւ յուշերու նըւաղին տակ համօրէն
Սարոնի-Վարդն, Հովտաց-Շուշանն կը բուրեն :

Հարիւրամեայ դաշտերու վրայ հըրակէզ՝
Արեամբ գըծուած ուղիները սա կարծես,
Պիւրկ լարեր են, որ թրթռացին ահարկու,
Որոտումովն կայծակնաթափ շանթերու :


Հարիւրամեայ բարձունքներէն հայրենի,
Մատուռներու եւ դպրատանց զանգակներ,
Թող ուժգնօրէն հնչեն, սըփռեն աշխարհի,
Հազարամեայ-խաղաղութիւնն անըստուեր :

Հարիւրամեայ սա հողին վրայ Երկնային
Օ՛ն, եղբայրներ, երթանք խառնուիլ էութեամբ,
Մարտիրոսաց սրբազնագոյն վաստակին,
Քանենք սերմը ու ցօղենք զայն մեր արեամբ :

Հարիւրամեայ դարբիրին վրայ արդ, ո՛վ Տէր,
Յայգաղօթքն իմ կը խընկաբկեմ սըրտարաց,
Որ Յուրբ-Հոգւոյն տեղատարափն օրհնարեք,
Ողջունէ մեր աղօսները անձկայրեաց :

ՊԱՏ. Ա. ՄԻՍԻՐԵԱՆ

բոսնանը կիրառելի կէս օրէ վերջ ժողովներ սար-
քել Կարտանի հանքին շուրջ գտնուած հայ գա-
ղութին համար: Այս ժողովները շարունակուե-
ցան երբեմն ընդհատումներով՝ բայց հաւատար-



մաբար տարիներով Աւետիս եղբ. Յակոբեանի
տան մէջ: Այս տունը եկեղեցիի վերածուած է
քանի մը ամիսներէ ի վեր: Եկեղեցւոյ հովիւն է
Պ. Յար. Հէյվաճեան, 10, Rue Portalis, Aix en
Provence, (B. du R.)

Զ. ԼԱ ՍԻՕԹԱ. — Հոս Պ. Սամուէլ Պազգալեան
մեծ յաջողութեամբ զործած է քանի մը տարի:
Թեմը Թափուր կը մնայ եւ Մարսէլի եկեղեցի-
ին որպէս ճիւղ կը նկատուի: Ժողովները կ'ըլ-
լան երկու եղբայրներու ձեռքով:

Է. ՕՊԷՆԱՍ. — Հոգեւոր գործը սկսաւ այս տեղ
1926 ի սկիզբները Պ. Յովհ. Յովակիմեանի ձեռ-
քով, որու յաջորդեցին Պ. Վ. Սահակեան եւ
Ա. Օ. Փափազեան, ճիւղ ունենալով Սէն Փիէր:
Ներկայիս բեմը Թափուր է:

Ը. ՄՕՆԹԷԼԻՄԱՐ. — Նոյն թուականին սկսու
գործը Ֆրանսական բարեկ. եկեղեցիին մէջ: Պ.Պ.

Սահակեան եւ Ա. Փափազեան իրարու ետեւէ
գործեցին: Ներկայ հովիւն է Վեր. Վ. Սահակեան
22, Rue St. Pierre, Montélimar. (Drôme)

Թ. ՎԱԼԱՆՍ. — Հոս հոգեւոր ժողովներ սկսած է
Գէորգ եղբ. Քէօսէեան 1925, Մարտ ամսուն: Ա-
սոր յաջորդեցին հովիւներ Վ. Սահակեան եւ Գ.
Խայրեան, հովուելով նաեւ Ռօմանի ճիւղը:
Ներկայիս հովիւն է Վեր. Ի. Աբրահամեան, 31,
Rue Chorier, Bourg les Valence, (Drôme)

Ժ. ՎԻԷՆ. — Պարոն Ս. Տիրատուրեանի բնակա-
րանը ամիսը մէկ անգամ, 1925 ին հովիւ Պար-
սումեան կ'երթար: Ապա հոս ու Շասի մէջ գոր-
ծը շարունակուեցաւ: Ներկայ հովիւն է Պատ-
Տիգրան Մկրտիչեան, 32, Quai A. France, Vi-
enne. (Isère)

ԺԱ. ԼԻՕՆ. — Հոգեւոր գործը սկսաւ 1924, Օգոս-
տոս 5 ին Մեթտական ժողովարանին մէջ, հո-
վիւ Ժ. Կ. Պարսումեանի ձեռքով: Ներկայ հովիւն
է Վեր. Գ. Գ. Խայրեան, 82, Rue Corne de cerf,
Lyon, (Rhône)

ԺԲ. ՏԷՍԻՆ. — Յունաստանէն հասնող դաղթա-
կաններու մէջ գործը սկսաւ 1925 ի Զատկէն վեր-
ջը: Նախ բնակարաններու մէջ կը հաւաքուէին,
իսկ Փետր. 2, 1929 ին կարելի եղաւ կատարել
նորակառոյց սրահին նուիրուած, ու յատկացնել
պաշտամունքի եւ դպրոցի:

Այս շրջանին գործակիցները հետզհետէ եղան
Աւետարանիչներ Յովսէփ Մուսայեան, Լեւոն
Նիկողոսեան եւ Կալվին Պարսումեան: Այժմու
հովիւներ, Վեր. Գ. Խայրեան Լիօնի շրջանին
համար, Պատ. Կ. Պարսումեան, 39, Rue Géo
Chavez, Décines. (Isère)



Տէսինի ժողովարանը



Իսիի եկեղեցին եւ երիցատուն

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻ. — Հոս Պրն. Դևորգ Բէտէեան
մի քանի ամիսէ ի վեր սկսած էր ժողովներու
մեթոտականներու մատրան մէջ, երբ հովիւ Պար-
սումեան սկսաւ հոն եւս գործել ամիսը մէկ ժո-
ղով ընելով, 1924 Օգոստոսէն սկսեալ:

ԺԳ. ՍԷՆԹ ԷԹԻԷՆ. — Վորժը սկսաւ եղբայր Գ.
Սարայտարեանի միջոցաւ 1924 էն ի վեր: Հովիւ-
ներ Պարսումեան, Ի. Աբրահամեան, Սիւլեան:
Ներկայ հովիւն է Պատ. Գ. Սիւլեան, 9, Rue
Alléon Dulac, St. Etienne, (Loire)


ՍԷՆ ՇԱՄՕՆ. — Տիկին Ա. Չալմեանի բնա-
կարանին մէջ, հովիւ Պարսումեան ամիսը մէկ
անգամ կը քարոզէր. մինչ Աւետարանչուհի տի-
կին Չալմեան կը քարոզէր միւս անգամները,
(1924) վերջէն դատարանէն սրահ մը յատկաց-

ուեցաւ:

ԺԴ. ԲԱՐԻԶ. — 1927 էն ի վեր Օր. Յակոբեան,
գործած է հոս որպէս աշցիլու աւետարանչուհի:
Պ. Վ. Սահակեան իր ուսանողական շրջանին մէջ
ջանացած է գործել Թուրքիոյ սրահին եւ Ալ-
ֆորվիլի մէջ: 1928 Յունվար 29 ի կիրակին հովիւ
Յ. Ն. Ղազարոսեան պաշտօնապէս կազմակեր-
պութեան սկսաւ Բարիզի եկեղեցիին: Իրեն յա-
ջորդեց, ուսանող և հովիւ Զ. Բ. Պուտաքեան:
Եկեղեցին հիմա երկու մեծ շրջաններու բաժնը-
ւած է. Բարիզ-Իսի, հովիւ Ա. Միսիրեան, 28,
Ave. Bourgain, Issy les Moulineaux (Seine)
Բարիզ-Ալֆորվիլ, հովիւ Ա. Օ. Փափագեան, 49
Ave. Jean Jaurès, Clammart (Seine)

ՕՐՀՆԵՐԳ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ

Կ. Ժ. Պարսումեան



1. Փառք Բեզ ով Տէր, փառք յաւիտեան
Որ տըւիր այս Հարիւրամեան.
Արդ կ'օրհնենք Բեզ մենք սրտագին,
Բիւր զաւակներն Հայոց ազգին.
Ամէն երկրէ, ծովէ ի ծով,
Մեծ եւ պղտիկ ուրախ սրտով:
2. Տէր, կ'օրհնենք Բեզ միաբերան,
Երբ կը տօնենք այս Յոբելեան.
Այս ինչ շնորհ է մեզ համար,
Ոչ մի լեզու, զբրիչ, քընար
Կարող չէ գայն նըկարագրել,
Հստ արժանւոյն պատմել, երգել:
3. Ի բարձունքս փառք Բեզ ով Տէր,
Այս օրը Դուն ես ստեղծեր.
Թող մեր երգերն վեր բարձրանան,
Լեռն ու ձորերն արձագանգ տան.

- Ալէլուիա, ալէլուիա,
Թող համայն ազգ փառք տայ, ցընծայ:
4. Տէր, այս օրհնեալ Հարիւրամեակ,
Ո՛հ, զըբաւէր մեր անձն համակ.
Եւ լինէր օրն այս պատուական,
Մեզի համար նոր թուական,
Տէրոջ գործին նուիրուելու,
Կենաց խօսքը տարածելու:
5. Տէր, տուր որ այս Հարիւրամեան,
Միջոց լինի մեծ արթնութեան.
Եւ մեր նախնեաց այս սուրբ աւանդ,
Մեզի առթէ խանդ և եռանդ.
Որ ըլլանք աղ, լոյս մշտապառ,
Բարի լուրը հոչակենք յար:

Տէսին, Մայիս 20, 1946

Կ. Ժ. Պարսումեան

ԲԱՆԲԵՐԻ յառաջիկայ թիւը Տ. Կ. լոյս պիտի տեսնէ Սեպտեմբերին